

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ



Արդշինբանկ

ԱՐԴՇԻՆԲԱՆԿ

Բաց Բաժնետիրական Ընկերություն

ՀՀ, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 13 և 13/1,
հեռ. (+374 12) 22 22 22, ֆաքս(+374 10) 59 05 82

Էլ. փոստ՝ ashb@ardshinbank.am

կայք՝ www.ardshinbank.am

Թողարկող՝ «Արդշինբանկ» ԲԲԸ

Տեղաբաշխող՝ «Արդշինբանկ» ԲԲԸ

Արժեթղթերի տեսակը՝ անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմս

Արժեթղթի ձևը՝ ոչ փաստաթղթային

Արժեթղթերի քանակը՝ ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի

տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

Արժեթղթերի անվանական արժեքը՝ ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից

պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային

օր առաջ

Արժեթղթերի թողարկման ծավալը՝ 100,000,000 ԱՄՆ դոլար, 100,000,000 եվրո,

50,000,000,000 ՀՀ դրամ

Արժեկտրոնը՝ ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի

տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

Շրջանառության ժամկետը՝ ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի

տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ

ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ

ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	7
1.1. Տեղեկատվություն Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ	7
1.2. Բանկին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիր	11
1.3. Բանկի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ	15
1.4. Բանկի աուդիտ իրականացնող անձի մասին համառոտ տեղեկատվություն	16
1.5. Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն	16
1.6. Բանկի պարտատոմսերի հիմնական տվյալները	18
1.7. Արժեթղթերի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը	19
1.8. Բանկի ամփոփ ֆինանսական տվյալներ	20
ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	21
2.1. Ռիսկային գործոններ	21
2.2. Հիմնական տեղեկատվություն	23
2.3. Տեղեկատվություն «Արդշինբանկ» ԲԲԸ անվանական պարտատոմսերի վերաբերյալ	24
2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները	37
2.5. Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	45
2.6. Լրացուցիչ տեղեկատվություն	46
ԲԱԺԻՆ 3. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	47
3.1. Անկախ աուդիտորները	47
3.2. Ռիսկային գործոններ	47
3.3. Տեղեկատվություն բանկի մասին	57
3.4. Բիզնեսի նկարագիրը	65
3.5. Բանկի կառուցվածքը	70
3.6. Չարգացման վերջին միտումները	70
3.7. Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները	71
3.8. Հսկող անձինք	85
3.9. Տեղեկատվություն Բանկի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին	85
3.10. Էական պայմանագրերը	86
3.11. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը	86
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	88
Հավելված 1. «Արդշինբանկ» ԲԲԸ կազմակերպական կառուցվածքը	88

Հավելված 2. Ֆինանսական գործիքների հաշվարկման բանաձևեր	89
Հավելված 3. Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև (իրավաբանական անձ) «Արդշինքանկ» ԲԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի	90
Հավելված 4 . Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև (ֆիզիկական անձ կամ ԱԶ) «Արդշինքանկ» ԲԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի	92
Հավելված 5 Թողարկման վերջնական պայմաններ	94
Հավելված 6 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ ֆինանսական հաշվետվություններ	100



ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

Կարեն Սաֆարյան

անուն ազգանուն

Խորհրդի նախագահ

պաշտոն

ստորագրություն

ամսաթիվ

Տիգրան Սարգսյան

անուն ազգանուն

Խորհրդի անդամ

պաշտոն

ստորագրություն

ամսաթիվ

Արամ Անդրեասյան

անուն ազգանուն

Խորհրդի անդամ

պաշտոն

ստորագրություն

ամսաթիվ

Ալեքսանդր Ֆոն Գլայխ

անուն ազգանուն

Խորհրդի անդամ

պաշտոն

ստորագրություն

ամսաթիվ

Վաչե Գաբրիելյան

անուն ազգանուն

Խորհրդի անդամ

պաշտոն

ստորագրություն

ամսաթիվ

Արտակ Անանյան

անուն ազգանուն

Վարչության նախագահ

պաշտոն

ստորագրություն

ամսաթիվ

Դավիթ Սարգսյան

անուն ազգանուն

Վարչության նախագահի տեղակալ, Ներդրումային բիզնեսի տնօրեն

պաշտոն

ստորագրություն

ամսաթիվ

Արթուր Գյուլազյան

անուն ազգանուն

Վարչության նախագահի տեղակալ, Փրայվիթ բանկինգի տնօրեն

պաշտոն

ստորագրություն

ամսաթիվ

Արմեն Գասպարյան

անուն ազգանուն

Վարչության անդամ, Կորպորատիվ բիզնեսի տնօրեն

պաշտոն

ստորագրություն

ամսաթիվ



Արդշինբանկ

Հարություն Իսպիրյան

անուն ազգանուն

**Վարչության անդամ,
Թվայնացման և
տաղանդների կառավարման
գծով տնօրեն**
պաշտոն

ստորագրություն

ամսաթիվ

Արտակ Խաչատրյան

անուն ազգանուն

**Վարչության անդամ,
Մանրածախ բիզնեսի
տնօրեն**
պաշտոն

ստորագրություն

ամսաթիվ

Միհրան Մուրադյան

անուն ազգանուն

**Վարչության անդամ, ՓՄՁ
բիզնեսի տնօրեն**
պաշտոն

ստորագրություն

ամսաթիվ

Լուսինե Ներսիսյան

անուն ազգանուն

**Վարչության անդամ,
Ռիսկերի կառավարման
տնօրեն**
պաշտոն

ստորագրություն

ամսաթիվ

Արմինե Խաչատրյան

անուն ազգանուն

**Վարչության անդամ,
Գլխավոր հաշվապահ**
պաշտոն

ստորագրություն

ամսաթիվ

Ռուստամ Բադասյան

անուն ազգանուն

**Վարչության անդամ,
Իրավական հարցերի գծով
տնօրեն**
պաշտոն

ստորագրություն

ամսաթիվ

Գարեգին Գևորգյան

անուն ազգանուն

**Վարչության անդամ,
Ֆինանսական տնօրենի
ժամանակավոր
պաշտոնակատար**
պաշտոն

ստորագրություն

ամսաթիվ



Արդշինբանկ

Ստորագրությունները վավերացնում են՝

Արտակ Անանյան

անուն ազգանուն

Վարչության նախագահ

պաշտոն

ստորագրություն

ամսաթիվ

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը դիտվում է որպես Ազդագրի ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող պարտատոմսերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական ծրագրային ազդագրի վրա:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել ծրագրային ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը փաստաթղթային տարբերակով Բանկի գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային էջում՝ <http://www.ardshinbank.am>:

1.1. Տեղեկատվություն Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ

1.1.1. Թողարկողի տվյալները և կապի միջոցները՝

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Արդյունաբերաշինարարական բանկ» բաց բաժնետիրական ընկերություն
ռուսերեն՝ Открытое акционерное общество «Промышленно-строительный банк»

անգլերեն՝ “Industrial Construction Bank” open joint stock company

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Արդշինբանկ» ԲԲԸ

ռուսերեն՝ ОАО “Ардшинбанк”

անգլերեն՝ “Ardshinbank” OJSC

Բանկի հիմնադրման երկրին է՝

Հայաստանի Հանրապետություն

Բանկի գրանցման վայրն է՝

Գրիգոր Լուսավորչի 13 և 13/1, Երևան
0015, ՀՀ

Բանկի գրանցման համարն է՝

83

Բանկի գտնվելու վայրն է՝

Գրիգոր Լուսավորչի 13 և 13/1, Երևան
0015, ՀՀ

Կապի միջոցները՝

Հեռ.՝ (+37412) 22 22 22
Ֆաքս՝ (+37410) 59 05 82
Էլ. Փոստ՝ ashb@ardshinbank.am
Կայք՝ www.ardshinbank.am

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել «Արդշինբանկ» ԲԲԸ (այսուհետ նաև՝ Թողարկող կամ Բանկ) Ներդրումային գործառնությունների վարչության որևէ աշխատակցի հետ (+37410) 59 04 92, (+37410) 59 05 37, (+37410) 59 05 38 հեռախոսահամարներով:

1.1.2. Բանկի համառոտ պատմությունը

«Արդշինբանկ» ԲԲԸ-ն (25.02.2003 թվականից մինչև 05.11.2014թ. անվանափոխությունը՝ «Արդշինինվեսթբանկ» ՓԲԸ, իսկ 05.11.2014թ.-ից մինչև 18.11.2025թ.՝ «Արդշինբանկ» ՓԲԸ) գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) 2003թ.-ի փետրվարի 25-ին: Բանկի գրանցման վկայականի համարն է 0394: Նույն թվականի փետրվարի 27-ին Բանկին տրամադրվել է բանկային գործունեության թիվ 83 լիցենզիան: Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի ու երաշխիքների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների իրականացումը, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ ԿԲ կողմից: Բանկը հանդիսանում է ՀՀ ավանդների երաշխավորման համակարգի անդամ:

Ստորև ներկայացված է համառոտ պատմական ակնարկ Բանկի զարգացման ժամանակագրական կարևոր նշումներով՝

- ✓ 2003թ. ձեռք է բերել 80 տարվա պատմություն ունեցող և տնտեսության ճյուղերի վարկավորման ուղղությամբ մասնագիտացած «Արդշինբանկ» ԲԲԸ ակտիվների և պարտավորությունների զգալի մասը և մասնաճյուղային ցանցը (24 մասնաճյուղ):
- ✓ 2003թ. նոյեմբերին ձեռք է բերել «Հայագորբանկ» ԲԲԸ բիզնեսի հիմնական մասն իր ենթակառուցվածքների հետ միասին (35 մասնաճյուղ):
- ✓ 2014 թվականին «Արդշինինվեսթբանկ» ՓԲԸ-ն վերանվանվել է «Արդշինբանկ» ՓԲԸ-ի:
- ✓ 2017 թվականի հունվարի 13-ին օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել է «Արդշինբանկ» ՓԲԸ և «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ վերակազմակերպում՝

«Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ն «Արդշինբանկ» ՓԲԸ-ն միացնելու միջոցով, որի արդյունքում «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի գործունեությունը դադարել է, իսկ «Արդշինբանկ» ՓԲԸ-ն պահպանել է իր գործունեությունը՝ նաև որպես «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի իրավահաջորդ:

- ✓ 2024 թ. նոյեմբերի 29-ին «Արդշինբանկ» ՓԲԸ-ն ձեռք է բերել «Էյչ-Էս-Բի-Սի Հայաստան» ՓԲԸ-ի 100% բաժնետոմսերը: Ձեռքբերումից հետո «Էյչ-Էս-Բի-Սի Հայաստան» ՓԲԸ-ն վերանվանվել է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի:
- ✓ 2025 թվականի ապրիլի 18-ին «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն միացել է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին: Արդյունքում՝ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի գործունեությունը դադարել է, իսկ իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով փոխանցվել են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին:
- ✓ 2025 թվականի նոյեմբերի 18-ից բանկը փակ բաժնետիրական ընկերությունից վերակազմավորվել է բաց բաժնետիրական ընկերության և նույն ամսաթվից բանկի ֆիրմային անվանումը «Արդշինբանկ» ԲԲԸ է:

1.1.3. Բանկի կանոնադրական կապիտալը

Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 200,000,000,000 (երկու հարյուր միլիարդ) ՀՀ դրամ, որը բաժանված է 1,500,000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) հատ սովորական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, և 500,000 (հինգ հարյուր հազար) հատ B դասի փոփոխական շահութաբաժնով փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի նշանակալից /ձայնի իրավունքով բաժնետոմսերի տիրապետող/ բաժնետերերն է՝

- ✓ «Արինս Գրուպ» ՍՊԸ – 98.918067%

1.1.4. Բանկի մասնաճյուղերը

Ներկայումս բանկն ունի թվով 72 մասնաճյուղ և մեկ ներկայացուցչություն Փարիզում, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը: Մասնաճյուղերի հասցեները մանրամասն ներկայացված են սույն Ծրագրային ազդագրի Բաժին 3-ի 3.1.5 կետում:

1.1.5. Բանկի խմբի կառուցվածքը

Բանկի նշանակալից /ձայնի իրավունքով բաժնետոմսերի տիրապետող/ բաժնետեր «Արինս Գրուպ» ՍՊԸ-ն հանդիսանում է «Արինս Մենեջմենթ» ՍՊԸ մասնակից, «ՄԲՑ» ՓԲԸ բաժնետեր, «Արմենիա Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ մասնակից, «Փրայմ Գրուպ» ՍՊԸ, «Կապիտալ ՎԻՊ» ՍՊԸ, «Ավերս Կապիտալ» ՍՊԸ մասնակից, «Քարիատ Մեքենա» ՓԲԸ բաժնետեր, «Արդշին Դեվելոպմենթ» ՍՊԸ մասնակից, «Արմավ-1» ՍՊԸ մասնակից:

1.1.6. Բանկի կազմակերպական կառուցվածք

Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը ներկայացված է սույն Ծրագրային ազդագրի Հավելված 1-ում:

1.1.7. Բիզնեսի նկարագիրը

Բանկի հիմնական գործունեությունը ավանդների ընդունումն է և վարկավորումը, բանկային հաշիվների բացումն ու սպասարկումը, տեղական և միջազգային վճարային համակարգերի վճարային քարտերի տրամադրումը և սպասարկումը, վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը, այդ թվում՝ ներհանրապետական և միջազգային (ներառյալ՝ արագ փոխանցումների համակարգերով) փոխանցումների իրականացումը, այլ բանկային ծառայությունների մատուցումն ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց: Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները մատչելի են Բանկի ինտերնետային կայքում:

1.1.8. Բանկի ակտիվների և եկամտաբեր ակտիվների ամփոփ բնութագիրը

Ստորև ներկայացվում է Բանկի ակտիվների և եկամտաբեր ակտիվների ամփոփ բնութագիրը.

հազ. ՀՀ դրամ

	30/09/2025	31/12/2024 աուդիտ	31/12/2023 աուդիտ	31/12/2022	31/12/2021
Ակտիվներ, այդ թվում՝	2,452,944,530	2,299,792,056	1,634,862,925	1,557,785,948	1,010,410,802
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	2,173,468,170	1,907,184,760	1,315,412,812	1,205,073,097	783,113,585
Հաճախորդներին տրված վարկեր և փոխադրվություններ	1,414,161,958	1,123,746,602	671,580,291	531,423,825	574,313,994

Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխարկություններ և ածանցյալ ֆինանսական գործիքներ	228,144,782	220,294,637	169,022,765	155,385,653	33,587,122
Բանկերում թղթակցային հաշիվներ	146,159,908	130,098,800	132,307,409	134,896,272	16,152,828
Ռեպո համաձայնագրեր	45,770,979	30,088,784	13,019,972	10,741,404	12,036,713
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	64,427,510	61,735,403	33,874,109	27,506,158	30,067,129
Այլ եկամտաբեր ակտիվներ	274,803,033	341,220,534	295,608,266	345,119,785	116,955,799
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	89%	83%	80%	77%	78%

1.2. Բանկին և պարտավորումներին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիր

Ռիսկերի ճիշտ կանխատեսումը, գնահատումն ու կառավարումը ցանկացած ձեռնարկատիրական գործունեության հաջողության գրավականն է:

Բանկին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագրությանը ներդրողը կարող է ծանոթանալ սույն Ազդագրի Բաժին 3-ի երկրորդ կետում:

Բանկերն առնչվում են տնտեսության մեջ գոյություն ունեցող գրեթե բոլոր ռիսկերի հետ:

Բանկի գործունեության ընթացքում հատկապես կարևորվում են հետևյալ ռիսկերի կառավարումը:

Վարկային ռիսկ – Բանկի մոտ վարկային ռիսկը ծագում է վարկային գործունեության, միջբանկային գործառնությունների, ռեպո գործարքների, ինչպես նաև երրորդ անձանց ակրեդիտիվների կամ բանկային երաշխիքների տրամադրման արդյունքում: Արդշինբանկի վարկային ռիսկի բեռը հաճախորդներին տրամադրվող վարկերի գծով ամբողջովին կենտրոնացած է Հայաստանում:

Իրացվելիության ռիսկ – Իրացվելիության ռիսկը՝ պարտավորությունների կատարման համար բավարար ֆինանսական միջոցների բացակայության կամ այդ միջոցների ձեռքբերման բարձր արժեքի ռիսկն է: Իրացվելիության ռիսկը պայմանավորված է նաև ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների անհամապատասխանությամբ, ինչի

հետևանքով ֆինանսական հաստատությունը հնարավորություն չի ունենում ժամանակին և ողջամիտ գնով իրացնել իր դիրքերը՝ պարտավորությունները կատարելու նպատակով:

Գործառնական ռիսկ - ներքին գործընթացների ձախողման և անհամապատասխանության, մարդկային գործոնի, համակարգերի խափանման կամ արտաքին իրադարձությունների արդյունքում հնարավոր կորուստների ռիսկն է: Արդշինբանկը ենթարկվում է գործառնական ռիսկի մի քանի տեսակների, ինչպիսիք են աշխատակիցների կողմից չարտոնված գործարքների կատարումը կամ գործառնական, վարչարարական կամ հաշվառման սխալների թույլ տալը, որոնք կարող են առաջանալ համակարգչային կամ հեռահաղորդակցման համակարգերից բխող բացթողումներից, ինչպես նաև Արդշինբանկի միջոցով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ռիսկը- կապված է Բանկի տեղեկատվական տեխնոլոգիաների ռիսկերի զսպմանը և չեզոքացմանն ուղղված միջոցառումների հետ, որոնք ներառում են տեղեկատվության գաղտնիության, անընդհատության և ամբողջականության պահպանման նպատակով իրականացվող աշխատանքներ, տեղեկատվության կրկնօրինակում և պահուստավորում, պահուստավորման լրացուցիչ անվտանգություն:

Շուկայական ռիսկ - առաջանում է շուկայական գների, ներառյալ արտարժույթի փոխարժեքի, տոկոսադրույքների, վարկային ռիսկի մարժաների և արժեթղթերի գների տատանումների հետևանքով և կարող է ազդեցություն ունենալ Բանկի ընդհանուր եկամտի կամ պորտֆելների արժեքի վրա: Արդշինբանկի շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույքի և արտարժույթային ռիսկերը:

Տոկոսադրույքի ռիսկ - ծագում է շուկայական տոկոսադրույքների հնարավոր փոփոխություններից, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ Բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների արժեքի վրա: Այս ռիսկը կարող է առաջանալ ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների անհամապատասխանությունից, ինչպես նաև այդ ակտիվների և պարտավորությունների վերագնահատման առանձնահատկություններից:

Գնային ռիսկ - կապված է շուկայական գների փոփոխության արդյունքում Բանկի ակտիվների և պարտավորությունների՝ գնային ռիսկ պարունակող գործիքների գնային փոփոխության և դրանց հետևանքով Բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա բացասական

ազդեցության հետ: Բանկն այս ռիսկը զսպելու համար կառավարում է ռիսկի ենթակա ակտիվների/պարտավորությունների ծավալային և որակական փոփոխականները, ինչպես նաև կիրառում է ռիսկերի զսպման այլ գործիքներ:

Օրենսդրական դաշտի փոփոխություն ռիսկ – կապված է օրենսդրական դաշտի փոփոխության արդյունքում թողարկողի կապիտալի և/կամ շահույթի վրա բացասական ազդեցության հետ: Թողարկողը գործում է ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածում: Օրենսդրական դաշտի փոփոխությունները, ներառյալ բանկերի նկատմամբ կրառվող տնտեսական նորմատիվների հնարավոր խստացումները, կարող են իրենց ազդեցությունը ունենալ թողարկողի շահութաբերության վրա:

Համբավի ռիսկ - Բանկի վստահության պահպանման և մասնակիցների, վարկառուների, ներդրողների և այլ հաճախորդների, ինչպես նաև այլ հետաքրքրված անձանց հետ փոխհարաբերություններում հեղինակության նվազման հետևանքով՝ կորուստների առաջացման ռիսկն է:

Անհամապատասխանության (non-compliance) ռիսկ - օրենքների, կանոնակարգերի, համաձայնագրերի, ներքին կանոնների խախտման կամ դրանց անհամապատասխանության արդյունքում կորուստ կրելու հավանականությունն է:

Արտարժույթային ռիսկ - Հաշվի առնելով Հայաստանի տնտեսության դոլարիզացայի մակարդակը՝ Բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գերակշիռ մասն արտահայտված է ԱՄՆ դոլարով, ինչի հետևանքով Արդշինբանկը ենթարկվում է արտարժույթային ռիսկի, երբ արտարժույթի փոխարժեքների տատանումները ազդում են վերջինիս ֆինանսական դիրքի և դրամական հոսքերի վրա:

Աշխարհաքաղաքական ռիսկ- Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի վրա, որն իր հերթին կարող է մեծացնել չափաատող վարկերի տեսակարար կշիռը, ավելացնել պահուստավորման ծախսերը ու իջեցնել Բանկի շահութաբերությունը:

Պարտավորումներին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագրությանը ներդրողը կարող է ծանոթանալ սույն Ծրագրային ազդագրի Բաժին 2-ի առաջին կետում:

Ինչպես ցանկացած ներդրում, այնպես էլ պարտատոմսերում իրականացվող ներդրումն իր մեջ պարունակում է որոշակի ռիսկային գործոններ: Ներդրողը, հաշվի առնելով Ազդագրում ներկայացված ռիսկերի վերաբերյալ տեղեկատվությունը և ծանոթանալով այլ տեղեկատվություններին, պետք է որոշում կայացնի՝ կատարել ներդրում, թե՛ ոչ:

Իրացվելիության ռիսկ - շուկայում առկա իրավիճակից կախված, երկրորդային շուկայում պարտատոմսերն իրացնելու հետ կապված ռիսկերը հնարավոր են: Պարտատոմսերի իրացվելիությունն ապահովելու նպատակով Բանկը ձեռնարկելու է համապատասխան միջոցներ՝ այդ թվում շուկա ստեղծողի հետ պայմանագրի կնքում:

Արտարժույթային ռիսկ - արժույթային փոխարժեքների տատանումները կարող են բացասական հետևանքներ ունենալ ներդրողների՝ պարտատոմսերից ստացվող եկամուտների վրա: Այդ աղեցությունը կախված է ներդրողի՝ ստացված եկամուտները հետագայում ՀՀ դրամի կամ այլ արժույթների վերածելու հանգամանքներից:

Տոկոսադրույքի ռիսկ - տոկոսադրույքների մակարդակի տատանումները կարող են բացասական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գների վրա, մասնավորապես տոկոսադրույքների բարձրացման դեպքում նվազում են պարտատոմսերի գները, որոնց արդյունքում ներդրողը կարող է ստանալ ավելի քիչ եկամուտ, քան նախատեսված էր: Սակայն, այս ռիսկը նշանակալի է, երբ ներդրողը վաճառում է պարտատոմսը մինչև մարման ժամկետը:

Վերաներդրման ռիսկ - կարող է ի հայտ գալ այն դեպքերում, երբ ֆինանսական ակտիվից ստացված դրամական հոսքերը (օր.՝ արժեկտրոն) վերաներդրվում են ավելի ցածր եկամտաբերությամբ: Ձեռքբերման պահին սահմանված մինչև մարում եկամտաբերությունը ենթադրում է, որ ներդրողը ստացված եկամուտները վերաներդրում է նույն եկամտաբերությամբ գործիքներում: Նշված ռիսկը կարող է ոչ էական համարվել ներդրման կարճաժամկետ հորիզոն ունեցող ներդրողների համար:

Ինֆլյացիոն ռիսկ - պայմանավորված է ներդրումների ապագա իրական արժեքի անորոշության հետ՝ կախված ինֆլյացիայի մակարդակի փոփոխությունից: Մասնավորապես, ներդրողների կողմից ստացված եկամուտները գնողունակության անկման հետևանքով կարող են ավելի ցածր իրական արժեք ունենալ:

Վարկային/ դեֆոլտի ռիսկ - ցանկացած ներդրող կորպորատիվ պարտատոմս ձեռք բերելիս իր վրա է վերցնում թողարկողի վարկային ռիսկը: Այն իրենից ներկայացնում է

հավանականություն, որ բացասական զարգացումների արդյունքում թողարկողը չի կարողանա ժամանակին ամբողջությամբ վճարել արժեկտրոնների վճարումներն և (կամ) մայր գումարները:

1.3. Բանկի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ

Բանկի գործունեությունը մշտապես գտնվում է Բանկի խորհրդի, Գործադիր մարմնի ուշադրության ներքո և իրականացվում է համաձայն Բանկի խորհրդի կողմից հաստատված «Հեռանկարային զարգացման ծրագրի», ինչը հնարավորություն է տալիս օպերատիվ կերպով արձագանքել շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Բանկի գործունեությունը շուկայի պահանջներին, ինչպես նաև նվազագույնի հասցնել մի շարք ռիսկային գործոնների բացասական ազդեցությունը:

30.09.2025 թվականի արդյունքներով տարեվերջի համեմատ Բանկի ակտիվներն աճել են 6.7%-ով՝ կազմելով 2,452.9 մլրդ ՀՀ դրամ, պարտավորությունները՝ 4.5%-ով՝ կազմելով 2,066.0 մլրդ դրամ, համախառն վարկային ներդրումներն աճել են 25.6%-ով՝ կազմելով 1,429.9 մլրդ դրամ: Իրավաբանական անձանց վարկային պորտֆելն աճել է 39.0%-ով՝ կազմելով 884.5 մլրդ դրամ, իսկ ֆիզիկական անձանց պորտֆելը՝ 8.6%-ով՝ կազմելով 545.4 մլրդ դրամ:

Հաշվի առնելով Բանկի առաքելությունը և նպատակները, բաժնետերերի դիրքորոշումը, թույլ և ուժեղ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները՝ Բանկը սահմանել է հետևյալ ռազմավարական առաջնահերթությունները.

✓ Մարդիկ: Մարդկային կապիտալը Բանկի կայուն զարգացման և մրցունակության պահպանման համար ունի առանցքային նշանակություն: Մեր ռազմավարությունն է ընտրել, զարգացնել և պահպանել Բանկի արժեքները կրող և տեսլականը կիսող աշխատակիցների:

✓ Տեխնոլոգիաներ: Բանկային համակարգում տեխնոլոգիական զարգացումը տեղի է ունենում աննախադեպ արագությամբ: Բանկը գիտակցում է, որ միայն տեխնոլոգիական առաջընթացի շնորհիվ կարող է ամրապնդել և զարգացնել իր մրցակցային դիրքերը, բավարարել հաճախորդների այսօրվա և ապագայի պահանջները:

✓ ՓՄՁ բիզնեսի զարգացում: ՓՄՁ զարգացման ճանաչումը որպես ռազմավարական առաջնահերթություն ոչ միայն քայլ է ուղղված Բանկի պորտֆելի

դիվերսիֆիկացմանը և աճին, այլ անմիջապես բխում է Բանկի առաքելությունից՝ նպաստել ազգային տնտեսության զարգացմանը:

Բանկը շարունակելու է իրագործել իր առջև դրված խնդիրները, որոնք ուղղված են նաև կորպորատիվ բիզնեսի գծով շուկայական դիրքերի պահպանմանը և մանրածախ բիզնեսի գծով շուկայական դիրքերի բարելավմանը: Բանկը կշարունակի նպաստել Հայաստանի ֆինանսական շուկաներում բանկային ծառայությունների որակի բարձրացմանն ու դրանց նկատմամբ հաճախորդների վստահության ամրապնդմանը:

2024 թվականի ընթացքում՝ մինչև սույն ծրագրային ազդագրի ներկայացման օրը, Բանկի հիմնական ֆինանսական ցուցանիշների և գործունեության էական փոփոխություն տեղի չի ունեցել, և Բանկը միտված է պահպանել հիմնական ցուցանիշների շարունակական աճը:

Գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են, դատական հայցեր առկա չեն:

1.4. Բանկի աուդիտ իրականացնող անձի մասին համառոտ տեղեկատվություն

2016-2022 թթ. Բանկի ֆինանսական գործունեության աուդիտն իրականացվել է «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՍՊԸ կողմից.

«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՍՊԸ հասցեն է՝

ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան փող. 26/1 շենք, «Էրեբունի-Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ, հեռ. + 374 (10) 595 999, ֆաքս + 374 (10) 595 999, www.kpmg.am:

2023-2024 թթ. Բանկի ֆինանսական գործունեության աուդիտն իրականացվել է «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ կողմից:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ հասցեն է՝

ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան փող., 2 շենք, 7-րդ հարկ («Կամար» բիզնես-կենտրոն), հեռ. +374-60-507777, http://www.ey.com/en_am:

1.5. Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

1.5.1. Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները՝

- ✓ Բանկի բաժնետերերի Ընդհանուր ժողովը
- ✓ Բանկի Խորհուրդը
- ✓ Բանկի կոլեգիալ գործադիր մարմինը՝ Վարչությունը



Բանկի միանձնյա գործադիր մարմինը՝ Վարչության

նախագահը:

1.5.2. Բանկի բաժնետերերը

Բանկի նշանակալից /ձայնի իրավունքով բաժնետոմսերի տիրապետող/ բաժնետերերը ներկայացված են ստորև.

	Անվանում	Բաժնեմաս
1	«Արինս Գրուպ» ՍՊԸ	98.918067%

1.5.3. Բանկի խորհուրդը

Բանկի խորհուրդը բաղկացած է 5 անդամներից՝ նախագահ և չորս անդամ:

	Անուն, ազգանուն	Պաշտոն	Փորձառություն
1	Կարեն Սաֆարյան	Խորհրդի նախագահ	ավելի քան 30 տարի
2	Տիգրան Սարգսյան	Խորհրդի անդամ	ավելի քան 38 տարի
3	Արամ Անդրեասյան	Խորհրդի անդամ	ավելի քան 45 տարի
4	Վաչե Գաբրիելյան	Խորհրդի անդամ	ավելի քան 25 տարի
5	Ալեքսանդր Ֆոն Գլայխ	Խորհրդի անդամ	ավելի քան 29 տարի

1.5.4. Բանկի վարչությունը

Բանկի Վարչությունը կազմված է 11 անդամներից.

	Անուն, ազգանուն	Պաշտոն	Փորձառություն
1	Արտակ Անանյան	Վարչության նախագահ	ավելի քան 25 տարի
2	Դավիթ Սարգսյան	Վարչության նախագահի տեղակալ, Ներդրումային բիզնեսի տնօրեն	ավելի քան 25 տարի
3	Արթուր Գյուլազյան	Վարչության նախագահի տեղակալ, Փրայվիթ բանկինգի տնօրեն	ավելի քան 20 տարի
4	Արմեն Գասպարյան	Վարչության անդամ, Կորպորատիվ բիզնեսի տնօրեն	ավելի քան 20 տարի
5	Հարություն Իսաիրյան	Վարչության անդամ, Թվայնացման և տաղանդների կառավարման գծով տնօրեն	ավելի քան 20 տարի
6	Արտակ Խաչատրյան	Վարչության անդամ, Մանրածախ բիզնեսի տնօրեն	ավելի քան 28 տարի
7	Միհրան Մուրադյան	Վարչության անդամ, ՓՄՁ բիզնեսի տնօրեն	ավելի քան 21 տարի
8	Լուսինե Ներսիսյան	Վարչության անդամ, Ռիսկերի կառավարման տնօրեն	ավելի քան 30 տարի

9	Արմինե Խաչատրյան	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ	Ավելի քան 30 տարի
10	Ռուստամ Բադասյան	Վարչության անդամ, Իրավական հարցերի գծով տնօրեն	Ավելի քան 13 տարի
11	Գարեգին Գևորգյան	Վարչության անդամ, Ֆինանսական տնօրենի ժամանակավոր պաշտանակատար	Ավելի քան 29 տարի

Բանկի աշխատակիցների թիվը 30.09.2025թ. դրությամբ կազմում է 2,288 (երկու հազար երկու հարյուր ութսունութ):

1.6. Բանկի պարտատոմսերի հիմնական տվյալները

Թողարկվող պարտատոմսերն անվանական են, ոչ փաստաթղթային, անբաժանելի են և փոխարկելի չեն, իսկ տոկոսային վճարումները կատարվելու են արժեկտրոնների միջոցով:

Թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում և մարվում են ՀՀ դրամով/ԱՄՆ դոլարով/Եվրոյով: Դրամային պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային վճարումները կատարվում են ՀՀ դրամով, իսկ արտարժույթային պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարումների արժույթը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից՝ պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Արտարժույթով թողարկված պարտատոմսերի դիմաց արժեկտրոնները ՀՀ դրամով վճարելու դեպքում հիմք է ընդունվում արժեկտրոնների վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա համար ՀՀ ԿԲ կողմից համապատասխան արժույթի հրապարակված միջին փոխարժեքը:

Թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմելու է 100 մլն (հարյուր միլիոն) ԱՄՆ դոլար, 100 մլն (հարյուր միլիոն) Եվրո և 50 մլրդ (հիսուն միլիարդ) ՀՀ դրամ:

Տեղաբաշխվող (վաճառվող) պարտատոմսերի քանակը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից՝ պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից՝ պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից՝ պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Բանկի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման հիմնական նպատակն է շուկայից միջոցների ներգրավումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են կարճաժամկետ և միջինժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտների վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Տարեկան արժեկտրոնի մեծությունը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

1.7. Արժեթղթերի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը

Բանկի անվանական պարտատոմսերի բաժանորդագրություն չի իրականացվելու:

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն համապատասխան պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը, պատշաճ կերպով ներկայացնեն Բանկ և կատարեն համապատասխան վճարում, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելը:

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է Բանկի Գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով:

Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը ենթակա է որոշման բանկի Վարչության կողմից՝ պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակումից առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ: Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում՝ www.ardshinbank.am:

Արժեթղթերի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը մանրամասն նկարագրությանը ներդրողը կարող է ծանոթանալ սույն Ազդագրի Բաժին 2-րդ բաժնում:

1.8. Բանկի ամփոփ ֆինանսական տվյալներ.

հազ. ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	30.09.2025	2024	2023
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	103,216,964	132,709,916	61,092,229
Սեփական կապիտալի միջին մեծություն	363,781,468	248,265,617	189,581,803
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)%	37.9%	53.5%	36.5%
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	103,216,964	132,709,916	61,092,229
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	2,366,062,733	1,881,616,068	1,596,324,437
Ակտիվների շահութաբերություն (ROA)%	5.8%	7.05%	3.9%
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	103,216,964	132,709,916	61,092,229
Գործառնական եկամուտ	171,486,161	191,665,166	106,137,584
Զուտ շահույթի մարժա (NPM) %	60.2%	69.2%	57.6%
Գործառնական եկամուտ	171,486,161	191,665,166	106,137,584
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	2,366,062,733	1,881,616,068	1,596,324,437
Ակտիվների օգտագործման գործակից % (AU)	9.3%	10.2%	6.6%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	2,366,062,733	1,881,616,068	1,596,324,437
Սեփական կապիտալի միջին մեծություն	363,781,468	248,265,617	167,572,575
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	6.5	7.6	9.5
Զուտ տոկոսային եկամուտ	103,216,964	100,538,979	69,435,506
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	2,049,407,349	1,593,860,707	1,260,242,955
Զուտ տոկոսային մարժա %(NIM)	4.6%	6.3%	5.5%
Տոկոսային եկամուտ	142,192,451	143,621,029	111,907,124
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	2,049,407,349	1,593,860,707	1,260,242,955
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	9.3%	9.0%	8.9%
Տոկոսային ծախսեր	41,364,804	43,082,051	42,471,618
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	2,007,261,936	1,919,227,812	1,429,072,748
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են ծախսեր,	2.8%	2.2%	3.0%
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	103,216,964	132,709,916	61,092,229
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը (հատ)	1,500,000	1,004,544	502,272
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	68.8	132.1	121.6
ՍՊՐԵԴ, %	6.5%	6.8%	5.9%

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 2-ում:

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1. Ռիսկային գործոններ

Ներդրողը պետք է գիտակցի, որ որոշակի ռիսկային գործոններ ի հայտ գալու դեպքում, որոնք բացասական ազդեցություն կունենան Բանկի ֆինանսական ցուցանիշների, համբավի, մրցակցային դիրքի վրա, ուղղակիորեն կանդրադառնան նաև պարտատոմսերի գրավչության, գնի և իրացվելիության վրա՝ արդյունքում ներդրողը ստիպված կլինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան դրանց համար վճարել էր:

Շուկայական ռիսկ. Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են (կարճաժամկետ կամ երկարաժամկետ հատվածում) նվազել ներքին և միջազգային տնտեսություններում տնտեսական ցուցանիշների փոփոխությունների և/կամ նման փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են տատանվել և ժամանակի ընթացքում կարող են իջնել և/կամ բարձրանալ: Միևնույն ժամանակ, ներդրողը պետք է հաշվի առնի, որ անկախ շուկայական պայմանների փոփոխություններից և սպասումներից,

Թողարկողի կողմից արժեկտրոնների վճարման և պարտատոմսի անվանական գումարի մարման մեծությունները արտահայտված թողարկման արժույթով, չեն փոխվում:

Իրացվելիության ռիսկ. Շուկայում առկա իրավիճակից կախված, երկրորդային շուկայում պարտատոմսերն իրացնելու հետ կապված ռիսկերը հնարավոր են: Նման ռիսկերը հիմնականում կարող են պայմանավորված լինել շուկայի ցածր իրացվելիության մակարդակով կամ շուկայական պայմանների կտրուկ անբարենպաստ փոփոխությամբ: Պարտատոմսերի իրացվելիությունն ապահովելու նպատակով Բանկը համապատասխան միջոցներ է ձեռնարկելու՝ այդ թվում շուկա ստեղծողի հետ պայմանագրի կնքում ու որոշակի ներդրումային որակներով օժտելու հնարավորության նախատեսում: Այնուամենայնիվ, թողարկողը չի կարող երաշխավորել, որ իր կողմից թողարկված արժեթղթերը ներդրողների համար ֆինանսապես շահավետ պայմաններով մշտապես հնարավոր է իրացնել ֆինանսական միջավայրի բացասական փոփոխությունների և/կամ դրանց միտումների ժամանակ:

Արդարության ռիսկ: Արժույթային փոխարժեքների տատանումները կարող են հանգեցնել ներդրողի համար կորուստների, երբ ներդրողը պարտատոմսից ստացված եկամուտը գնահատում է ներդրման արժույթից տարբերվող արժույթով: Մասնավորապես, ազգային արժույթի արժեզրկման դեպքում ներդրումներից ստացված ՀՀ դրամով եկամուտները ԱՄՆ դոլարի փոխարկելու դեպքում այն կարող է նախատեսվածից քիչ լինել և հակառակը:

Տոկոսադրույքի ռիսկ Տոկոսադրույքների մակարդակի տատանումները կարող են էական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գների վրա, որոնց արդյունքում ներդրողը կարող է ստանալ ավելի քիչ եկամուտ քան նախատեսված էր: Սակայն ռիսկի այս տեսակն էական է, երբ ներդրողը նախատեսում է մինչև մարման ժամկետը լրանալը վաճառել արժեթուղթը և արդյունքում շուկայական տոկոսադրույքների բարձր մակարդակի դեպքում կրել բացասական գնային փոփոխություն: Ռիսկի ի հայտ գալը կախված է մակրոտնտեսական միջավայրից, ֆինանսական շուկայի վիճակից, ֆինանսական ռեսուրսների իրացվելիության մակարդակից, գնաճից և այլ գործոններից:

Վերաներդրման ռիսկ Վերաներդրման ռիսկը կարող է ի հայտ գալ այն դեպքերում, երբ պարտատոմսերից ստացված դրամական հոսքերը հնարավոր չէ վերաներդրնել առնվազն համարժեք եկամտաբերությամբ: Մասնավորապես, շուկայական տոկոսադրույքների նվազման դեպքում պարտատոմսերից ստացվող կուպոնները ներդրողը կարող է ստիպված լինել

վերաներդնել ավելի ցածր դրույքով և ունենալ նախատեսվածից ավելի ցածր եկամտաբերություն: Երբ ներդրման ժամանակային հորիզոնը կարճ է կամ այդ ժամանակային հորիզոնում ներդրման գծով միջանկյալ հոսքեր չեն սպասվում, ապա ռիսկի այս տեսակը կարող է ոչ էական համարվել ներդրողի համար:

Ինֆլյացիոն ռիսկ Ինֆլյացիոն ռիսկը պայմանավորված է ներդրումների ապագա իրական արժեքի անորոշության հետ՝ ինֆլյացիայի մակարդակի փոփոխության հետևանքով: Քանի որ պարտատոմսերից ստացվող տոկոսային վճարումները ֆիքսված են անվանական ծավալի նկատմամբ, ապա ինֆլյացիայի մակարդակի աճի հետ զուգահեռ նվազում է նաև դրանց իրական գնողունակությունը: Առավել երկար ժամկետայնության պարտատոմսերում ներդրումներն ենթադրում են ավելի մեծ ինֆլյացիոն ռիսկի մակարդակ:

Վարկային/ դեֆոլտի ռիսկ - ցանկացած ներդրող, կորպորատիվ պարտատոմս ձեռք բերելիս, իր վրա է վերցնում թողարկողի վարկային ռիսկը: Այն իրենից ներկայացնում է հավանականություն, որ բացասական զարգացումների արդյունքում թողարկողը չի կարողանա ժամանակին ամբողջությամբ վճարել արժեկտրոնների վճարումներն և (կամ) մայր գումարները:

Վարկանիշի փոփոխության ռիսկ- Այլ հավասար պայմաններում պարտատոմսի գինը սովորաբար ուղիղ կախվածության մեջ է գտնվում Թողարկողի և/կամ հենց պարտատոմսի վարկային ռիսկը նկարագրող վարկանիշից: Վարկանիշի իջեցման դեպքում սովորաբար պարտատոմսի գինն ընկնում է կամ նույնն է, և պարտատոմսի եկամտաբերության մեծության նկատմամբ սպասումները բարձրանում են:

2.2. Հիմնական տեղեկատվություն

«Արդշինբանկ» ԲԲԸ անվանական պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակ է հանդիսանում ՀՀ արժեթղթերի շուկայում միջոցների ներգրավումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը:

Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Վարչության կողմից՝ պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակումից առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ Բանկի ինտերնետային կայքում՝ www.ardshinbank.am:

2.3. Տեղեկավարություն «Արդշինբանկ» ԲԲԸ անվանական պարտատոմսերի վերաբերյալ

2.3.1. Արժեթղթերի տեսակը և դասը

«Արդշինբանկ» ԲԲԸ պարտատոմսերն անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային և ոչ փոխարկելի պարտատոմսեր են: Թողարկվող պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ ծածկագիր:

2.3.2. Երկիրը, որի օրենսդրության համաձայն թողարկվել են արժեթղթերը

Թողարկումն իրականացվում է ՀՀ տարածքում՝ ՀՀ օրենսդրության համաձայն, և դրանց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.3.3. Արժեթղթերի ձևը

Թողարկված պարտատոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ պարտատոմսերի ռեեստրը վարվելու է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ (ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1 5-րդ հարկ, հեռ (+374) 60 615555) կողմից՝ ըստ համապատասխան կանոնների և ընթացակարգերի:

2.3.4. Արժեթղթերի անվանական արժեքը և քանակը

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը ենթակա է որոշման Բանկի վարչության կողմից՝ պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Թողարկվող պարտատոմսերի ընդհանուր քանակը ենթակա է

որոշման Բանկի վարչության կողմից՝ պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

2.3.5. Թողարկման արժույթը

Պարտատոմսերը թողարկվում են ԱՄՆ դոլարով, եվրոյով և ՀՀ դրամով համաձայն սույն Ծրագրային ազդագրով սահմանված ծավալների:

2.3.6. Արժեթղթերից բխող իրավունքների նկարագրությունը

Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանվել են պարտատոմսերից բխող հետևյալ իրավունքները.

✓ ստանալ պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնները մարման գումարը՝ ըստ Ազդագրով սահմանված կարգի: Արժեկտրոնային եկամտի ստացման և շրջանառության ժամկետի վերջում պարտատոմսերի մարման գումարի ստացման իրավունքի իրականացման համար ներդրողներից լրացուցիչ գործողությունների կատարում չի պահանջվում և արժեկտրոնային եկամուտը/պարտատոմսի մարման գումարը փոխանցվում է ներդրողի բանկային հաշվին թողարկողի կողմից:

✓ թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենքով թույլատրվող գործողություններ,

✓ գրավադրել պարտատոմսերն օրենքով սահմանված կարգով,

✓ իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում /ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում/ կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից /ֆոնդային բորսա/ դուրս վաճառել կարգավորվող առևտրին թույլատրված արժեթղթեր, բացառություն են կազմում ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները, ինչպես նաև թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները:

Համաձայն սույն Ազդագրի 2-րդ բաժնի, 3-րդ կետի 3.9 ենթակետի, բանկի պարտատոմսերի սեփականատերերին պարտատոմսերում կատարված ներդրումները մարվելու են պարտատոմսի անվանական արժեքով անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

2.3.7. Առաջարկվող արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն

Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ Բանկի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ.

- ✓ առաջին՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ ՀՀ ԿԲ խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում,
- ✓ երկրորդ՝ այն պարտատերերի պահանջները, որոնք Բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ Բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել Բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և ՀՀ ԿԲ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի,
- ✓ երրորդ՝ ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 16 միլիոն դրամի չափով, իսկ արտարժույթային ավանդների (հաշիվների) դեպքում՝ մինչև 7 միլիոն դրամին համարժեք չափով, ընդ որում՝ բանկի նկատմամբ ունեցած պահանջի գումարը 16 միլիոն դրամը (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափը) գերազանցելու դեպքում տվյալ անձի՝ մինչև 16 միլիոն դրամի չափով (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով) պահանջը բավարարվում է երրորդ հերթով, իսկ այդ գումարը գերազանցող պահանջը՝ չորրորդ հերթով:

✓ չորրորդ՝ բանկի այլ պարտավորությունները, ներառյալ՝ «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ»-ի կողմից հատուցման կազմակերպման հետ կապված ծախսերը, բացառությամբ երկրորդ հարթակում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների,

✓ հինգերորդ՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները,

✓ վեցերորդ՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները,

✓ յոթերորդ՝ բանկի մասնակիցների պահանջները:

Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

Բանկի սնանկ ճանաչվելու դեպքում պարտատերերին վճարումները կատարվում են «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կիրպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ, որի համաձայն բանկի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են 4-րդ հերթին, բացառությամբ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի իմաստով ավանդ հանդիսացող ներդրումներից, որոնք հատուցվում են 3-րդ հերթին: Ընդ որում, յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո: Պարտատոմսերի սեփականատերերը կարող են օգտվել օրենքով և իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին ՀՀ օրենքի և նույն օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով բանկի թողարկած անվանական արժեթղթերով, տվյալ դեպքում՝ պարտատոմսերով, ֆիզիկական անձանցից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից) ներգրավված դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ, որոնց հատուցումը երաշխավորված է նույն օրենքով սահմանված կարգով և պայմաններով, հետևյալ չափերով.

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն հայկական դրամ է.

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն հայկական դրամ է.

գ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ և դրամային բանկային ավանդի գումարը յոթ միլիոն հայկական դրամից ավել է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասնվեց միլիոն հայկական դրամով.

դ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկում են դրամային ավանդները, այնուհետև արտարժութային ավանդները:

Ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավարող հիմնադրամը (<< ք. Երևան, 0010 Խորենացի 15, Էլիտ Պլազա բիզնես կենտրոն, հեռ.՝ (+374) 583514, կայք՝ www.adgf.am)

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ինքնուրույն տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը:

Պարտատոմսերում ներդրումներ կատարող անձինք պարտավոր են նախքան պարտատոմսերի ձեռք բերումը ՀԿԴ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում կամ ՀԿԴ հաշվի օպերատորներից մեկում ունենալ սեփականատիրոջ (անվանատիրոջ) արժեթղթերի հաշիվ, ինչպես նաև կատարել պարտատոմսերի ձեռքբերման կամ օտարման հետ կապված պարտադիր վճարները՝ կապված սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման հետ:

Բանկի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների գրանցումն ու հաշվառումն իրականացնում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի միջոցով:

2.3.8. Արժեկտրոնի տոկոսադրույքը և դրա վճարման պայմանները

Պարտատոմսերի դիմաց հաշվարկվելու և վճարվելու է արժեկտրոնային անվանական եկամուտ, որը ենթակա է որոշման Բանկի վարչության կողմից՝ պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտների վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Բանկի վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում և մարվում են ՀՀ դրամով/ԱՄՆ դոլարով/Եվրոյով: Դրամային պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային վճարումները կատարվում են ՀՀ դրամով, իսկ արտարժույթային պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարումների արժույթը ենթակա է որոշման Բանկի վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Արտարժույթով թողարկված պարտատոմսերի դիմաց արժեկտրոնները ՀՀ դրամով վճարելու դեպքում հիմք է ընդունվում արժեկտրոնների վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա համար ՀՀ ԿԲ կողմից համապատասխան արժույթի հրապարակված միջին փոխարժեքը:

Արժեկտրոնների հաշվարկման օրերը ենթակա են որոշման Բանկի վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեկտրոնները պարտատոմսերի սեփականատերերին վճարվելու (մարվելու) են արժեկտրոնների հաշվարկման օրը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման (մարման) օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Արժեկտրոնային եկամտի գումարը վճարվելու է հաշվարկման նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձանց (սեփականատերեր կամ անվանատերեր)՝ վերջիններիս հաշվեհամարներին համապատասխան վճարումների մուտքագրման միջոցով: Վճարվելիք արժեկտրոնները հաշվարկվելու են տասնորդական ճշտությամբ՝ կլորացված ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ՝ ըստ կլորացման թվաբանական կանոնների: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում գումարը կմուտքագրվի Բանկի համապատասխան

տարանցիկ հաշվեհամարին՝ մինչև հաճախորդի կողմից համապատասխան հանձնարարականների ստացումը:

Պարտատոմսերի ոչ ռեզիդենտ սեփականատերերի առկայության դեպքում, բանկը արժեկտրոնի վճարումը ՀՀ տարածքում գործող բանկերում կիրականացնի այնպես, ինչպես ռեզիդենտ սեփականատերերին, իսկ ՀՀ տարածքից դուրս գործող բանկերում՝ սեփականատիրոջ հանձնարարագրով և բանկի կողմից մատուցվող լրացուցիչ ծառայությունների համար Բանկում գործող սակագներով կփոխանցի սեփականատերերի կողմից նշված համապատասխան հաշվեհամարներին:

Տեղաբաշխման ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում Բանկի ինտերնետային կայքում՝ www.ardshinbank.am, կիրապարակվի նաև տեղաբաշխվող պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարման, ինչպես նաև պարտատոմսերի մարման ժամանակացույցը՝ հստակ ամսաթվերով:

Յուրաքանչյուր պարտատոմսի գծով եռամսյակային արժեկտրոնային եկամտի հաշվարկը կկատարվի հետևյալ բանաձևով՝

$$ԱԳ = (FV * C)/k$$

որտեղ՝

ԱԳ – արժեկտրոնի գումար

FV – մեկ պարտատոմսի անվանական արժեք,

C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է /արժեկտրոնների եռամսյակային վճարումների դեպքում $k=4$ /

Արժեկտրոնի կուտակումը իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

$$AI = FV * C/k * DCS/DCC$$

AI – կուտակված արժեկտրոնային եկամուտն է

FV – մեկ պարտատոմսի անվանական արժեքն է

C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը /արժեկտրոնների եռամսյակային վճարումների դեպքում $k=4$ /

DCS – գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրերի քանակն է համապատասխան օրերի հաշվարկման պայմանականության դեպքում

DCC – գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է համապատասխան օրերի հաշվարկման պայմանականության դեպքում

Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համար համարվում է Actual/Actual-ը, ընդ որում

$$DCS = D2M2Y2 - D1M1Y1$$

$$DCC = D3M3Y3 - D1M1Y1$$

D1M1Y1 – գործարքի օրվան նախորդող արժեկտրոնի վճարման ամսաթիվն է, եթե պարտատոմսը դեռևս արժեկտրոն չի վճարվել, ապա արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է

D2M2Y2 – գործարքի կատարման ամսաթիվն է

D3M3Y3 – գործարքի օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման / անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

Պարտատոմսի տարեկան արդյունավետ տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$\text{ՊՏԵ} = (1 + S / \angle)^{\angle} - 1, \text{ \%$$

որտեղ՝

1) ՊՏԵ – տարեկան արդյունավետ տոկոսային եկամտաբերությունն է

2) S – տարեկան արժեկտրոնների տոկոսադրույքն է

3) $\angle$ – մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների վճարման հաճախականությունն է

2.3.9. Պարտատոմսերի մարման ժամկետը և արժեքը

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Բանկի Գործադիր մարմնի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Եթե մարման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարումը կկատարվի

տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսերի մարման և վճարման ամսաթվերը նույնն են:

Պարտատոմսերի մարման գումարների վճարումները կատարվում են մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձանց՝ վերջիններիս բանկային հաշիվներին համապատասխան վճարումների մուտքագրման միջոցով: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում գումարը կմուտքագրվի Բանկի համապատասխան տարանցիկ հաշվեհամարին՝ մինչև հաճախորդի կողմից համապատասխան հանձնարարականների ստացումը:

ԱՄՆ դոլարով, եվրոյով և ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու են համապատասխանաբար ԱՄՆ դոլարով, եվրոյով և ՀՀ դրամով:

Հաշվի առնելով պարտատոմսերի մարման հետ կապված հնարավոր միջբանկային փոխանցումների անհրաժեշտությունը (եթե ներդրողի բանկային հաշիվը չի գտնվում Բանկում)՝ ներդրողները պետք է նկատի ունենան, որ մարման գումարների փոխանցման ծախսերը պետք է կատարվեն ներդրողի հաշվին, հետևաբար նման ներդրողները մարման գումարները կստանան պահումներով՝ համաձայն համապատասխան Բանկում գործող սակագների:

Արդշինբանկ ԲԲԸ-ում Բանկի հաճախորդի կողմից անկանխիկ մուտքագրված գումարով Բանկի կողմից թողարկված Պարտատոմսը գնելու դեպքում և սահմանված ժամկետում այն մարելու պարագայում՝ տվյալ անկանխիկ գումարը համարվելու է կանխիկ:

Թողարկման վերջնական պայմաններով թողարկողը կարող է նախատեսել թողարկված պարտատոմսերի վաղաժամկետ մարում և/կամ հետգնում: Պարտատոմսերի վաղաժամկետ մարման և հետգնման պայմանները ենթակա են որոշման Բանկի Գործադիր մարմնի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Եթե մարման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարումը կկատարվի տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

2.3.10. Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը

Արժեթղթերի եկամտաբերությունը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

2.3.11. Իրավասու մարմնի որոշման համառոտ բովանդակությունը թողարկման մասին

Պարտատոմսերի թողարկման վերաբերյալ որոշումն ընդունվել է Բանկի խորհրդի 2025թ. հոկտեմբերի 3-ի նիստում (Որոշում թիվ 12/25-12 Լ): Որոշմամբ ամրագրվել է այն առավելագույն ծավալը, որի շրջանակներում Բանկի Վարչությունն առանձին որոշմամբ (որոշումներով) կարող է իրականացնել պարտատոմսերի տեղաբաշխում (տեղաբաշխումներ): Պարտատոմսերի տեղաբաշխումներին վերաբերող վերջնական պայմանները հաստատված են համարվում համաձայն պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ կայացված Բանկի Վարչության որոշման (որոշումների), այնքանով, որքանով վերջիններս չեն հակասում օրենսդրությանը և Բանկի Խորհրդի թիվ 09-23-02 Լ որոշման պայմաններին:

2.3.12. Շրջանառության սահմանափակումներ

ՀՀ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման մասին Բանկի խորհրդի որոշմամբ պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանափակումներ չեն սահմանվում:

Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված սահմանափակումներ չկան՝ բացառությամբ օրենքով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերի:

Թողարկողը արտարժույթային պարտատոմսերի համար դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրի թույլտվության համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում:

Դրամային պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրի թույլտվության համար դիմելու որոշումը Թողարկողի կողմից կայացվելու է պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում:

Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ առևտրային թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել: Պարտատոմսերի՝ առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, տեղաբաշխումը կհամարվի չեղյալ:

Ներդրողները կարող են իրենց ցանկությամբ օտարել պարտատոմսերը կարգավորվող շուկայում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթեր, բացառություն են կազմում.

✓ ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները,

✓ Թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները:

2.3.13. Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկումը

Չնայած այն հանգամանքի, որ Թողարկողը, իրականացնելով իր լավագույն ջանքերը և առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացնում է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների կիրառման և /կամ փոփոխության արդյունքում առաջացած ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

Թողարկողի պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտային հարկով (ֆիզիկական անձանց համար):

Շահութահարկով հարկման կարգը և նկարագիրը.

ՀՀ-ում շահութահարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, բացառությամբ ՀՀ պետական կառավարչական հիմնարկների, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ՀՀ ԿԲ-ի: ՀՀ Հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Հարկային օրենսգիրք) ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն (այսուհետ՝ ռեզիդենտ կազմակերպություն) է համարվում այն կազմակերպությունը, որի գտնվելու վայրը հանդիսանում է ՀՀ-ն:

Ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը.

Ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և Հարկային օրենսգրքի սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Շահութահարկի գումարը ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 18 (տասնութ) տոկոս դրույքաչափով:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը.

Ոչ ռեզիդենտներ իրավաբանական անձանց համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Համաձայն Հարկային օրենսգրքի՝ հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներին են դասվում նաև ոչ ռեզիդենտի՝ ռեզիդենտից կամ ոչ ռեզիդենտից ստացված պասիվ եկամուտները: Ընդ որում, ոչ ռեզիդենտի ստացված պասիվ եկամուտներ են համարվում ոչ ռեզիդենտի կողմից իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրելով) ՀՀ տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները, այսինքն՝ շահաբաժիններ, տոկոսներ, ռոյալթիներ և այլ պասիվ եկամուտներ:

ՀՀ-ում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է հարկային գործակալը՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ: ՀՀ-ում ոչ ռեզիդենտի ստացած եկամտից վճարման աղբյուրի մոտ Հարկային օրենսգրքով սահմանված կարգով հարկային գործակալները շահութահարկը պահում են 10 (տասը) տոկոս դրույքաչափով:

2020թ. մարտի 1-ից ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում մինչև 2027թ.-ի դեկտեմբերի 31-ը ցուցակված պարտատոմսերից մինչև 2027թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացվող տոկոսային եկամուտի, ինչպես նաև նշյալ

պարտատոմսերի օտարումից ստացվող եկամուտների մասով ազատվում են շահութահարկի վճարումից:

Եկամտային հարկով հարկման կարգը և նկարագիրը:

ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում ՀՀ Հարկային Օրենսգրքի համաձայն ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է ՀՀ-ում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, ինչպես նաև ՀՀ-ում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը: Կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես, համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, եթե այնտեղ է գտնվում տունը կամ բնակարանը, որտեղ բնակվում է նրա ընտանիքը և գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը:

Ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկում

Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող եկամուտը:

Տոկոսագումարների համար եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով: Ռեզիդենտ ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս եկամտային հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը: Եկամտային հարկի պահումը (գանձումը) իրականացվում է տոկոսագումարների յուրաքանչյուր վճարման դեպքում:

ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսները կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտները ազատվում եկամտային հարկից, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց:

Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկում

Ոչ ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և Հարկային օրենսգրքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:

Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները և եկամտային հարկի կիրառվող դրույքաչափը նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսները կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտները, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (եկամտային հարկի գծով), ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց (շահութահարկի գծով) համար հարկային գործակալ է հանդիսանում Թողարկողը:

2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները

2.4.1. Բանկի կողմից թողարկվող անվանական պարտատոմսերի ընդհանուր ծավալը

Թողարկողը նախատեսում է թողարկել և տեղաբաշխել մինչև 100 մլն (հարյուր միլիոն) ԱՄՆ դոլար, 100 մլն (հարյուր միլիոն) եվրո և 50 մլրդ (հիսուն միլիարդ) ՀՀ դրամ, որը կարող է իրականացվել մի քանի տրանշերով: Տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի ծավալը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Թողարկողն առաջարկի ծրագիրը կարող է իրականացնել ազդագրի կիրառության ժամկետում՝ ազդագրի գրանցման օրվանից 12 ամսվա ընթացքում:

2.4.2. Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը.

Պարտատոմսերի տեղաբաշխման հստակ ժամանակահատվածը՝ ներառյալ տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրերը, ենթակա են որոշման Բանկի Վարչության կողմից

պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար թողարկման և տեղաբաշխման առաջին օրը համընկնելու է:

Թողարկողի կողմից պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել միայն անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում (Ֆորս մաժոր):

Եթե Թողարկողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է Ծրագրային Ազդագրի լրացում, որը կապված է ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու և ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով հետ վերադարձնել տեղաբաշխման ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը: Սահմանված հետգնման պահանջը պետք է տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Հետգնման պահանջի ներկայացման ժամկետը չի կարող ավելի կարճ լինել, քան Ծրագրային Ազդագրի լրացման հրապարակումից հետո 5-րդ աշխատանքային օրը:

Արժեթղթերի հետգնումն և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցների վերադարձն իրականացվում են Բանկի կողմից անկանխիկ եղանակով՝ ներդրողի հետգնման պահանջը գրավոր ներկայացնելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

Տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշման կայացման և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման օրվա և այն վճարելու օրերի միջև ընկած ժամանակաշրջանի համար:

ՀՀ ԿԲ-ն իր որոշմամբ կարող է կասեցնել պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի:

Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ՀՀ ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրով:

Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Բանկը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը

դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.3. Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացի նկարագրությունը.

Թողարկողի պարտատոմսերի բաժանորդագրություն չի իրականացվելու:

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և պատշաճ կերպով Բանկ ներկայացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականները, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր, ինչպես նաև «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ում պարտատոմսերի գրանցման և հաշվառման նպատակով՝ համապատասխան հաշվի բացման վերաբերյալ քաղվածք:

Թողարկման նպատակով Բանկում բացված համապատասխան հաշվեհամարներին դրամական միջոցների ստացումից անմիջապես հետո Բանկը Դեպոզիտարիային ներկայացնում է պարտատոմսերի տեղաբաշխման հանձնարարագիր Թողարկողի թողարկման հաշվից համապատասխան քանակի պարտատոմսերի փոխանցման և ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ արժեթղթերի հաշվին հաշվեգրման համար:

Դեպոզիտարիայից ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ դեպո հաշվին պարտատոմսերի փոխանցման վերաբերյալ համապատասխան հաստատում ստանալուց անմիջապես հետո Բանկը թողարկման նպատակով բացված համապատասխան տարանցիկ հաշվեհամարներից իր օգտագործման համար մատչելի է դարձնում համապատասխան հայտ-հանձնարարականում նշված դրամական միջոցները:

Պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո թողարկման նպատակով բացված համապատասխան տարանցիկ հաշվեհամարներին ստացված գումարները ենթական են հետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել անկախ դրանց առաքման և/կամ Բանկի կողմից ստացման ժամկետից:

Հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո մինչև տվյալ օրվա գործառնական օրվա ավարտը համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը:

Իրավաբանական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է Ազդագրի Հավելված 3-ում: Ֆիզիկական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է Ազդագրի Հավելված 4-ում:

Պարտատոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ:

2.4.4. Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը.

Տեղաբաշխման ընթացքում բանկը չի նախատեսում պարտատոմսերի առաջարկի, ինչպես նաև տեղաբաշխման ծավալների փոփոխության կամ չեղյալ հայտարարելու հնարավորություն:

Տեղաբաշխման ընթացքում հնարավոր է պարտատոմսերի ձեռքբերման որևէ հայտ-հանձնարարականի և/կամ հայտ-հանձնարարականների մասնակի բավարարում, եթե հայտում նշված ծավալը գերազանցում է հայտ-հանձնարարականի ներկայացման պահին չտեղաբաշխված ծավալը: Այս դեպքում հայտ-հանձնարարականը բավարարվում է չտեղաբաշխված ծավալի չափով: Հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Թողարկողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ:

2.4.5. Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը.

Ներդրողները պարտատոմսերի հայտ-հանձնարարականները պատշաճ կերպով առաքելուց, Բանկի կողմից հայտ-հանձնարարականի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո դրանք չեն կարող ետ կանչել:

2.4.6. Ձեռքբերման հայտի նվազագույն և առավելագույն գումարները.

Պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն և առավելագույն մեծությունների վերաբերյալ սահմանափակումներ չկան, որի հետևանքով Գնման հայտ-հանձնարարականներում նշվող գումարների վերաբերյալ նվազագույն կամ առավելագույն մեծությունների սահմանափակումներ չեն սահմանվում:

2.4.7. Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները.

Հայտ-հանձնարարականի լրացումից և պատշաճ կերպով Բանկ ներկայացումից հետո պարտատոմս ձեռք բերել ցանկացող Բանկի հաշվետեր իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք պետք է վճարում կատարեն իրենց՝ «Արդշինբանկ» ԲԲԸ-ում բացված համապատասխան հաշվեհամարներին, իսկ ոչ հաշվետեր իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք՝ թողարկման նպատակով «Արդշինբանկ» ԲԲԸ-ում բացված 2470062828560000 (ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսի համար), 2470062828490000 (Եվրոյով արտահայտված պարտատոմսերի համար) և 2470062828310000 (<< դրամով արտահայտված պարտատոմսերի համար) տարանցիկ հաշվեհամարներին՝ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար միջոցները հաշվեհամարներին են փոխանցվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները ստացված են համարվում այդ օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք ստացված են համարվում վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտը մինչև տվյալ օրվա ժամը 16:30-ը ներկայացնելու դեպքում պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է պարտատոմսի ձեռքբերման տվյալ օրվա համար սահմանված գինը բազմապատկելով ձեռքբերվող պարտատոմսերի քանակով: Պարտատոմսերի ձեռքբերման հայտը տվյալ օրվա ժամը 16:30-ից հետո ներկայացնելու դեպքում պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է պարտատոմսի ձեռքբերման հաջորդ աշխատանքային օրվա համար սահմանված գինը բազմապատկելով ձեռք բերվող պարտատոմսերի քանակով:

Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված Բանկի հաշվետեր հաճախորդների դեպքում Թողարկողի մոտ իրենց հաշվեհամարներին, իսկ ոչ հաշվետեր հաճախորդների դեպքում՝ Թողարկողի կողմից բացված և սույն Ազդագրում նշված համապատասխան տարանցիկ հաշվեհամարին դրամական միջոցների մուտքագրման պահից: Համապատասխան հայտ-հանձնարարականները բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի

Օպերատորից՝ Թողարկողից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

2.4.8. Առաջարկի արդյունքների հրապարակման ձևը և ժամկետների ամբողջական նկարագրությունը.

Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման արդյունքները հրապարակվում են Բանկի ինտերնետային www.ardshinbank.am կայքում տեղաբաշխման ավարտի օրվանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.9. Նախապատվության իրավունքից օգտվելու գործընթացի նկարագրությունը.

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականների և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն առաջնահերթություն ունի այն ներդրողը, ում հայտ-հանձնարարականի համաձայն վճարումը համապատասխան հաշվեհամարներին ավելի վաղ է ստացվել:

2.4.10. Պարտատոմսերի տեղաբաշխման պլանը

2.4.10.1. Ներդրողների թիրախային խմբերը.

Առաջարկն ուղղված է ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ ներառյալ որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողներին, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերին:

2.4.10.2. Հայտի բավարարման մասին ծանուցման եղանակները.

Ներդրողները թողարկողից տեղեկացվում են իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին մինչև հայտի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականների բավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Բանկ է ներկայացրել պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը/երը: Բանկի որևէ մասնաճյուղ ներկայացած և մասնաճյուղերի աշխատակիցների միջոցով համապատասխան հայտ-հանձնարարականը լրացրած ներդրողը իր հայտ-հանձնարարականի բավարարման մասին տեղեկանալու համար պարտավոր է ներկայանալ Բանկ և իր հայտ-հանձնարարականը լրացրած աշխատակցի միջոցով տեղեկանալ իր հայտ-հանձնարարականի բավարարման մասին:

2.4.11. Առաջարկի գինը.

Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$DP = \frac{c}{f} \sum_{i=1}^N \left(\frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{i-1+t}} \right) + \left(\frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+t}} \right)$$

$$t = \frac{DSN}{DCC}$$

DP – Պարտատոմսի գինն է

DSN - Գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա մեջ եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում

DCC – գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f=4 եռամսյակային վճարումների դեպքում)

N - գործարքի կատարման օրվանից հետո արժեկտրոնների մնացած վճարումների քանակն է

Y – մինչև մարում եկամտաբերությունն է

C – տարեկան արժեկտրոնն է 100 միավոր անվանական արժեքի դիմաց:

Մինչև տեղաբաշխման սկիզբը տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար՝ ըստ օրերի, պարտատոմսերի վաճառքի գինը կիրառարակվի բանկի ինտերնետային կայքում:

Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռք բերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջոնրդավճարների հետ կապված ծախսերը:

Ներդրողները պարտավոր են նաև Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական դեպո հաշիվ և կրել

վերջինիս հետ կապված ծախսերը:

2.4.12. Այլ ծախսեր

- Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման գծով «Արդշինբանկ» ԲԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների կամ խորհրդատվության դիմաց ներդրողը որևիցե ծախս չի կատարում:

- «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ը հաշվի օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները գանձվում են համաձայն հաշվի օպերատորի կողմից հաստատված սակագների, որոնց հետ ներդրողը կարող է ծանոթանալ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով՝ www.amx.am:

2.4.13. Տեղաբաշխումը:

2.4.13.1. Երաշխավորված տեղաբաշխում

Երաշխավորված տեղաբաշխումներ իրականացնողներ առկա չեն:

2.4.13.2. Երաշխավորված և չերաշխավորված տեղաբաշխողների հետ կնքված պայմանագրերի էական պայմանները

Թողարկողը և տեղաբաշխողը նույն իրավաբանական անձն են՝ «Արդշինբանկ» ԲԲԸ: Թողարկող/տեղաբաշխողը այլ տեղաբաշխողների և/կամ խմբի հետ համատեղաբաշխման պայմանագիր չի կնքել:

2.4.13.3. Երաշխավորված պայմանագրի կնքում

Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիր չի կնքվել:

2.4.13.4. Վճարումներն ընդունող բանկերի ցանկը

Պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել «Արդշինբանկ» ԲԲԸ-ում (գլխամասային գրասենյակի՝ ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչ 13 հասցեում, և մասնաճյուղերի կողմից, որոնց անվանումները և հասցեները բերված են սույն Ազդագրի 3-րդ բաժնի, 3.3.5-րդ կետի ենթակետում) բացված 2470062828560000 (ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսերի համար), 2470062828490000 (Եվրոյով արտահայտված պարտատոմսերի համար) և 2470062828310000 (ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսերի համար) տարանցիկ հաշվեհամարներին կամ ներդրողների՝ Թողարկողի մոտ բացված համապատասխան հաշվեհամարներին՝ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար: Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ)

գրանցումն (սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի վարում) իրականացվելու է Դեպոզիտարիայի միջոցով, որը հանդես է գալու որպես Գլխավոր պահառու համաձայն ՀՀ օրենսդրության և կազմակերպության գործունեությունը կարգավորող կանոնների: Պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից (դեպոզիտարիայի ենթապահառու)՝ այդ պահառուի մոտ պարտատոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով: Դեպոզիտարիայի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան Էրեբունի պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ (հեռ՝ +37460615555, +37410543321): Պարտատոմսերի ռեեստրի վարման Հաշվի Օպերատոր հանդիսանում է «Արդշինբանկ» ԲԲԸ-ն: Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական դեպո հաշիվ:

2.5. Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

2.5.1. Առևտրին թույլտվությունը

Սույն Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելուց և արտարժույթային պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու նպատակով Բանկը դիմելու է «Հայաստանի Ֆոնդային բորսա» ԲԲԸ, իսկ դրամային պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու նպատակով Բանկը կարող է դիմել «Հայաստանի Ֆոնդային բորսա» ԲԲԸ:

2.5.2. Առևտրի շուկաները

Այս պահին Թողարկողի կողմից սույն ազդագրով գրանցվող պարտատոմսերը թույլատրված չեն հրապարակային առևտրի ոչ մի շուկայում:

2.5.3. Շուկա ստեղծողները

Բանկը պարտատոմսերի տեղաբաշխումն ավարտելուց հետո կարող է կնքել համապատասխան պայմանագիր երկրորդային շուկայում վաճառքի ակտիվացման գործառույթներ իրականացնողի հետ (շուկա ստեղծող)՝ Բանկի պարտատոմսերի շուկան ձևավորելու նպատակով: Շուկա ստեղծողը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում իրականացնում է պարտատոմսերի առքի և վաճառքի գնանշումներ: Շուկա ստեղծողի պարտավորության հիմնական պայմանները սահմանվում են վերջինիս և Թողարկողի միջև

կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրում և «Հայաստանի Հանրապետության ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի «Շուկա ստեղծողի կանոններ»-ով:

2.6. Լրացուցիչ տեղեկատվություն

2.6.1. Ներգրավված խորհրդատուներ. Սույն ազդագրի պատրաստման ընթացքում Բանկը չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից:

2.6.2. Աուդիտորական եզրակացություն

Բացի սույն ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից :

2.6.3. Երրորդ անձանցից ստացված տեղեկատվություն

Որպես սույն բաժնում ներկայացված տեղեկատվության ստացման աղբյուր, երրորդ անձինք ներգրավված չեն:

2.6.4. Շնորհված վարկանիշներ

Թողարկվող պարտատոմսերին վարկանիշ չի շնորհվել:

Թողարկողն ունի միջազգային հեղիանակավոր վարկանշային երեք գործակալություններից (Moody's, Fitch, S&P Global Ratings) ստացված վարկանիշ: Մասնավորապես «Fitch» միջազգային վարկանշային կազմակերպության կողմից տրված «արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի» վարկանիշը BB- է, իսկ կայունության վարկանիշը՝ bb-: «Moody's» միջազգային վարկանշային կազմակերպության կողմից տրված «Երկարաժամկետ արտարժույթային ավանդներ», «Երկարաժամկետ տեղական արժույթային ավանդներ» և «Ոչ ստորադաս, չապահովված պարտատոմսերի (արտարժույթ)» վարկանիշները Ba3 են, իսկ «Ելակետային վարկային գնահատականը»՝ ba3: S&P Global Ratings-ի կողմից Թողարկողին տրվել են «BB-/B» երկարաժամկետ և կարճաժամկետ վարկանիշները:

Վարկանիշները տրվել են հաշվի առնելով տարածաշրջանի տնտեսական զարգացումները, ընկերության դիրքը մրցակցային պայմաններում ինչպես նաև վարկային պորտֆելի, հաճախորդների նկատմամբ ունեցած պարտավորությունների, ավանդների ցուցանիշների, ակտիվների որակի և շահութաբերության մակարդակի ու մի շարք այլ ցուցանիշների հիման վրա:

Վարկանիշային սանդղակում B+(B1) վարկանիշը համարվում է բարձր ներդրումային ռիսկ ունեցող վարկանիշ, որը համեմատական կարգով նշանակում է վարկային բեռի սպասարկման ավելի մեծ ռիսկայնություն, քան այդ սանդղակի B+(B1) վարկանիշից բարձր վարկանիշ ունեցող թողարկողները:

ԲԱԺԻՆ 3. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1. Անկախ աուդիտորները

Բանկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով յուրաքանչյուր տարի «Արդշինբանկ» ԲԲԸ ֆինանսական հաշվետվություններն աուդիտի ենթարկելու նպատակով հրավիրում է արտաքին աուդիտ: Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ՝ համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական անճշտություններից:

2016 - 2022թթ.-ին Բանկի անկախ աուդիտորական ստուգումներն իրականացվել է «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՍՊԸ աուդիտորական կազմակերպության կողմից: «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՍՊԸ հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան փող. 26/1 շենք, «Էրեբունի-Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ, հեռ. + 374 (10) 595 999, ֆաքս + + 374 (10) 595 999, www.kpmg.am:

2024թ.-ին Բանկի անկախ աուդիտորական ստուգումներն իրականացրել է «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ աուդիտորական կազմակերպությունը: «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան փող., 2 շենք, 7-րդ հարկ («Կամար» բիզնես-կենտրոն), հեռ. +374-60-507777, http://www.ey.com/en_am:

3.2. Ռիսկային գործոններ

Ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպվում է Բանկի առաքելությանը, ռազմավարական ու միջանկյալ նպատակներին համահունչ և ուղղված է Բանկի ֆինանսական կայունության ապահովմանն ու հեղինակության ամրապնդմանը:

Բանկը հատկապես կարևորում է ներքոնշյալ ռիսկերի կառավարումը, սակայն ներդրող պետք է գիտակցի, որ նշված ռիսկերից բացի հնարավոր է նաև այլ ոչ բարենպաստ դեպքերի զարգացումներ, որոնք հետագայում կարող են անցանկանալի հետևանք ունենալ Բանկի

Ֆինանսական վիճակի, արդյունքների, հեղինակության վրա, ինչպես նաև պարտատոմսերի ներդրումային որակների վրա:

Աճող մրցակցություն՝ բանկային ոլորտին բնորոշ է բարձր մրցակցությունը հետևաբար շուկայում մրցակիցների ակտիվության բարձրացումը կարող է բացասաբար ազդել Թողարկողի ֆինանսական ցուցանիշների վրա:

Վարկային ռիսկն՝ ի հայտ է գալիս վարկերի, դեբիտորական պարտավորությունների տրամադրման և սպասարկման ժամանակ, ինչպես նաև բոլոր այն դեպքերում, երբ գործարքի երկրորդ կողմը ֆինանսական դժվարությունների և (կամ) այլ պատճառներով կարող է հրաժարվել Բանկի հանդեպ ունեցած պայմանագրային պարտավորությունների կատարումից, որի պատճառով Բանկը կարող է կրել ֆինանսական կորուստներ:

Արդշինբանկը կրում է վարկային ռիսկ, երբ կոնտրագենտն իր վարկային գործառնությունների արդյունքում ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Բանկի նկատմամբ: Վարկային ռիսկը ծագում է Բանկի վարկային գործունեության, միջբանկային գործառնությունների, ինչպես նաև ռեպո գործարքների և երրորդ անձանց ակրեդիտիվների կամ բանկային երաշխիքների տրամադրման արդյունքում: Արդշինբանկի վարկային ռիսկի բեռը հաճախորդներին տրամադրվող վարկերի գծով ամբողջովին կենտրոնացած է Հայաստանում:

Բանկը որդեգրել է վարկային ռիսկի կառավարման համապատասխան քաղաքականություն և ընթացակարգեր (ինչպես ճանաչված, այնպես էլ չճանաչված պայմանագրային պարտավորությունների մասով), ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանաչափին վերաբերող ուղեցույցներ: Արդշինբանկը պարբերաբար վերահսկում է անհատական վարկային ռիսկերը և պարբերաբար իրականացնում է իր հաճախորդների վարկունակության գնահատում: Կախված նրանից՝ տվյալ հաճախորդը հանդիսանում է կորպորատիվ, թե ֆիզիկական անձ հաճախորդ, վերանայումն իրականացվում է հանրամատչելի տեղեկատվության, հաճախորդների ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև ՀՀ վարկային բյուրոների և այլ տվյալների բազաներից ստացված տեղեկատվության հիման վրա: Արդշինբանկը սահմանում է իր վարկերի ապահովվածության համապատասխան քաղաքականություն. կորպորատիվ և մանրածախ վարկերի մեծ մասը հանդիսանում են գրավով ապահովված վարկեր՝ դրանց տրամադրման պահին: Գրավի

ընթացիկ արժեքը պարբերաբար գնահատվում է անկախ գնահատողների կամ ներքին մասնագետների կողմից, և շուկայական գների բացասական փոփոխությունների դեպքում վարկառուից կարող է պահանջվել տրամադրել լրացուցիչ ապահովվածություն:

Վարկային ռիսկերի կառավարումն ու մոնիթորինգն իրականացվում է Վարկային կոմիտեների և Վարչության կողմից՝ իրենց լիազորությունների շրջանակներում: Վարկային գործընթացների վերաբերյալ բոլոր առաջարկությունները դիտարկվում և հաստատվում են Վարչության կողմից: Ամենօրյա ռիսկերի կառավարումն իրականացնում է Ռիսկերի կառավարման տնօրինությունը:

Արդշինբանկը մշտապես հսկում է մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի գծով, ինչպես նաև ըստ տնտեսության ոլորտների առկա վարկային ռիսկի մակարդակը՝ կիրառելով համապատասխան սահմանաչափեր: Նշված սահմանաչափերը յուրաքանչյուր տարի հաստատվում են Վարչության կողմից: Սահմանափակումների գծով գերազանցումները ստուգվում են օրական կտրվածքով:

Վարկերի և չօգտագործված վարկային գծերի գծով արտահաշվեկշռային պարտավորությունները իրենցից ներկայացնում են չօգտագործված վարկեր, երաշխիքներ կամ ակրեդիտիվներ: Արտահաշվեկշռային ֆինանսական գործիքների մասով վարկային ռիսկը սահմանվում է որպես կորուստների հավանականություն՝ կապված կոնտրագենտի կողմից պայմանագրի պայմանների չկատարման հետ: Ինչ վերաբերում է վարկերի և չօգտագործված վարկային գծերի գծով ստանձնած վարկային ռիսկին, ապա Արդշինբանկը կարող է կրել կորուստներ չօգտագործված վարկային միջոցների ընդհանուր գումարի չափով: Այնուամենայնիվ, վնասի հավանական չափը պակաս է չօգտագործված վարկային միջոցների ընդհանուր գումարից, քանի որ վարկի տրամադրման համար նախատեսված միջոցների չափը կախված է հաճախորդների կողմից անհրաժեշտ պայմանների պահպանումից: Արդշինբանկը պայմանական պարտավորությունների նկատմամբ կիրառում է միևնույն վարկային քաղաքականությունը, ինչ հաշվեկշռային ֆինանսական գործիքների նկատմամբ՝ կիրառելով վարկի հաստատման միևնույն ընթացակարգերը, ռիսկերի նվազեցման համար սահմանված սահմանաչափերը և օպերատիվ մոնիթորինգի իրականացման գործընթացները:

Բանկն իրականացնում է կապիտալի բավարար մակարդակի ապահովման միջոցառումներ և մշտապես ապահովում է ԿԲ կողմից սահմանված համարժեքության

նորմատիվից բարձր մակարդակ: 30.09.2025թ. դրությամբ ԿՀՆ նորմատիվի փաստացի արժեքը կազմել է 22.73% (31.12.2024թ. դրությամբ՝ 22.20%): Վարկային պորտֆելի որակական ցուցանիշները գտնվում են սահմանված միջակայքերում: Մասնավորապես 30.09.2025թ. դրությամբ չաշխատող վարկերի տեսակարար կշիռը կազմում է վարկային պորտֆելի 2.7%-ը, իսկ պորտֆելի ռիսկի արժեք կազմում է 0.5%:

Իրացվելիության ռիսկը՝ պարտավորությունների կատարման համար բավարար ֆինանսական միջոցների բացակայության կամ այդ միջոցների ձեռքբերման բարձր արժեքի ռիսկն է: Իրացվելիության ռիսկը պայմանավորված է նաև ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների անհամապատասխանությամբ, ինչի հետևանքով ֆինանսական հաստատությունը հնարավորություն չի ունենում ժամանակին և ողջամիտ գնով իրացնել իր ակտիվները՝ պարտավորությունները կատարելու նպատակով:

Արդշինբանկի իրացվելիության կառավարման ռազմավարությունը միտված է ապահովելու դրամական միջոցների հասանելիությունը՝ ստանձնած պարտավորությունների ժամանակին կատարման համար: Այդ նպատակին հասնելու համար Արդշինբանկը պահում է դիվերսիֆիկացված ֆինանսավորման բազա՝ կազմված կորպորատիվ և մանրածախ հաճախորդների ավանդներից, այլ բանկերից ստացված երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերից, պարտքային արժեթղթերից և բարձր իրացվելի ակտիվների պորտֆելից: Արդշինբանկի ռիսկերի կառավարման քաղաքականությունը պահանջում է, որ իրացվելիության ռիսկերը կառավարվեն հետևյալ եղանակներով.

- Արդշինբանկի ակտիվների և պարտավորությունների ամենօրյա կառավարում և կանխիկ դրամական հոսքերի կանխատեսում,
- ֆինանսավորման տարբեր աղբյուրների պահպանում,
- ռիսկերի կենտրոնացումների կառավարում,
- պարտավորությունների ֆինանսավորման ծրագրերի մշակում,
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի վարում, և
- ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված իրացվելիության նվազագույն գործակիցներին Արդշինբանկի համապատասխանության վերաբերյալ ամենօրյա մոնիթորինգ և ամսական հաշվետվությունների պատրաստում:

Օրենսդրական պահանջով Արդշինքանկը պարտավոր է յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածում բավարարել իրացվելիության որոշակի գործակիցների, ներառյալ բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ, բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ և այլ գործակիցներ: Վերոնշյալ գործակիցները սահմանված են ՀՀ ԿԲ համապատասխան կանոնակարգերով:

Իրացվելիության ռիսկի զսպման նպատակով Բանկը ձևավորում է ինչպես ոչ սթրեսային վիճակների համար նախատեսված պահուստներ, այնպես նաև սթրեսային վիճակներին դիմակայելու համար անհրաժեշտ պահուստների մակարդակ:

Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով Բանկի իրացվելիությունը նկարագրող հիմնական ցուցանիշների գծով սահմանվում են ներքին սահմանաչափեր, որոնց գծով իրականացնում է մոնիթորինգ՝ հնարավոր ռիսկերը բացահայտելու և կառավարելու նպատակով:

Իրացվելիության կառավարման նպատակով Բանկը նաև համապատասխան միջոցառումներ է ձեռնարկում ՀՀ ԿԲ կողմից սահմանված իրացվելիության նորմատիվների պահպանման համար: Մասնավորապես 30.09.2025թ-ին Ն21 - ընդհանուր իրացվելիության (Բարձր իրացվելի ակտիվներ/Ընդհանուր ակտիվներ) նորմատիվի փաստացի արժեքը կազմել է 32.73%, թույլատրելի 15% նվազագույնի դիմաց, իսկ Ն22 - ընթացիկ իրացվելիության (Բարձր իրացվելի ակտիվներ/Ցպահանջ պարտավորություններ) նորմատիվի արժեքը՝ 74.21% թույլատրելի 60% նվազագույնի դիմաց, Ն23 - Իրացվելիության ծածկույթի (Բանկի բարձր իրացվելի ակտիվների/Զուտ դրամական արտահոսք) նորմատիվի արժեքը՝ 236.07% թույլատրելի 100% նվազագույնի դիմաց, իսկ Ն24 - Զուտ կայուն ֆինանսավորման (Բանկին հասանելի կայուն միջոցների/Բանկին անհրաժեշտ կայուն միջոցներ) նորմատիվի արժեքը՝ 127.24% թույլատրելի 100% նվազագույնի դիմաց:

Գործառնական ռիսկն՝ անհամապատասխան կամ ձախողված ներքին գործընթացների, մարդկային գործոնի, համակարգերի խափանման կամ արտաքին իրադարձությունների արդյունքում կորուստների ռիսկ է: Արդշինքանկը ենթարկվում է գործառնական ռիսկի մի քանի տեսակների, ներառյալ աշխատակիցների կողմից չարտոնված գործարքների կատարումը կամ գործառնական սխալների, վարչարարական կամ հաշվառման սխալների թույլ տալը, որոնք կարող են առաջանալ համակարգչային կամ հեռահաղորդակցման համակարգերից բխող

սխալներից, ինչպես նաև Արդշինբանկի միջոցով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկը:

Արդշինբանկն ունի գործառնական ռիսկերի կառավարման հատուկ ստորաբաժանում, որտեղ երեք տարուց ավելի է ներդրված է գործառնական ռիսկերի տվյալների հենք, և որը ներառում է կանխարգելման համակարգ՝ սահմանված սահմանաչափերի և «չորս աչքի» սկզբունքի կիրառմամբ: Ստորաբաժանումն իրականացնում է SS համակարգերի ամենօրյա մոնիթորինգ և SS համակարգերի խափանումների դեպքերի վերաբերյալ ղեկավարությանը ներկայացնում է ամսական հաշվետվություն, օրական կտրվածքով վերահսկում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման գործառնությունները: Արդշինբանկի այլ ստորաբաժանումների կողմից պարբերաբար իրականացվում են աշխատակազմի վերապատրաստման դասընթացներ, որոնք ուղղված են Արդշինբանկի ներքին ընթացակարգերի վերաբերյալ աշխատակիցների իրազեկմանը և Արդշինբանկի ընդհանուր գործառնական ռիսկի նվազեցմանը: Արդշինբանկն ունի նաև բանկային ռիսկերի համապարփակ ապահովագրություն (BBB) Brit Insurance ընկերության կողմից:

Ներքին աուդիտի ստորաբաժանումն իրականացնում է Արդշինբանկի գործունեության ֆինանսական և գործառնական վերահսկողություն: Արդշինբանկում Ներքին աուդիտի ծառայությունը հանդիսանում է անկախ ստորաբաժանում և համապատասխան հաշվետվություններ է ներկայացնում Վարչության նախագահին շաբաթական և Տնօրենների Խորհրդին՝ եռամսյակային պարբերականությամբ: Ներքին աուդիտի ծառայությունը կազմված է ութ անդամներից, և բոլորը, ներառյալ ծառայության ղեկավարը, նշանակվում են Տնօրենների Խորհրդի կողմից:

Բանկում Գործառնական ռիսկի կառավարման հիմնական սկզբունքներն են.

- ✓ պարտականությունների և պատասխանատվության հստակ տարանջատում
- ✓ իրավասությունների տարանջատում
- ✓ հաշվետվողականություն
- ✓ աշխատակիցների արդյունավետ մոտիվացիոն համակարգի առկայություն,
- ✓ գործընթացներում մարդկային գործոնի նվազեցման համար դրանց հնարավորինս ավտոմատացում,

✓ առավել մեծ կորուստ պարունակող գործառնական ռիսկերից բխող պատահարների ապահովագրություն:

Գործառնական ռիսկի կառավարման համար Բանկը կիրառում հետևյալ գործիքները.

- ✓ Բանկում առկա գործընթացների հստակ կանոնակարգում,
- ✓ գործարքների իրականացման գործընթացի, պայմանագրերի կնքման, գործողությունների (գործառնությունների) ձևակերպման տեխնոլոգիաների ստանդարտացում,
- ✓ գործառնական ռիսկ պարունակող պատահարների հավաքագրում միասնական տվյալների բազայում,
- ✓ գործառնական ռիսկի չափում՝ օգտագործելով OPVaR վիճակագրական մեթոդը,
- ✓ գործառնական ռիսկի ցուցանիշների սցենարային վերլուծություն և սթրես-թեսթավորում,
- ✓ գործառնական ռիսկի սահմանաչափերի սահմանում և հսկողություն,

Գործառնական ռիսկի հսկման նպատակով՝ Բանկը կիրառում է սահմանաչափերի հետևյալ կառուցվածքը.

- ✓ վարկային գործարքների հաստատման սահմանաչափեր,
- ✓ դրամարկղային գործառնությունների իրականացման սահմանաչափեր,
- ✓ ֆինանսական շուկաներում գործառնությունների սահմանաչափեր,
- ✓ վճարային գործիքներով իրականացվող գործառնությունների սահմանաչափեր,
- ✓ Մասնաճյուղերում կամ այլ սպասարկման կետերում կանխիկի սահմանաչափեր:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ռիսկը՝ Բանկի տեղեկատվական տեխնոլոգիաների ռիսկերի զսպմանը և չեզոքացմանն ուղղված միջոցառումները ներառում են տեղեկատվության գաղտնիության, անընդհատության և ամբողջականության պահպանման նպատակով իրականացվող աշխատանքներ, տեղեկատվության կրկնօրինակում և պահուստավորում, պահուստավորման լրացուցիչ անվտանգություն: Բանկի ներքին ցանցը և ծրագրային համակարգերը հուսալի պաշտպանված են արտաքին վտանգներից, միևնույն ժամանակ գործում է ներքին վերստուգման համակարգ՝ ապահովելով պաշտպանություն ներքին զեղծարարություններից:

Շուկայական ռիսկը՝ բանկի շահույթի կամ կապիտալի արժեքի փոփոխության ռիսկն է, կապված ֆինանսական գործիքների շուկայական գների՝ այդ թվում տոկոսադրույքների, արտարժույթային փոխարժեքների և ֆինանսական գործիքների գնային փոփոխությունների հետ: Շուկայական ռիսկի կառավարման նպատակով, բանկն առանձնացնում է տոկոսադրույքի ռիսկը, արտարժույթային ռիսկը և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկերի կառավարումն ենթադրում է Բանկի՝ այդ ռիսկին ենթարկվածության աստիճանի այնպիսի սահմաններում պահելը, որը հնարավորություն կտա Բանկին ստանալ ակնկալվող եկամտաբերության արդյունավետ մակարդակը:

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որը կարող է առաջանալ շուկայական գների, ներառյալ արտարժույթի փոխարժեքի, տոկոսադրույքների, վարկային ռիսկի մարժայի և արժեթղթերի գների տատանումների հետևանքով և ազդեցություն ունենալ եկամտի կամ պորտֆելների արժեքի վրա: Արդշինբանկի շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույքի և արտարժույթային ռիսկերը: Շուկայական ռիսկը ծագում է տոկոսադրույքի և արտարժույթի բաց դիրքերից, որոնք կախված են ընդհանուր և առանձին շուկայական տատանումներից, շուկայի գների անկայունության մակարդակից և արտարժույթի փոխարժեքների փոփոխությունից:

Տոկոսադրույքի ռիսկը՝ կապված է տոկոսադրույքների մակարդակի փոփոխության արդյունքում Բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա բացասական ազդեցություն հետ: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը կառավարում է տոկոսային ճեղքվածքները, սահմանում է ռիսկի հակվածության թույլատրելի մեծություններ և կիրառում է զսպման այլ գործիքներ:

30.09.2025թ.-ի դրությամբ տոկոսային ճեղքվածքի հիման վրա կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ 100 բազիսային կետով տոկոսադրույքների մակարդակի փոփոխության բացասական ազդեցությունը բանկի շահույթի վրա չի գերազանցի Բանկի կապիտալի 1%-ը:

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է շուկայական տոկոսադրույքների հնարավոր փոփոխություններից, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ Արդշինբանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների արժեքի վրա: Այս ռիսկը կարող է առաջանալ ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների անհամապատասխանությունից, ինչպես նաև այդ ակտիվների և պարտավորությունների վերաարժևորման առանձնահատկություններից: Արդշինբանկն իրականացնում է պորտֆելի և

ենթապորտֆելի «value at risk» («VaR») գնահատում, ինչպես նաև տոկոսադրույքի և իրացվելիության ռիսկերի պարբերական սթրես-թեստեր:

Արդշինբանկը կառավարում է տոկոսադրույքի ռիսկը՝ պահպանելով ֆինանսական ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների և ֆիքսված ու լողացող տոկոսադրույքով վարկերի միջև համապատասխան հարաբերակցության պահանջը: Ռիսկերի կառավարման տնօրինությունն իրականացնում է Արդշինբանկի ընթացիկ ֆինանսական ցուցանիշների մոնիթորինգ, գնահատում է Արդշինբանկի զգայունությունը տոկոսադրույքների փոփոխություններին և դրանց ազդեցությունը Արդշինբանկի շահութաբերության վրա:

Արդշինբանկի հաճախորդներին տրամադրվող վարկատեսակների որոշակի մասը պարունակում է դրույթ, որը հնարավորություն է տալիս Արդշինբանկին վերանայել վարկի տոկոսադրույքը տոկոսադրույքների անբարենպաստ տատանումների դեպքում՝ դրանով իսկ նվազեցնելով Արդշինբանկի ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին:

Բանկի ղեկավարությունը գնահատում է, որ Արդշինբանկի տոկոսադրույքների մարժաները ապահովում են ողջամիտ միջակայք՝ տոկոսադրույքի հնարավոր բացասական տատանումների ազդեցությունը մեղմելու համար:

Գնային ռիսկը՝ կապված է շուկայական գների փոփոխության արդյունքում Բանկի ակտիվների և պարտավորությունների՝ գնային ռիսկ պարունակող գործիքների գնային փոփոխության և դրանց հետևանքով Բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա բացասական ազդեցություն հետ: Այս ռիսկի զսպման նպատակով, բանկը կառավարում է ռիսկի հակվածության թույլատրելի մեծությունը, կիրառում է ռիսկերի զսպման համապատասխան գործիքակազմ, այդ թվում սահմանելով ծավալային ու որակական սահմանափակումներ:

30.09.2025թ.-ի դրությամբ շուկայական տոկոսադրույքների՝ 100 բազիսային կետով փոփոխվելու դեպքում, իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներից ակնկալվող գնային կորուստները չեն գերազանցի կապիտալի 1%-ը:

Օրենսդրական դաշտի փոփոխություն ռիսկ՝ կապված է օրենսդրական դաշտի փոփոխության արդյունքում թողարկողի կապիտալի և/կամ շահույթի վրա բացասական ազդեցության հետ: Թողարկողը գործում է ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածում: Օրենսդրական դաշտի փոփոխությունները, ներառյալ բանկերի նկատմամբ կրառվող

տնտեսական նորմատիվների հնարավոր խստացումները, կարող են իրենց ազդեցությունը ունենալ թողարկողի շահութաբերությա վրա:

Համբավի ռիսկ՝ Բանկի վստահության պահպանման և մասնակիցների, վարկառուների, ներդրողների և այլ հաճախորդների, ինչպես նաև այլ հետաքրքրված անձանց հետ փոխհարաբերություններում հեղինակության նվազման հետևանքով՝ կորուստների առաջացման ռիսկ:

Անհամապատասխանության (non-compliance) ռիսկ՝ Օրենքների, կանոնակարգերի, համաձայնագրերի, ներքին կանոնների խախտման կամ դրանց անհամապատասխանության արդյունքում կորուստ կրելու հավանականություն: Բանկը ստանձնում է համապատասխանության ապահովման բարձր մակարդակի պատասխանատվություն կապված իրավական և վերահսկողական, ներքին իրավական ակտերի պարտավորությունների, էթիկական և կորպորատիվ կառավարման սկզբունքների հետ և սահմանում է անհամապատասխանության զրոյական սկզբունք կոռուպցիայի, շահերի բախման, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարին ուղղված պահանջների էական խախտումների դեպքերի նկատմամբ:

Արտարժույթային ռիսկ՝ կապված է արժույթային փոխարժեքների փոփոխության արդյունքում Բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա բացասական ազդեցություն հետ: Հաշվի առնելով Հայաստանի տնտեսության դոլարիզացիայի մակարդակը՝ Արդշինբանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների մեծ մասը արտահայտված է ԱՄՆ դոլարով, ինչի հետևանքով Արդշինբանկը ենթարկվում է արտարժույթային ռիսկի, երբ արտարժույթի փոխարժեքների տատանումները ազդում են վերջինիս ֆինանսական դիրքի և դրամական հոսքերի վրա: Բանկն այս ռիսկը զսպելու համար իրականացնում է ակտիվների, պարտավորությունների և այլ արտահաշվեկշռային հոդվածների գծով արժույթային ճեղքվածքի կառավարման հավասարակշռված և ցածր ռիսկային քաղաքականություն:

30.09.2025թ.-ի դրությամբ ՀՀ դրամի արժեզրկումը արտարժույթների նկատմամբ նույնիսկ 20%-ի չափով, չի կարող Բանկի կապիտալի վրա 1.7%-ից ավել բացասական ազդեցություն ունենալ:

Աշխարհաքաղաքական ռիսկ՝ աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ներքաղաքական իրավիճակի անբարենիսաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է

առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի վրա, որոնք հետևանք, Բանկի ակտիվների որակի վրա:

Այլ ռիսկեր՝ բացի վերոնշյալ ռիսկերից կան նաև այլ ռիսկեր, որոնց առնչվում է Բանկը՝ շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը, աշխարհաքաղաքական ռիսկը և այլն:

3.3. Տեղեկատվություն բանկի մասին

3.3.1. Բանկի անվանումը և կազմակերպատիրավական ձևը

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Արդյունաբերաշինարարական բանկ» բաց բաժնետիրական ընկերություն

ռուսերեն՝ Открытое акционерное общество «Промышленно-строительный банк»

անգլերեն՝ «Industrial Construction Bank» open joint stock company

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝


հայերեն՝ «Արդշինբանկ» ԲԲԸ

ռուսերեն՝ ОАО «Ардшинбанк»

անգլերեն՝ «Ardshinbank» OJSC

«Արդշինբանկ» ԲԲԸ-ն գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն և վերջինիս գործունեությունը կարգավորվում է ՀՀ ԿԲ կողմից:

Բանկի ապրանքային նշանն է՝





3.3.2. Բանկի պետական գրանցումը և գործունեության վայրը.

Բանկի գտնվելու վայրն է Գրիգոր Լուսավորչի 13 և 13/1, Երևան 0015, ՀՀ:

Բանկի պետական գրանցման համարն է՝ 83:

3.3.3. Ստեղծման տվյալներ.

«Արդշինբանկ» ՓԲԸ-ն (25.02.2003 թվականից մինչև 05.11.2014թ. անվանափոխությունը՝ «Արդշինինվեսթբանկ» ՓԲԸ) գրանցվել է 2003թ.-ի փետրվարի 25-ին՝ ՀՀ օրենսդրության համաձայն: 2003թ. ձեռք է բերել 80 տարվա պատմություն ունեցող և տնտեսության ճյուղերի վարկավորման ուղղությամբ մասնագիտացած «Արդշինբանկ» ԲԲԸ ակտիվների և պարտավորությունների զգալի մասը և մասնաճյուղային ցանցը (24 մասնաճյուղ): 2003թ. նոյեմբերին ձեռք է բերել «Հայագրոբանկ» ԲԲԸ բիզնեսի հիմնական մասն իր ենթակառուցվածքների հետ միասին (35 մասնաճյուղ): 2017 թվականի հունվարի 13-ին

օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել է «Արդշինբանկ» ՓԲԸ և «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ վերակազմակերպում՝ «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ն «Արդշինբանկ» ՓԲԸ-նը միացնելու միջոցով, որի արդյունքում «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի գործունեությունը դադարել է, իսկ «Արդշինբանկ» ՓԲԸ-ն պահպանել է իր գործունեությունը՝ նաև որպես «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի իրավահաջորդ: Բանկի հիմնական բաժնետերն է «Արինս Գրուպ» ՓԲԸ-ն, որին պատկանում են Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 98.918067%-ը:

Բանկը գրանցվել է ՀՀ ԿԲ կողմից 2003թ.-ի փետրվարի 25-ին: Բանկի պետական գրանցման վկայականի համարն է 0394: Նույն թվականի փետրվարի 27-ին Բանկին տրամադրվել է բանկային գործունեության թիվ 83 լիցենզիան:

2014 թվականի նոյեմբերի 5-ին «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն վերանվանվել է «Արդշինբանկ» ՓԲԸ:

3.3.4. Բանկի գտնվելու վայրը, կապի միջոցները.

Բանկի գտնվելու վայրն է՝ Գրիգոր Լուսավորչի 13 և 13/1, Երևան, 0015, ՀՀ

Կապի միջոցները՝

Հեռ.՝ (+37412) 22 22 22
 ֆաքս.՝ (+37410) 59 05 82
 Էլ. Փոստ՝ ashb@ardshinbank.am
 Կայք՝ www.ardshinbank.am

3.3.5. Բանկի մասնաճյուղերը և սպասարկման կետեր.

	Մասնաճյուղի անվանումը	Հասցե
1	Հաճախորդների սպասարկման վարչություն	ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 13
2	Աղասյան	ք. Երևան, Արուսյան 27
3	Արաբկիր	ք. Երևան, Կոմիտասի պող. 41
4	Արգիշտի	ք. Երևան, Էրեբունի 14/2
5	Բյուզանդ	ք. Երևան, Մաշտոցի 15/6
6	Դավթաշեն	ք. Երևան, Դավթաշեն, Տիգրան Պետրոսյան 51/1
7	Երազ	ք. Երևան, Ադոնցի 6, շինություն 334
8	Զվարթնոց	ք. Երևան, 'Զվարթնոց' Մ/ՕԿՀ 42
9	Էրեբունի	ք. Երևան, Տիգրանի Մեծի 24
10	Կասկադ	ք. Երևան, Թամանյան 1, տարածք 70
11	Կենտրոն	ք. Երևան, Պուշկինի 21/1

12	Կոմիտաս	ք. Երևան, Կոմիտաս 30
13	Մալաթիա	ք. Երևան, Սեբաստիայի 32
14	Մաշտոց	ք. Երևան, Շիրազի 38/1
15	Նալբանդյան	ք. Երեւան, Նալբանդյան փող. 116
16	Նոր Նորք	ք. Երևան, Նոր Նորք, Գայի պողոտա 12/10
17	Շենգավիթ	ք. Երևան, Գ. Նժդեհի 32
18	Ուրարտու	ք. Երևան, Խորենացի 26 Ա
19	Վարդանանց	ք. Երևան, Վարդանանց 27
20	Քանաքեռ	ք. Երեւան, Թբիլիսյան խճ., 43
21	Չարենց	ք. Երևան, Չարենց փ.141/3
22	Սեբաստիա	ք. Երևան, Զորավար Անդրանիկ փ 24/1
23	Տերյան	ք. Երևան, Տերյան փողոց 66
24	Գյուլբենկյան	ք. Երևան, Կոմիտասի պողոտա 3
25	Պարոնյան	ք. Երևան, Պարոնյան փողոց 42
26	Գարեգին Նժդեհ	ք. Երևան, Բագրատունյաց պողոտա 14
27	Դալմա	ք. Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 3
28	Հանրապետության Հրապարակ	ք. Երևան, Վազգեն Սարգսյան փողոց 9
29	Ավան	ք. Երևան, Իսահակյան թաղամաս 25/3
30	Աբովյան	ք. Աբովյան, Օգոստոսի 23 փողոց 1/2
31	Ալավերդի	ք. Ալավերդի, Զրավազանի 3ա
32	Ախուրյան	գ. Ախուրյան, Շիրակի խճուղի 1
33	Աշտարակ	ք.Աշտարակ, Ն. Սիսակյան 25/33
34	Ապարան	ք.Ապարան, Բաղրամյան 28
35	Արարատ	ք.Արարատ, Աղբյուր Սերոբի 8
36	Արթիկ	ք. Արթիկ, Ազատության Հրապարակ 1/8
37	Արմավիր	ք.Արմավիր, Հանրապետության 3
38	Արտաշատ	ք.Արտաշատ, Մարքսի 15
39	Արտաշատ 2	ք.Արտաշատ, Օգոստոսի 23 փ.89
40	Գյումրի	ք. Գյումրի, Գայի 7
41	Գորիս	ք. Գորիս, Գ. Տաթևացու 9
42	Դիլիջան	ք. Դիլիջան, Ա. Մյասնիկյանի 60
43	Եղեգնաձոր	ք. Եղեգնաձոր, Մոմիկի 3
44	Էջմիածին	ք. Վաղարշապատ, Նար-Դոսի 1
45	Թալին	ք. Թալին, Խանջյան 12
46	Իջևան	ք. Իջևան, Ա. Մելիքբեկյան 10
47	Լոռի	ք. Վանաձոր, Գրիգոր Լուսավորիչ փող. 54 բ
48	Կամո	ք.Գավառ, Զ. Անդրանիկի 30
49	Կապան	ք. Կապան, Մ. Տեր-Ստեփանյան 3
50	Կոտայք	ք. Աբովյան, Հատիսի փ.1/31

51	Հրազդան	ք. Հրազդան, Սպանդարյանի 5/1
52	Հրազդան 2	ք. Հրազդան, Մ. Բաղրամյան թաղ., Զորավար Անդրանիկի պող. թիվ 130
53	Մասիս	ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ 12
54	Մարտունի	ք. Մարտունի, Շահումյանի 5
55	Մեղրի	ք. Մեղրի, Գործարանային 1
56	Նաիրի	ք. Եղվարդ, Երևանյան 5
57	Նոյեմբերյան	ք. Նոյեմբերյան, Նոյեմբերի 29ի 1/1
58	Շիրակ	ք. Գյումրի, Սպանդարյան փողոց, թիվ 23
59	Զարենցավան	ք. Զարենցավան, Հ. Պարոնյանի 1
60	Ջերմուկ	ք. Ջերմուկ, Գործարանային 1/2
61	Սարդարապատ	Գյուղ Արմավիր, 1-ին փողոց, 42
62	Սևան	ք. Սևան, Խաղաղության 1
63	Սիսիան	ք. Սիսիան, Սիսական 21
64	Սպիտակ	ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան 6
65	Ստեփանավան	ք. Ստեփանավան, Սոս Սարգսյան 26
66	Վանաձոր	ք. Վանաձոր, Գ. Լուսավորչի 38
67	Վարդենիս	ք. Վարդենիս, Ռոմանի 65
68	Վաղարշապատ	ք. Վաղարշապատ, Մ. Մաշտոցի 28
69	Վեդի	ք. Վեդի, Արարատյան 58/2
70	Տաշիր	ք. Տաշիր, Երևանյան փող. Թաղ. 5, 1942.
71	Տավուշ	ք. Բերդ, Այգեստան 2
72	Քաջարան	ք. Քաջարան, Լեոնազործների 4

Բանկն ունի մեկ ներկայացուցչություն Փարիզում:

3.3.6. Նշանակալի դեպքեր.

Ստորև ներկայացված են մի քանի փաստեր Բանկի զարգացման ժամանակագրական կարևոր նշումներով՝

2007 թ. Կանոնադրական կապիտալի նշանակալից մասնակից դարձավ Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիան:

2008 թ. Բանկը դարձավ ՀՀ պետական միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի շուկայում գործակալ: Բանկին **Moody's** միջազգային վարկանշային գործակալության կողմից շնորհվել է տեղական արժույթային ավանդների չափանիշով տրվեց **Ba1**

երկարաժամկետ և **Not Prime** կարճաժամկետ, իսկ արտարժույթային ավանդների չափանիշով **Ba3** երկարաժամկետ և **Not Prime** կարճաժամկետ վարկանիշերը: Ֆինանսական կայունությունը («BFSR») գնահատվել է «D-»: Բոլոր վարկանիշերի հեռանկարները կայուն են:

2009 թ. **Moody's** վարկանիշային գործակալության կողմից վերանայվեց Բանկի վարկանիշը. տեղական արժույթային ավանդների չափանիշով տրվեց **Ba2** երկարաժամկետ և **Not Prime** կարճաժամկետ, իսկ արտարժույթային ավանդների չափանիշով **Ba3** երկարաժամկետ և **Not Prime** կարճաժամկետ վարկանիշերը: Ֆինանսական կայունությունը («BFSR») գնահատվել է «D-»: Բոլոր վարկանիշերի հեռանկարները կայուն են:

2010 թ. **Moody's** միջազգային վարկանիշային գործակալությունը անփոփոխ թողեց Բանկի վարկանիշը. տեղական արժույթային ավանդների չափանիշով պահպանվեց **Ba2** երկարաժամկետ և **Not Prime** կարճաժամկետ, իսկ արտարժույթային ավանդների չափանիշով **Ba3** երկարաժամկետ և **Not Prime** կարճաժամկետ վարկանիշերը: Ֆինանսական կայունությունը («BFSR») գնահատվել է «D-»: Բոլոր վարկանիշերի հեռանկարները կայուն են:

2011-2012 թթ. **Moody's** միջազգային վարկանիշային գործակալությունը անփոփոխ թողեց Բանկի վարկանիշը. տեղական արժույթային ավանդների չափանիշով պահպանվեց **Ba2** երկարաժամկետ և **Not Prime** կարճաժամկետ, իսկ արտարժույթային ավանդների չափանիշով **Ba3** երկարաժամկետ և **Not Prime** կարճաժամկետ վարկանիշերը: Ֆինանսական կայունությունը («BFSR») գնահատվել է «D-»: Բանկի վարկանիշերի հեռանկարները վերանայվեցին «բացասական»՝ պայմանավորված Հայաստանի հանրապետությանը շնորհիվ վարկանիշերի նվազման հետ:

2013 թ. **Moody's** միջազգային վարկանիշային գործակալությունը անփոփոխ թողեց Բանկի վարկանիշը. տեղական արժույթային ավանդների չափանիշով պահպանվեց **Ba2** երկարաժամկետ և **Not Prime** կարճաժամկետ, իսկ արտարժույթային ավանդների չափանիշով **Ba3** երկարաժամկետ և **Not Prime** կարճաժամկետ վարկանիշերը: Ֆինանսական կայունությունը («BFSR») գնահատվել է «D-»: Բանկի հեռանկարի գնահատականը բարելավվել է, գնահատվելով «կայուն»՝ նախկինում սահմանված «բացասական» գնահատականի փոխարեն:

2014 թ. **Moody's** միջազգային վարկանիշային գործակալությունը անփոփոխ թողեց Բանկի վարկանիշը. տեղական արժույթային ավանդների չափանիշով պահպանվեց **Ba2** երկարաժամկետ և **Not Prime** կարճաժամկետ, իսկ արտարժույթային ավանդների չափանիշով **Ba3** երկարաժամկետ և **Not Prime** կարճաժամկետ վարկանիշերը: Ֆինանսական կայունությունը («BFSR») գնահատվել է «D-»:

- 2015 թ. Moody's միջազգային վարկանիշային գործակալության կողմից Բանկին շնորհվեց հետևյալ վարկանիշերը. տեղական արժույթային ավանդների չափանիշով Ba3 երկարաժամկետ և Not Prime կարճաժամկետ, արտարժույթային ավանդների չափանիշով B1 երկարաժամկետ և Not Prime կարճաժամկետ, ոչ ստորադաս, չապահովված պարտատոմսերի գծով (արտարժույթ) Ba3, ելակետային վարկային գնահատման գծով Ba3, կոնտրագենտի ռիսկի գնահատման գծով Ba2(cr) վարկանիշերը: Ֆինանսական կայունությունը («BFSR») գնահատվել է «D-»:
- Fitch միջազգային վարկանշային կազմակերպությունը Բանկին շնորհեց արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի «B+» վարկանիշ՝ բացասական հեռանկարով, որը Հայաստանի Հանրապետության վարկանշային մակարդակին հավասար վարկանիշ է և հանդիսանում է մասնավոր կազմակերպության վարկանիշի գնահատման հնարավոր լավագույն ցուցանիշ:
- 2016 թ. «Ռեզիդենտ» Ֆինանսական Արդյունաբերական Կորպորացիան ձեռք բերեց «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ 100% բաժնետոմսերը՝ վերջինիս միակ բաժնետեր ռուսաստանյան «Գազպրոմբանկ» ԲԸ-ից, որից հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն սկսվեց Առէկսիմբանկի՝ Արդշինբանկին միացման գործընթացը, որը գրանցվեց 13.01.2017 թվականին:
- 2017 թ. Fitch միջազգային վարկանիշային գործակալությունը վերահաստատեց Արդշինբանկի արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի (Long-term Issuer Default Rating (IDR)) «B+» վարկանիշը: Միաժամանակ Բացասական կանխատեսումը վերանայվել է Կայունի:
- 2018 թ. Fitch միջազգային վարկանիշային գործակալությունը վերահաստատեց Արդշինբանկի արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի (Long-term Issuer Default Rating (IDR)) «B+» վարկանիշը:
- 2019 թ. Fitch միջազգային վարկանիշային գործակալությունը վերահաստատեց Արդշինբանկի արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի (Long-term Issuer Default Rating (IDR)) «B+» վարկանիշը:

2020 թ.	Fitch միջազգային վարկանիշային գործակալությունը վերահաստատեց Արդշինբանկի արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի (Long-term Issuer Default Rating (IDR)) «B+» վարկանիշը:
2021 թ.	Fitch միջազգային վարկանիշային գործակալությունը վերահաստատեց Արդշինբանկի արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի (Long-term Issuer Default Rating (IDR)) «B+» վարկանիշը:
2022 թ.	Fitch միջազգային վարկանիշային գործակալությունը շնորհեց Արդշինբանկի արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի (Long-term Issuer Default Rating (IDR)) «BB-» վարկանիշ կայուն հեռանկարով:
2024 թ.	Բանկի կանոնադրական կապիտալը համալրվել է 50 227 200 000 (հիսուն միլիարդ երկու հարյուր քսանյոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով՝ հասարակ բաժնետոմսերի տեսքով: Արդյունքում Բանկի կանոնադրական կապիտալը կազել է 102 454 400 000 (հիսուներկու հարյուր երկու միլիարդ երկու չորս հարյուր քսանյոթ հիսունչորս միլիոն երկու չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:
2024 թ.	Բանկը ձեռք է բերել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի (մինչև 29.11.2024թ. անվանափոխությունը՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ) 100 տոկոս բաժնետոմսերը:
2025 թ.	18.04.2025թ. «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն միացել է Բանկին, որի արդյունքում Բանկը հանդիսանում է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի իրավահաջորդ:
2025 թ.	Բանկի կանոնադրական կապիտալը համալրվել է 97 545 600 000 (ինսունյոթ միլիարդ հինգ հարյուր քառասունհինգ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Արդյունքում Բանկի կանոնադրական կապիտալը կազել է 200 000 000 000 (երկու հարյուր միլիարդ) ՀՀ դրամ:

3.3.7. Բանկի տնտեսական նորմատիվներ.

Բանկային գործունեության վերահսկման նպատակով՝ սահմանված են տնտեսական նորմատիվներ, որոնցով կարևորվում է նաև բանկերի իրացվելիությունը: Ստորև ներկայացվում են հիմնական տնտեսական նորմատիվները 2024-2025 թվականների համար:

Նորմատիվներ	ՀՀ ԿԲ սահմանած նորմատիվի թույլատրելի մեծություն	Նորմատիվի փաստացի մեծություն 30.09.2025	Նորմատիվի փաստացի մեծություն 31.12.2024
Ն1 (Ընդհանուր կապիտալի և ոռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն)	Նվազագույնը 11%	22.37%	22.20%
Ն2.1 (Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն)	Նվազագույնը 15%	36.51%	42.22%
Ն2.2 (Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն)	Նվազագույնը 60%	75.07%	75.43%
Ն3.1 (մեկ փոխառուի գծով ոռիսկի առավելագույն չափը)	Առավելագույնը 20%	13.53%	15.38%
Ն3.2 (խոշոր փոխառուների գծով ոռիսկի առավելագույն չափը)	Առավելագույնը 500%	95.78%	144.88%
Ն4.1 (բանկի հետ կապված մեկ անձի գծով ոռիսկի առավելագույն չափը)	Առավելագույնը 5%	0.49%	0.52%

3.4. Բիզնեսի նկարագիրը

3.4.1. Հիմնական գործունեությունը

Իր քաղաքականությունն իրականացնելիս Բանկն առաջնորդվում է գործադիր կառավարման կոլեգիալ սկզբունքներով: Հաճախորդների և գործընկերների, ինչպես նաև ղեկավարների և աշխատակիցների հետ հարաբերություններում Բանկն առաջնորդվում է իր կարգախոսով. «Մենք ուժեղ ենք միասին»: Բանկի գործունեության հիմնական սկզբունքն է փոխշահավետ և կայուն գործնական կապեր հաստատել հաճախորդների և գործընկերների հետ, մատուցել բանկային ծառայություններ, որոնք ուղղված են հաճախորդների պահանջմունքների առավելագույն բավարարմանը:

Բանկի առաքելությունն է՝

Նպաստել ազգային տնտեսության զարգացմանը, հանդիսանալ առաջին ընտրության բանկ և գործատու:

Բանկի տեսլականն է՝

- ✓ լինել ֆինանսական շուկայում առաջատար և արդիական բանկ, բիզնեսի և անհատների հետ կառուցելով կայուն երկարաժամկետ հարաբերություններ, բարձրորակ և համալիր ծառայությունների մատուցման միջոցով:

Բանկի արժեքներն են՝

- ✓ Վստահելիություն
- ✓ Որակ
- ✓ Հասանելիություն
- ✓ Արդիականություն
- ✓ Արդյունավետություն
- ✓ Պատասխանատվություն

3.4.2. Հիմնական շուկաները

Բանկի էական բիզնես ուղղություններն են

- ✓ Կորպորատիվ բիզնես ,
- ✓ ՓՄՁ բիզնես,
- ✓ Մանրածախ բիզնես,
- ✓ Ներդրումային բիզնես ,Փրայվիթ բանկինգ:

Նշված ուղղություններով Բանկի կողմից առաջարկվող հիմնական ծառայություններն են՝

- ✓ Հաշիվների բացում և սպասարկում,
- ✓ Ցպահանջ և ժամկետային ավանդների ներգրավում,
- ✓ Վճարային քարտերի թողարկումը և սպասարկումը,
- ✓ Արտարժույթային գործառնությունները,
- ✓ Ներբանկային, միջբանկային և միջազգային, այդ թվում նաև արագ համակարգերով փոխանցումները,
- ✓ Հեռահար բանկային ծառայությունները,

- ✓ Մանրածախ (Հիփոթեքային և սպառողական), ՄՓՄՁ և խոշոր կորպորատիվ բիզնեսի վարկավորում,

- ✓ Միջազգային առևտրային գործարքների ֆինանսավորումը (ակրեդիտիվ, երաշխիք):

Բանկի ակտիվների և պասիվների, իրացվելության կառավարման, ինչպես նաև ՀՀ ԿԲ նորմատիվային պահանջների ապահովման նպատակով Բանկն իրականացնում է նաև՝

- ✓ Ներդրումներ պարտատոմսերում

- ✓ Այլ կարճաժամկետ ներդրումներ (միջբանկային վարկեր, ավանդներ, ռեպո):

Բանկի կողմից նոր ծառայությունների առաջարկը, ինչպես նաև գործողների մշտական լավարկումը իրականացվում է ներքին (IFA) և արտաքին գործոնների (EFA) վերլուծության և համադրման արդյունքում:

Բանկի նոր առաջարկների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է Բանկի պաշտոնական կայք էջում, ինչպես նաև գլխավոր գրասենյակի և լայն մասնաճյուղային ցանցի սպասարկման սրահներում:

3.4.3. Մրցակցային դիրքը.

Հաջողությամբ իրագործելով իր հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսված նպատակները՝ նախորդ տարվա արդյունքներով - Բանկն ամրապնդել է իր դիրքերը որպես ՀՀ բանկային համակարգի առաջատար:

Հաշվետու տարվա ընթացքում տարեվերջի համեմատ Բանկի ակտիվները աճել են 153,152.5 մլն դրամով՝ 30.09.25թ. դրությամբ կազմելով 2,452,944.5 մլն դրամ: 30.09.25թ. դրությամբ ընդհանուր պարտավորությունները կազմել են 2,066,021.4 մլն դրամ՝ աճելով 89,153.2 մլն դրամով: Ընդհանուր ակտիվների 57.7%-ը կամ 1,414,162.0 մլն դրամը կազմել են հաճախորդներին տրված վարկերը:

30.09.25թ. դրությամբ պարտավորությունների ամենախոշոր տարրը իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցներն են՝ 75.1%: Վերջինս 31.12.2024թ. համեմատ աճել է 5.8%-ով՝ կազմելով 1,552,099.8 մլն դրամ: Ընդ որում, իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները աճել են 65,905.8 մլն դրամով, իսկ ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցները նվազել են 19,600.0 մլն դրամով:

2025թ.-ի 9 ամսվա արդյունքներով Բանկի զուտ շահույթը կազմել է 103,217.0 մլն դրամ, տոկոսային եկամուտները, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են

39.3%-ով՝ կազմելով 142,192.5 մլն դրամ, տոկոսային ծախսերը՝ 30.0%-ով՝ կազմելով 41,364.8 մլն դրամ:

Բանկի հիմնական մրցակցային առավելություններն են՝

Ֆինանսներ

- ✓ նշանակալի կապիտալ, որը թույլ է տալիս դիմակայել ներքին և արտաքին ռիսկերին,
- ✓ ռեսուրսների աղբյուրների դիվերսիֆիկացման բավարար մակարդակ,
- ✓ Բիզնեսի հիմնական ցուցանիշների (ակտիվներ, պորտֆելներ, ROE, CIR) դինամիկ աճ, հաստատուն դիրքեր,
- ✓ իրացվելիության բարձր մակարդակ,
- ✓ Միջազգային ֆինանսական կառույցների հետ արդյունավետ համագործակցություն և համագործակցության շրջանակներում ծրագրերի հետևողական իրականացում:

Բանկն համագործակցում է, Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկի (BSTDB), Գերմանահայկական հիմնադրամի (KfW, ADB, WB), ինչպես նաև այլ միջազգային ֆինանսական կազմակերպություններ հետ:

Հաճախորդներ, մարքեթինգ, պրոդուկտներ

- ✓ հուսալի, կայուն բրենդի առկայություն (Բանկի ընկալում որպես \$ֆինանսական հսկա!),
- ✓ Մասնաճյուղային լայն ցանց, 24/7 գործող կոմունիկացիոն կենտրոն
- ✓ Զարգացած մոբայլ վաճառքի և սպասարկման ուղի (ֆիզիկական անձանց համար)
- ✓ Հաճախորդների մեծ բազա, հաճախորդների վերաբերյալ կուտակված տեղեկատվության առկայություն (ռիսկերի կառավարման և մարքեթինգի համար)
- ✓ Ծառայությունների լայն ցանկ
- ✓ Զարգացած դիագնոստիկ և ինտերակտիվ վերահսկման համակարգերի առկայություն

Անձնակազմ, IT, ենթակառուցվածք

Հաճախորդների և գործընկերների հետ հարաբերությունները բացառապես կառուցվում են փոխշահավետության, փոխվստահության և բիզնես էթիկայի նորմերի հիման վրա: Նման մոդելում փոխհարաբերությունները դրված են շուկայական հիմքի վրա, կրում են պայմանագրային բնույթ, ինչպես նաև ենթադրում են հաճախորդի ժամանակի խնայում,

սպասարկման չափանիշների և որակի բարձրացում, բանկ-հաճախորդ բիզնեսի զարգացում: Բանկի գործունեության կարևորագույն սկզբունքներից է Բանկի աշխատակիցների նկատմամբ ղեկավարների կողմից արդարացի և հետևողական վերաբերմունքի ապահովումը: Կարևորելով համախմբված թիմային աշխատանքը՝ որպես առաջընթացի և զարգացման հիմնական գործոն, Բանկը միշտ գնահատում է իր յուրաքանչյուր աշխատակցի պոտենցիալը և կարողությունները, ստեղծում է խթանող և խաղաղ աշխատանքային պայմաններ, ներգրավում նոր, հեռանկարային կադրեր՝ օգտվելով մրցութային ընտրությունից: Աշխատանքի արդյունավետ կազմակերպման գործում Բանկն առաջնորդվում է նաև դինամիկ զարգացող տեղեկատվական տեխնոլոգիաների քաղաքականության իրականացման սկզբունքով: Վերջինս ենթադրում է առաջավոր համակարգչային տեխնիկայի, ժամանակակից տեխնոլոգիաների, ներբանկային և միջբանկային ավտոմատացված համակարգերի, միջազգային վճարային ու ֆինանսական համակարգերի արդյունավետ և նպատակային կիրառում, գործընթացների աշխատատարության, ծախսատարության և գործառնական ռիսկերի նվազեցում:

Իր կողմից առաջարկվող ծառայությունները բնակչության լայն զանգվածներին հասցնելու նպատակով՝ Բանկը կարևորում է մասնաճյուղային լայն ցանցի առկայությունը: 30.09.2025թ. դրությամբ բանկի մասնաճյուղերի քանակը կազմում է 72 (յոթանասուններկու):

Տնտեսության գլոբալացման և տեխնոլոգիական առաջընթացի հետ կապված առավել կարևորվում է գործուն ներքին վերահսկողության համակարգի մշտական լավարկումը՝ զեղծարարություններից և անփութություններից խուսափելու համար: Հուսալի ներքին հսկողության համակարգը հանդիսանում է Բանկի առողջ և ապահով գործունեության երաշխիքը: Ներքին վերահսկողության համակարգը կոչված է վերահսկելու՝ արդյոք ֆինանսական և գործառնական տեղեկատվությունը ճշգրիտ է և հուսալի, արդյոք հնարավոր ռիսկերը բացահայտված և հասցված են նվազագույնի, արդյոք Բանկը հետևողական է ՀՀ ԿԲ՝ բանկային գործունեությունը կանոնակարգող ընթացակարգերի, այլ ներքին իրավական ակտերի պահանջներին, արդյոք ապահովված է Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող աշխատանքների բավարար մակարդակ, արդյոք ռեսուրսներն օգտագործվում են արդյունավետ և արդյոք Բանկի կողմից սահմանված խնդիրները ստանում են արդյունավետ լուծումներ: Ներքին վերահսկողության համակարգը գործում է անկախ և օբյեկտիվության սկզբունքի հիման վրա:

Բանկի ղեկավարությունը մշտապես մեծ ուշադրություն է դարձնում առկա խնդիրների լուծման որոշումների կայացման կոլեգիալության սկզբունքին, որի իրագործման համար Բանկում գործում են հատուկ մասնագիտացված կոմիտեներ, որոնց գործունեությունը նպատակաուղղված է Բանկի գործունեության արդյունավետության բարձրացմանը, ընթացիկ և ռազմավարական նպատակների իրագործման ապահովմանն ու Բանկի գործունեության հետ առնչվող ռիսկերի արդյունավետ կառավարմանը: Բանկի հեռանկարային զարգացման առաջանցիկ տեմպերի ապահովման, ներդրումային ծրագրերի գնահատման առումով իր ուրույն տեղն ունի ռիսկերի արդյունավետ կառավարման համակարգը, որը պարբերաբար վերանայվում է՝ ելնելով արտաքին և ներքին միջավայրում տեղի ունեցող փոփոխություններից, շուկայում առկա միտումներից և մրցակցության մակարդակից: Ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունն ապահովելու նպատակով Բանկում իրականացվում է հնարավոր ռիսկերի բացահայտում, քանակական գնահատում, մշակվում են համապատասխան միջոցառումներ՝ կանխելու կամ նվազագույնի հասցնելու հնարավոր ռիսկերի ազդեցությունը Բանկի ընթացիկ գործունեության վրա՝ ապահովելով Բանկի բնականոն գործունեությունն ու ֆինանսական կայունությունը:

3.5. Բանկի կառուցվածքը

3.5.1. Բանկի կազմակերպական կառուցվածքը

Բանկի կազմակերպական կառուցվածքը ներկայացված է սույն ծրագրային ազդագրի Հավելված 1-ում:

3.5.2. Բանկի խմբի կառուցվածքը

Բանկի նշանակալից /ձայնի իրավունքով բաժնետոմսերի տիրապետող/ բաժնետերն է «Արինս Գրուպ» ՍՊԸ-ն, վերջինս մասնակցություն ունի նաև հետևյալ ընկերություններում.

«Արինս Մենեջմենթ» ՍՊԸ, ՄԲՑ» ՓԲԸ, «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ, «Փրայմ Գրուպ» ՍՊԸ, «Կապիտալ ՎԻՊ» ՍՊԸ, «Ավերս Կապիտալ» ՍՊԸ, «Քարիատ Մեքենա» ՓԲԸ, «Արդշին Դեվելոպմենթ» ՍՊԸ, «Արմավ-1» ՍՊԸ:

3.6. Զարգացման վերջին միջուկները

Մոտակա տարիների ընթացքում Բանկը նախատեսում է ձևավորել բարձրորակ և եկամտաբեր վարկային ակտիվներ, ապահովելով հեռանկարային զարգացման ծրագրով

նախատեսված նպատակային ցուցանիշները, աշխատանքներ տանելով առաջարկվող վարկատեսակների հետագա ընդլայնման և մրցունակության ապահովման ուղղությամբ, ներգրավել տնտեսության հեռանկարային և շահութաբեր ճյուղերում գործող նոր հաճախորդներ, ապահովել վարկավորման ողջ գործընթացի արդյունավետ կառավարումը: Պահպանելով կորպորատիվ վարկավորման շուկայում ձեռք բերված դիրքերը՝ Բանկը կմեծացնի նաև փոքր և միջին բիզնեսի վարկավորման մեջ մասնակցության չափերը՝ շեշտը դնելով դեպի տնտեսության առաջնային և շահութաբեր ճյուղեր վարկային ակտիվների ուղղորդման և վարկավորման կանոնակարգման ու սպասարկման որակի անընդհատ բարելավման վրա:

Բանկը մեծ ուշադրություն է դարձնում ոչ վարկային պրոդուկտների զարգացմանը՝ քարտային բիզնես, փոխանցումներ և այլն:


Բանկի գործունեության թիրախային ուղղություն է հանդիսանում նաև ներդրումային քաղաքականությունը: Բանկի ներդրումային պորտֆելն առաջիկա տարիներին հանդիսանալու է ինչպես իրացվելիության ապահովման միջոց, այնպես էլ եկամուտների աղբյուրների դիվերսիֆիկացման աղբյուր: Բանկը կշարունակի ներդրումներ իրականացնել պետական պարտատոմսերում, ինչպես նաև կարճաժամկետ միջոցների տեղաբաշխում և ներգրավում կարճաժամկետ գործիքների միջոցով:

3.7. Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները՝

- ✓ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը /այսուհետ՝ Ժողով/,
- ✓ Բանկի խորհուրդը /այսուհետ՝ Խորհուրդ/,
- ✓ Բանկի կոլեգիալ գործադիր մարմինը՝ Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն)
- ✓ Բանկի միանձնյա գործադիր մարմինը՝ Վարչության նախագահը (այսուհետ՝ Վարչության նախագահ):

Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը ներկայացված է ստորև.



↓

**Միանձնյա գործադիր
մարմին՝ Վարչության Նախագահ**

3.7.1. Բանկի կանոնադրությամբ Բանկի կառավարման մարմիններին վերապահված իրավասությունները

Բանկի Ժողովը

Ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է

Ժողովի իրավասություններն են՝

1. Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,
2. Բանկի վերակազմակերպումը.
3. Բանկի լուծարումը.
4. ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը
5. Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ընդհանուր ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.
6. հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.
7. Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը՝ տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով, լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքների հաստատումը.

8. Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսերի մարման միջոցով կառնանդրական հիմնադրամի նվազեցման կամ տվյալ բաժնետոմսերի իրացման մասին որոշման ընդունումը.

9. Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

10. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

11. Կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

12. Ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը.

13. Հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

14. Ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցման և բաժնետերերին ներկայացվելիք տեղեկությունների ու նյութերի տրամադրման ձևի, այդ թվում՝ նաև զանգվածային լրատվության այն միջոցի, որում պետք է հրապարակվի ծանուցումը, սահմանումը.

15. Բաժնետոմսերի համախումբն ու բաժանումը, մեկ տեսակի և/կամ դասի բաժնետոմսերը մեկ այլ տեսակի և/կամ դասի փոխարկումը.

16. Կանոնադրության 16.5 կետով նախատեսված՝ շահագրգռվածության առկայությամբ գործարքների կատարման մասին որոշումների ընդունումը.

17. Կանոնադրության 15.3 կետով նախատեսված խոշոր գործարքների կատարման մասին որոշումների ընդունումը.

18. Կանոնադրությամբ սահմանված դեպքերում Բանկի բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը.

19. Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը.

20. Դուստր և կախյալ ընկերությունների ստեղծման և կամ դուստր և կախյալ ընկերություններին մասնակցության մասին որոշումների հաստատումը, եթե տվյալ ֆինանսական տարում կնքված նման գործարքի կամ գործարքների ընդհանուր գինը գերազանցում է Բնակի ընդհանուր կապտալի 10 տոկոսը.

21. Բանկի խորհրդի գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերի հաստատումը.

22. Զուտ շահույթից ձևավորված հիմնադրամների միջև միջոցների վերաբաշխումը.

23. Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենքով սահմանված որոշումների ընդունումը.

24. ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը.

Վերը նշված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է բանկի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմնին կամ ղեկավարին բացառությամբ 20-րդ կետում նշված հարցի, որով որոշումների ընդունումն Ընդհանուր ժողովի որոշմամբ կամ Ընդհանուր ժողովի որոշմամբ հաստատված ներքին իրավական ակտով կարող է փոխանցվել Խորհրդին:

Բանկի Խորհուրդը

Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը օրենքով և Բանկի կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

Խորհրդի իրավասություններն են՝

1. Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ Բանկի հեռանկարային ծրագրի հաստատումը

2. Ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.

3. Վարչության նախագահի, նրա տեղակալների, գլխավոր հաշվապահի և Վարչության այլ անդամների նշանակումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,

4. Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և անդամների նշանակումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը, ներքին աուդիտի տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը.

5. Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.

6. Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

7. Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը.

8. Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժինների ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, ինչպես նաև բանկի բաժնեմասով միջանկյալ շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

9. Շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը.

10. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ընդհանուր ժողովին ներկայացումը.

11. Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը Ընդհանուր ժողովի հաստատմանը.

12. Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

13. Անհրաժեշտության դեպքում՝ բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերաացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.

14. Բանկի կողմից օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող, ինչպես նաև բանկի կառավարման և ներքին հսկողության մարմինների գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերի ընդունումը.

15. Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների ու հիմնարկների և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծման (գործունեության դադարեցման) մասին որոշումների ընդունումը.

16. Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների ու հիմնարկների և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, դրանցում փոփոխությունների և լրացումների կատարումը

17. Ընդհանուր ժողովին Կանոնադրության 25.1 կետի 2), 9), 19), և 20) ենթակետերում թվարկված հարցերի ներկայացումը.

18. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը

19. Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

20. Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.

21. Դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծման կամ դուստր և կախյալ ընկերություններին մասնակցության մասին որոշումների հաստատումը, եթե տվյալ ֆինանսական տարում կնքված նման գործարքի կամ գործարքների ընդհանուր գինը չի գերազանցում Բանկի Ընդհանուր կապիտալի 10%.

22. Առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը կամ դրանցում մասնակցությունը.

23. Խորհրդին կից ժամանակավոր և մշտական կոմիտեների (հանձնաժողովների) ստեղծումը և անդամների նշանակումը, դրանց ձևավորումը և գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերի ընդունումը

24. Կենտրոնական բանկի հետ բանկային օրենսդրության, տնտեսական նորմատիվների խախտումների վերացման վերաբերյալ պայմանագրերի կնքումը.

25. Կենտրոնական բանկի կողմից Բանկին արված հանձնարարականների կատարման ուղղությամբ որոշումների ընդունումը.

26. Կանոնադրությամբ սահմանված կարգով և դեպքերում՝ գույքի, այդ թվում՝ բաժնետոմսերի և այլ արժեթղթերի, շուկայական արժեքի որոշումը

27. Գործարքներով Բանկի օգտին սահմանած տոկոսների և (կամ) տուժանքի (տույժ և տուգանք) հաշվեգրումը կասեցնելու և դադարեցնելու, դրանք ներելու (զիջելու) մասին որոշումների ընդունման կարգի հաստատումը.

28. Կանոնադրության 14.2 կետով նախատեսված՝ Բանկի և նրա հետ կապված անձի միջև գործարքների կնքման հաստատումը՝ Վարչության նախագահի ներկայացմամբ.

29. Կանոնադրության 16.3 կետով նախատեսված՝ շահագրգռվածության առկայությամբ գործարքների կատարման մասին որոշումների ընդունումը.

30. Կանոնադրության 15.4 կետով նախատեսված՝ խոշոր գործարքների կատարման մասին որոշումների ընդունումը.

31. Բանկի առևտրային գաղտնիք կազմող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկի հաստատումը.

32. Խորհրդի նախագահի ընտրությունը.

33. ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ, Խորհրդի կանոնակարգով և այլ ներքին իրավական ակտերով նախատեսված այլ որոշումների ընդունումը:

Եթե խորհրդին ներկայացվող հաշվետվություններում բացահայտվում են ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի խախտումներ, ապա խորհուրդը պարտավոր է ձեռնարկել այդ խախտումների վերացման և հետագայում չկրկնման ուղղությամբ:

Առնվազն տարին մեկ անգամ Խորհուրդը պետք է քննարկի Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկի և անհրաժեշտության դեպքում վերանայի Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, կարգերն ու ներքին իրավական այլ ակտեր:

Առնվազն եռամսյակը մեկ անգամ Խորհուրդը պետք է քննարկի Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, Վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի հաշվետվությունները՝ իր սահմանած կարգով և ձևով:

Գործադիր մարմինը

1. Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է վարչության նախագահը և վարչությունը: Վարչության նախագահը (վարչության անդամները) նշանակվում է (են) խորհրդի կողմից, իսկ վարչության նախագահի տեղակալները և գլխավոր հաշվապահը՝ խորհրդի կողմից վարչության նախագահի ներկայացմամբ: Վարչության կառուցվածքում պարտադիր ընդգրկվում են Բանկի վարչության նախագահը, նրա տեղակալը (տեղակալները), գլխավոր հաշվապահը:

2. Վարչությունը գործում է կանոնադրության, ինչպես նաև Խորհրդի կողմից հաստատված Բանկի ներքին իրավական ակտերի հիման վրա, որոնք պետք է սահմանեն Վարչության նիստերի հրավիրման ու անցկացման ժամկետներն ու կարգը, ինչպես նաև նրա կողմից որոշումների ընդունման, այդ թվում նաև՝ իր լիազորությունների սահմաններում ներքին իրավական ակտերի հաստատման կարգը:

Բանկի վարչությունը

ա) կազմակերպում և իրականացնում է Բանկի օպերատիվ գործունեության ղեկավարումը և ապահովում է Ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը:

բ) սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների միջնորդավճարների չափերը, ներգրավող ավանդների և տրամադրվող վարկերի տոկոսադրույքները:

գ) քննարկում է վերստուգումների, ստուգումների նյութերը, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները:

Վարչության իրավասությունները

Վարչությունը՝

1. Նախապես քննարկում է և Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, հիմնարկների և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունը - Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը.
2. տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները.
3. Իր իրավասությունների սահմաններում ընդունում է որոշումներ, տալիս է հանձնարարություններ և հսկում դրանց կատարումը.
4. Լուծում Բանկի ներքին աշխատանքային կանոնակարգերով իրեն վերապահված հարցերը.
5. Սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները, վարկերի, ավանդների և այլ տոկոսադրույքները, բացառությամբ անհատական սակագների և պայմանագրային բնույթ կրող տոկոսադրույքների.
6. Նախապես քննարկում է բանկի հեռանկարային զարգացման ծրագիրը.
7. Իր իրավասությունների սահմաններում կազմավորում է մշտապես գործող աշխատանքային, խորհրդակցական և այլ տիպի մարմիններ.
8. Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով քննարկում է վարկերի տրամադրման հարցերը.
9. Քննարկում է մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ ստեղծելու, դրանց գործունեությունը դադարեցնելու նպատակահարմարության հարցերը.
10. Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի շրջանակներում հաստատում է մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկների գործունեության եռամսյակային, տարեկան ծախսերի նախահաշիվներն ու դրանց կատարողականները.
11. Հաստատում է Բանկի ընթացիկ գործունեությունը կանոնակարգող կարգերի, կանոնակարգերի, ընթացակարգերի, մեթոդական ցուցումների և այլ աշխատանքային

փաստաթղթերը, բացառությամբ այն փաստաթղթերի, որոնք համաձայն Կանոնադրության, ենթակա են Խորհրդի հաստատմանը.

12. Ապահովում է Ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը.

13. Լուծում է օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոնադրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված այլ հարցեր:

Վարչության նախագահի իրավասությունները

Վարչության նախագահը՝

1. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կարգադրություններ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

2. Բանկի աշխատակիցների, բացառությամբ Խորհրդի կողմից նշանակվող ղեկավարների հետ կնքում է աշխատանքային պայմանագրեր կամ լիազորում է դրանց մի մասի կնքումը Բանկի այլ ղեկավարներին ու ՀՀ աշխատանքային օրենսգրքի իմաստով հանդես է գալիս որպես գործատուի ներկայացուցիչ.

3. Լուծում է բանկի աշխատակիցների, բացառությամբ Խորհրդի կողմից նշանակվող ղեկավարների հետ կնքված աշխատանքային պայմանագրերը կան լիազորում է դրանց մի մասի լուծումը Բանկի այլ ղեկավարներին.

4. Խորհրդի նշանակմանն է ներկայացնում Վարչության նախագահի տեղակալների, գլխավոր հաշվապահի և Վարչության անդամների այլ թեկնածուներին.

5. Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով այլ բանկերում բացում է դրամային և արտարժույթային թղթակցային և (կամ) այլ հաշիվներ.

6. Ստորագրում և իրավասու մարմիններին է ներկայացնում Բանկի ֆինանսական, վիճակագրական, հարկային և այլ բնույթի հաշվետվություններ, իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթեր.

7. Ստորագրում է Վարչության որոշումները.

8. Կազմակերպում և հսկում է Վարչության որոշումների կատարումը.

9. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կանոնադրության 14.2 կետով սահմանված՝ Բանկի և նրա հետ կապված անձանց միջև գործարքները.

10. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների վարձատրության պայմանները.

11. Բանկի աշխատակիցների, բացառությամբ Խորհրդի կողմից նշանակվող ղեկավարների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

12. Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով նշանակում է Բանկի մասնաճյուղերի կառավարիչներին, ներկայացուցչությունների, հիմնարկների, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների և անմիջական իր ենթակայության տակ աշխատող ղեկավարներին և վաղաժամկետ դադարեցնում է նրանց լիազորությունները.

13. Իր իրավասության սահմաններում կազմավորում է ժամանակավորապես գործող հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր, խորհրդակցական և այլ տիպի մարմիններ.

14. Բանկի համապատասխան ստորաբաժանման կամ կոլեգյալ մարմնի հիմնավոր առաջարկությամբ սահմանում է ծառայությունների անհատական սակագները և պայմանագրային բնույթ կրող տոկոսադրույքները.

15. Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով Խորհրդի հաստատած Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի շրջանակներում հաստատում է Բանկի աշխատատեղերը.

16. Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով տրամադրում է վարկեր.

17. Խորհրդի կողմից նշանակված ղեկավարներին ու այլ աշխատակիցներին ժամանակավորապես արգելում է կատարել իրենց աշխատանքային պարտականությունները՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով Խորհրդին.

18. Իրականացնում է Կանոնադրությամբ, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված՝ Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:

Վարչության նախագահը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Բանկը ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում, Բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է բանկի անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

Վարչության նախագահը հաշվետու է Ընդհանուր ժողովին և Խորհուրդին:

Վարչության նախագահի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան փոխարինող անձին, եթե վերջինս համապատասխանում է Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

3.7.2. Տեղեկություններ Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ

Բանկի խորհրդի անդամները

1. Բանկի խորհրդի նախագահ՝ Կարեն Սաֆարյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները և պարտականությունները	Սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, «Արդշինբանկ» ԲԲԸ կանոնադրությամբ և խորհրդի կանոնակարգով
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	

2. Խորհրդի անդամ՝ Տիգրան Սարգսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները և պարտականությունները	Սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, «Արդշինբանկ» ԲԲԸ կանոնադրությամբ և խորհրդի կանոնակարգով
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Եվրասիական զարգացման բանկի Կառավարման խորհրդի նախագահի տեղակալ:

3. Խորհրդի անդամ՝ Արամ Անդրեասյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները և պարտականությունները	Սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, «Արդշինբանկ» ԲԲԸ կանոնադրությամբ և խորհրդի կանոնակարգով
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	

4. Խորհրդի անդամ՝ Վաչե Գաբրիելյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները և պարտականությունները	Սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, «Արդշինբանկ» ԲԲԸ կանոնադրությամբ և խորհրդի կանոնակարգով
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Հայաստանի Ամերիկյան համալսարան – դասախոս, «Արմենիա Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ – խորհրդի նախագահ

5. Խորհրդի անդամ՝ Ալեքսանդր Ֆոն Գլայխ

Բնակության վայրը	Գերմանիա, ք. Համբուրգ
Իրավասությունները և պարտականությունները	Սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, «Արդշինբանկ» ԲԲԸ կանոնադրությամբ և Խորհրդի կանոնակարգով
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	«Ուզպրոմսպրոյբանկ» Տնօրենների խորհրդի անդամ, Ուզբեկստան “TOO GlobalExpert Development Group” Տնօրենների խորհրդի անդամ, Ղազախստան

Ժողովի կողմից Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են եթե՝

ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել բանկի Խորհրդի անդամ (բանկի ղեկավար),

գ) մեկ տարվա ընթացքում բացակայել է Խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից (իրական ժամանակի ռեժիմով և հեռակա մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն),

դ) օրենքով սահմանված կարգով որակագրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են՝

ա) իր դիմումի համաձայն.

բ) մահանալու դեպքում.

գ) բանկի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում:

Բանկի Վարչության անդամները

1. Բանկի Վարչության նախագահ՝ Արտակ Անանյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները և պարտականությունները	Սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, «Արդշինբանկ» ԲԲԸ կանոնադրությամբ
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	«Արինս Մենեջմենթ» ՍՊԸ- գլխավոր տնօրեն

2. Վարչության նախագահի տեղակալ, Ներդրումային բիզնեսի տնօրեն՝ Դավիթ Սարգսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները և պարտականությունները	Ներդրումային բիզնեսի տնօրենը ղեկավարում է Բանկի Ներդրումային բիզնեսի ուղղությունը
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	«Արմենիա Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ, խորհրդի անդամ

3. Վարչության նախագահի տեղակալ, Փրայվիթ բանկինգի տնօրեն՝ Արթուր Գյուլագյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները և պարտականությունները	Փրայվիթ բանկինգի տնօրենը ղեկավարում է Փրայվիթ բանկինգի ուղղությունը
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	«Արմենիա Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ, խորհրդի անդամ

4. Վարչության անդամ, Կորպորատիվ բիզնեսի տնօրեն՝ Արմեն Գասպարյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները և պարտականությունները	Կորպորատիվ բիզնեսի տնօրենը ղեկավարում է Բանկի Կորպորատիվ բիզնեսի ուղղությունը
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	«ՄԲՑ» ՓԲԸ գլխավոր տնօրեն, «Արմենիա Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ, խորհրդի անդամ

5. Վարչության անդամ, Թվայնացման և տաղանդների կառավարման գծով տնօրեն՝ Հարություն Իսաիրյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները և պարտականությունները	Թվայնացման և տաղանդների կառավարման գծով տնօրենը ղեկավարում է Բանկի Թվայնացման և տաղանդների կառավարման ուղղությունը
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Գիտամանկավարժական գործունեություն, «Արմենիա Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ, խորհրդի անդամ

6. Վարչության անդամ, Մանրածախ բիզնեսի տնօրեն՝ Արտակ Խաչատրյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները և պարտականությունները	Մանրածախ բիզնեսի տնօրենը ղեկավարում է Բանկի Մանրածախ բիզնեսի ուղղությունը
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	«Արմենիա Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ, խորհրդի անդամ

7. Վարչության անդամ, ՓՄՁ բիզնեսի տնօրեն՝ Միհրան Մուրադյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները և պարտականությունները	ՓՄՁ բիզնեսի տնօրենը ղեկավարում է Բանկի ՓՄՁ բիզնեսի ուղղությունը
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Գյուղատնտեսություն, ծեղնարկատիրական գործունեություն, «Արմենիա Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ, խորհրդի անդամ

8. Վարչության անդամ, Ռիսկերի կառավարման տնօրեն՝ Լուսինե Ներսիսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները և պարտականությունները	Ռիսկերի կառավարման տնօրենը ղեկավարում է Բանկի Ռիսկերի կառավարման ուղղությունը
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	«Արմենիա Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ, խորհրդի անդամ

9. Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ՝ Արմինե Խաչատրյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները և պարտականությունները	Բանկի գլխավոր հաշվապահը կառավարում է և վերահսկում է Բանկի հաշվապահական ուղղությունը
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	

10. Վարչության անդամ, Իրավական հարցերի գծով տնօրեն՝ Ռուստամ Բադասյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները և պարտականությունները	Իրավական հարցերի գծով տնօրենը ղեկավարում է Բանկի իրավական հարցերի ուղղությունը
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	

11. Վարչության անդամ, Ֆինանսական տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Գարեգին Գևորգյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները և պարտականությունները	Բանկի Ֆինանսական տնօրենը ղեկավարում է Բանկի Ֆինանսական ուղղությունը
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	

Ազդագրի ներկայացման պահին բանկի ակտիվների 10 և ավելի տոկոսը որևիցե մասնաճյուղում կենտրոնացված չէ:

Բանկի և նրա կառավարմանը մասնակցող անձանց միջև ազդագրի ներկայացման պահի դրությամբ շահերի բախում չկա:

3.8. Հսկող անձինք

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով Բանկը գտնվում է ներքոնշյալ անձանց ուղղակի և անուղղակի հսկողության տակ՝

1. Ուղղակի հսկողություն իրականացնող անձինք են՝

✓ «Արինս Գրուպ» ՍՊԸ – ունի ուղղակի նշանակալից մասնակցություն Բանկի կապիտալում 98.918067% (1,483,771 հատ հասարակ բաժնետոմս),

2. Անուղղակի հսկողություն իրականացնող անձինք են՝

✓ Սաֆարյան Կարեն Սուրենի – ունի անուղղակի նշանակալից մասնակցություն («Արինս Գրուպ» ՍՊԸ-ի 100 % մասնակիցն է):

3.9. Տեղեկատվություն Բանկի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուրների և ծախսերի մասին

1) Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Բանկի 2023-2024թթ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները անկախ աուդիտորական եզրակացություններով ներառված են Ազդագրում:

Ցանկության դեպքում ներդրողները Բանկի ֆինանսական հաշվետվությունները կարող են ստանալ նաև Բանկի գլխավոր գրասենյակից և մասնաճյուղերից, ինչպես նաև ծանոթանալ Ինտերնետի Բանկի տնային էջում:

2) Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

Արդշինբանկը ամփոփել և հրապարակել է 2025 թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները:

9 ամսվա արդյունքներով Բանկն իր հիմնական ցուցանիշներով պահպանել է առաջատարի դիրքերը: Բանկի զուտ շահույթը կազմել է 103.2 միլիարդ ՀՀ դրամ:

30.09.25 թվականի վերջի դրությամբ հիմնական ցուցանիշների համեմատական դինամիկան 31.12.24 թվականի համեմատ հետևյալն է.

Ցուցանիշ	Բացարձակ մեծություն 30.09.25թ. դրությամբ (միլիարդ ՀՀ դրամ)	Աճը %-ային հարաբերակցությամբ
Ակտիվներ	2,452.9	4.2%
Վարկային պորտֆել	1,414.2	16.4%
Հաճախորդների միջոցներ	1,552.1	3.6%

3) Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Սույն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում Բանկը ներգրավված չէ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական իրավական վարույթներում, որոնք կարող են էական ազդել Բանկի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա և/կամ կարող են ունենալ կամ վերջերս ունեցել են էական ազդեցություն:

3.10. Էական պայմանագրերը

Բանկում առկա չեն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում Բանկի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Բանկի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի հինգ տոկոսը:

3.11. Փորձագետի, գնահատողի, խորհրդարարի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Բացի ֆինանսական աուդիտի ենթարկված և Ազդագրում ներկայացված Բանկի ֆինանսական հաշվետվություններից, Ազդագրի որևէ մասում այլ անձանց մասնագիտական կարծիք կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն չի օգտագործվել:

3.12. Այլ տեղեկատվություն

Ազդագրի կիրառության ժամկետը 12 (տասներկու) ամիս է՝ ազդագրի հրապարակման պահից: Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Բանկի կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, տարեկան անկախ աուդիտորական եզրակացությունները, ինչպես նաև որպես հաշվետու թողարկող, ներդրումների համար պատրաստվող տարեկան և միջանկյալ հաշվետվություն – վերլուծությունները մշտապես մատչելի են հանրությանն ինչպես էլեկտրոնային, այնպես էլ

թղթային ձևով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են ինտերնետի Բանկի տնային էջում, իսկ թղթային տարբերակով ստանալու համար ներդրողները կարող են դիմել Բանկի գլխամասային գրասենյակ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. «Արդշինբանկ» ԲԲԸ կազմակերպական կառուցվածքը


Վարչություն
Դեպարտամենտ
Ստորաբաժանում

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐԴԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՀԱՏԱՏՎԱԾ Է
«Արդշինբանկ» ՓԲԸ հտորհողի
29.05.2025թ. թիվ 08/25-07 Լ որոշմամբ

հտորհողի նախագահ՝

Կադեն Սաֆարյան



Հավելված 2. Ֆինանսական գործիքների հաշվարկման բանաձևեր

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) =
(Զուր շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի մեծություն) x 100

Ակտիվների շահութաբերություն (ROA) =
(Զուր շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն) x 100

Զուր շահույթի մարժա (NPM) =
Զուր շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Գործառնական եկամուտ

Ակտիվների օգտագործման գործակից (AU) =
Գործառնական եկամուտ / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն

Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) =
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն / Սեփական կապիտալի միջին մեծություն

Զուր տոկոսային մարժա (NIM) =
Զուր տոկոսային եկամուտ / Սեփական կապիտալի միջին մեծություն

Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր = Տոկոսային ծախսեր / պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր

Զուր շահույթ մեկ բաժնեգրման հաշվով (EPS) =
Զուր շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / բաժնեգրման միջին կշռված թիվ

Սպրեդ = (Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն) – (Տոկոսային ծախսեր / Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր)

**Հավելված 3. Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև (իրավաբանական անձ)
«Արդշինբանկ» ԲԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատուների ձեռքբերման
հայտ-հանձնարարականի**

Հայտը բանկ ներկայացնելու ամսաթիվ և ժամ		‘ ’ — — թ.	ժամ	ր
Հայտը ներկայացնող Հաճախորդ		Պետական գրանցում		
_____	_____	‘ ’ — — թ.	_____	Այո/Ոչ
(անվանումը)	(վկայականի և համարը)	(գրնացման ամսաթիվ)	(ՀՎՀՀ)	(ռեգիստրացիայի ն)
Հաճախորդ գրանցման հասցեն		_____		
Հաճախորդ գտնվելու վայրի հասցե		_____		
Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում եմ(ենք) «Արդշինբանկ» ԲԲԸ (այսուհետ նաև՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն եմ(ենք) հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատուները հետևյալ պայմաններով՝				
Ձեռք բերվող պարտատուների քանակը (հատ)	_____		_____	(քանակը տասներորդ)
Ձեռք բերվող պարտատուների ձեռքբերման գինը	_____	☐ ՀՀ ☐ Դրամ ☐ ԱՄՆ ☐ Եվրո	_____	(գինը տասներորդ)
Ձեռք բերվող պարտատուների ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը	_____	☐ ՀՀ ☐ Դրամ ☐ ԱՄՆ ☐ Եվրո	_____	(գումարը տասներորդ)
Անձի բանկային վավերապայմանները				
Բանկային հաշիվներ	ՀՀ դրամ	_____		
	ԱՄՆ դոլար	_____		
	Եվրո	_____		
Բանկի անվանումը	_____			
Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը		«Արդշինբանկ» ԲԲԸ		
Արժեթղթերի հաշվի համարը		_____		
Սույնով, հավաստում եմ(ենք), որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ(ենք) վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատուների հրապարակային առաջարկի Ազդագրին, ընդունում և համաձայն եմ(ենք) դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ(ենք) այդ պարտատուներում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:				

Հաստատում եմ(ենք), որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ: Հաստատում եմք, որ սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու/ակցեպտավորվելու պահից, այն կհանդիսանա Կողմերիս միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր¹:			
Հաճախորդ կամ Հաճախորդի իրավասու անձ՝	_____ <i>(անուն, ազգանուն)</i>	_____ <i>(ստորագրություն)</i>	Ամսաթիվ՝ _____ թ. _____ իվ՝ _____ <i>(օր-ամիս-տարի ժամ-րոպե)</i>
ԼՐԱՑՎՈՒՄ Է ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ			
Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ _____			
Թողարկվող պարտատոմսերի ընդհանուր քանակը (հատ) _____ <i>(քանակը թվերով)</i> _____ <i>(քանակը տառերով)</i> _____			
Դրամական միջոցների փոխանցման/մուտքագրման ամսաթիվը _____ թ.			
Սպասարկող՝ պաշտոն _____	_____ անուն, ազգանուն _____	_____ ստորագրություն _____	Ամսաթիվ՝ _____ թ. _____ իվ՝ _____
ՀՍԲ պետ՝ պաշտոն _____	_____ անուն, ազգանուն _____	_____ ստորագրություն _____	Ամսաթիվ՝ _____ թ. _____ իվ՝ _____
Մասնաճյուղի կառավարիչ (ՀՍՎ պետ) պաշտոն _____	_____ անուն, ազգանուն _____	_____ ստորագրություն _____	Ամսաթիվ՝ _____ թ. _____ իվ՝ _____
Բանկի Մասնաճյուղի (ՀՍՎ) Կ.Տ. _____	_____	Էլ. փոստի հասցե _____	_____

Հիշեցում. Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները համապատասխան հ/հ-երին են փոխանցվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները ստացված են համարվում այդ օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք ստացված են համարվում վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

¹ ՀՀ օրենսդրության համաձայն, անհատ ձեռնարկատերը չի օգտվում իր պահանջները ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացնելու հնարավորությունից

**Հավելված 4 . Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև (ֆիզիկական անձ կամ ԱԶ)
«Արդշինբանկ» ԲԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման
հայտ-հանձնարարականի**

Հայտը բանկ ներկայացնելու ամսաթիվ և ժամ		‘ ’ — — թ.	ժամը
Հայտը ներկայացնող Հաճախորդ		անձը հաստատող փաստաթղթի տվյալներ	
_____	_____	_____	Այո/Ոչ
(անուն, ազգանուն)	(սերիա և համարը)	(երբ և ում կողմից է տրվել)	(ռեզիդենտություն)
Հաճախորդ գրանցման հասցեն _____ Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում եմ(ենք) «Արդշինբանկ» ԲԲԸ (այսուհետ նաև՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն եմ(ենք) հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝			
Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը (հատ)	_____	_____	_____
	(քանակը թվերով)		(քանակը տառերով)
Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման գինը	_____	☐ ՀՀ ☐ ԱՄՆ ☐ Եվրո	_____
	(գինը թվերով)		(գինը տառերով)
Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը	_____	☐ ՀՀ ☐ ԱՄՆ ☐ Եվրո	_____
	(գումարը թվերով)		(գումարը տառերով)
Անձի բանկային վավերապայմանները			
Բանկային հաշիվներ	ՀՀ դրամ	_____	
	ԱՄՆ դոլար	_____	
	Եվրո	_____	
Բանկի անվանումը	_____		
Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը		«Արդշինբանկ» ԲԲԸ	
Արժեթղթերի հաշվի համարը		_____	

Հավաստում եմ(ենք), որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ(ենք) վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ազդագրին, ընդունում և համաձայն եմ(ենք) դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ(ենք) այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Տեղյակ եմ(ենք), որ արժեթղթերում կատարվող ներդրումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով երաշխավորված են ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, ծանուցվել, ստացել և համաձայն եմ(ենք) Ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին ու կարգին:

Հաստատում եմ(ենք), որ Ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ: Տեղեկացված եմ(ենք), որ տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով: Սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու պահից, այն կհանդիսանա Կողմերիս միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:			
Հաճախորդ կամ Հաճախորդի իրավասու անձ՝	_____ <i>(անուն, ազգանուն)</i>	_____ <i>(ստորագրություն)</i>	Ամսաթիվ՝ _____ թ. <i>(օր-ամիս-տարի ժամ-րոպե)</i>
ԼՐԱՑՎՈՒՄ Է ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ			
Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ _____			
Թողարկվող պարտատոմսերի ընդհանուր քանակը (հատ) _____	_____ <i>(քանակը թվերով)</i>	_____ <i>(քանակը տառերով)</i>	
Դրամական միջոցների փոխանցման/մուտքագրման ամսաթիվը _____			_____ թ.
Սպասարկող՝ պաշտոն _____	_____ անուն, ազգանուն	_____ ստորագրություն	Ամսաթիվ՝ _____ թ.
ՀՍԲ պետ՝ պաշտոն _____	_____ անուն, ազգանուն	_____ ստորագրություն	Ամսաթիվ՝ _____ թ.
Մասնաճյուղի կառավարիչ (ՀՍՎ պետ) պաշտոն _____	_____ անուն, ազգանուն	_____ ստորագրություն	Ամսաթիվ՝ _____ թ.
Բանկի Մասնաճյուղի (ՀՍՎ) Կ.Տ. _____	_____	Էլ. փոստի հասցե _____	_____

Հիշեցում. Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները համապատասխան հ/հ-երին են փոխանցվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները ստացված են համարվում այդ օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք ստացված են համարվում վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Հավելված 5 Թողարկման վերջնական պայմաններ

... 20..թ.

Արդշինքանկ ԲԲԸ

Անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատու

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է 20...թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են Արդշինքանկ ԲԲԸ-ում ՀՀ, ք. Երևան, 0015, Գիրգոր Լուսավորչի 13, 13/1 հասցեում:

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)	
1.1	Թողարկողը (թողարկողի անվանումը)	«Արդշինքանկ» ԲԲԸ
1.2	Երաշխավորողը	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավոր
1.3	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)	
1.4	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատուների տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
1.5	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Ամենայն մանրամասնությամբ ներկայացված է Ծրագրային Ազդագրում
1.6	Թողարկման արժույթը	ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար/ Եվրո
1.7	Առաջարկի գինը	Պարտատուների լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝

		$DP = \frac{c}{f} \sum_{i=1}^N \left(\frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{i-1+t}} \right) + \left(\frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+t}} \right)$ $t = \frac{DSN}{DCC}$ DP – Պարտատոմսի գինն է DSN - Գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա մեջ եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում DCC – գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f=4 եռամսյակային վճարումների դեպքում) N - գործարքի կատարման օրվանից հետո արժեկտրոնների մնացած վճարումների քանակն է Y – մինչև մարում եկամտաբերությունն է C – տարեկան արժեկտրոնն է 100 միավոր անվանական արժեքի դիմաց: Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսի լրիվ գինը յուրաքանչյուր օրվա համար հրապարակվում է Թողարկողի կայքում:
1.8	Անվանական արժեքը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
1.9	Քանակը	համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի, այսինքն Թողարկման ծավալի հարաբերությունը անվանական արժեքին
1.10	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից

		պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
1.11	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ Եթե պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվում են մինչև այդ ամսաթիվը, ապա առաջարկի իրականացման ավարտի օր է համարվում այն օրը, երբ վաճառվել է վերջին պարտատոմսը:
1.12	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	
1.13	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	«Արդշինբանկ» ԲԲԸ Խորհրդի 2022թ մարտի 31-ի նիստի թիվ 02/22-07 Լ որոշում «Արդշինբանկ» ԲԲԸ Վարչության 202--թ. ----ի թիվ ----- որոշում
2.	Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ	
2.1	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
2.2	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
2.3	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից

		առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
2.4	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
2.5	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	Չի նախատեսվում
2.6	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	
2.7	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Չի նախատեսվում
3.	Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ	
3.1	Մարման ժամկետը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
3.2	Մարման արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
3.3	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	Չի նախատեսվում
3.4	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	
3.4.1	Ժամկետ(ներ)ը	
3.4.2	Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
3.4.3	Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	
3.4.4	Այլ տեղեկություններ	
3.5	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փուլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	

	«ոչ կիրառելի»)	
3.5.1	Ժամկետ(ներ)ը	
3.5.2	Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
3.5.3	Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
4	Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ	
4.1	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	Արդշինբանկ ԲԲԸ, ՀՀ, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 13 և 13/1
4.2	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
5.	Այլ տեղեկություններ	
5.1	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռ չեն թույլատրված կարգավորվող շուկայում առևտրի
5.2	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրի թույլատրման համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում: Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի “Հայաստանի Ֆոնդային բորսա” ԲԲ ընկերությունը:
5.3	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը վարկանշված չեն
5.4	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր

մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Արտակ Անանյան անուն ազգանուն	Վարչության նախագահ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Դավիթ Սարգսյան անուն ազգանուն	Վարչության նախագահի տեղակալ, Ներդրումային բիզնեսի տնօրեն պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արթուր Գյուլազյան անուն ազգանուն	Վարչության նախագահի տեղակալ, Փրայվիթ բանկինգի տնօրեն պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արմեն Գասպարյան անուն ազգանուն	Վարչության անդամ, Կորպորատիվ բիզնեսի տնօրեն պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Հարություն Իսաիրյան անուն ազգանուն	Վարչության անդամ, Թվայնացման և տաղանդների կառավարման գծով տնօրեն պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արտակ Խաչատրյան անուն ազգանուն	Վարչության անդամ, Մանրածախ բիզնեսի տնօրեն պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Լուսինե Ներսիսյան անուն ազգանուն	Վարչության անդամ, Ռիսկերի կառավարման տնօրեն պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արմինե Խաչատրյան անուն ազգանուն	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Ռուստամ Բադասյան անուն ազգանուն	Վարչության անդամ, Իրավական հարցերի գծով տնօրեն պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Գարեգին Գևորգյան անուն ազգանուն	Վարչության անդամ, Ֆինանսական տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Ստորագրությունները վավերացնում են՝			
Արտակ Անանյան անուն ազգանուն	Վարչության նախագահ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ

Հավելված 6 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ ֆինանսական հաշվետվություններ




«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ

Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ

2025թ. Սեպտեմբերի 30-ին ավարտված ժամանակաշրջանի համար

Բովանդակություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն.....	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն.....	4
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն.....	5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	6
Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....	8



«Արդշինբանկ» ՓԲԸ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին
հաշվետվություն 2025թ. Սեպտեմբերի 30-ին ավարտված ժամանակաշրջանի համար

	Ծնթ.	01/07/2025- 30/09/2025 հազ.դրամ	01/01/2025- 30/09/2025 հազ.դրամ	01/07/2024- 30/09/2024 հազ.դրամ	01/01/2024- 30/09/2024 հազ.դրամ
Տոկոսային եկամուտ	4	49,741,156	142,192,451	36,428,035	102,078,317
Տոկոսային ծախս		(14,563,424)	(41,364,804)	(10,466,221)	(31,832,822)
Զուտ տոկոսային եկամուտ		35,177,732	100,827,647	25,961,814	70,245,495
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	5	9,177,348	24,007,888	7,881,142	22,240,500
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս		(2,510,061)	(7,558,182)	(1,695,573)	(4,552,847)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ		6,667,287	16,449,706	6,185,569	17,687,653
Զուտ օգուտ (վնաս) իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող վարկերից		(247,295)	(1,224,274)	405,278	239,234
Զուտ օգուտ (վնաս) իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից		(215,145)	(50,942)	80,312	337,164
Զուտ եկամուտ փոխարժեքային տարբերություններից	6	14,569,362	51,639,573	18,229,663	41,825,870
Զուտ օգուտ (վնաս) ներդրումային արժեթղթերից		94,218	116,705	42,540	844,780
Այլ գործառնական եկամուտ		1,202,911	3,727,745	641,519	2,545,125
Գործառնական եկամուտ		57,249,070	171,486,161	51,546,694	133,725,321
Արժեզրկումից կորուստներ ֆինանսական գործիքներից	7	(1,407,672)	(3,660,205)	(1,535,808)	(3,483,172)
Արժեզրկումից կորուստներ(օգուտներ) այլ ակտիվներից		-	-	(164,885)	(67,000)
Աշխատակազմի գծով ծախսեր		(9,860,392)	(30,558,752)	(7,434,963)	(21,253,171)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	8	(3,944,075)	(10,668,693)	(2,694,072)	(8,099,186)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		42,036,931	126,598,511	39,716,966	100,822,792
Շահութահարկի գծով ծախս	9	(7,579,233)	(23,381,547)	(7,169,771)	(18,191,702)
Շահույթ ժամանակաշրջանի համար		34,457,698	103,216,964	32,547,195	82,631,090
Այլ համապարփակ եկամուտ՝ առանց շահութահարկի					
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս					
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուսպ					
		672,312	907,997	34,572	721,727
- Իրական արժեքի զուտ փոփոխություն		708,934	918,006	27,464	807,814
- Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքի զուտ փոփոխություն		(36,622)	(10,009)	7,107	(86,087)
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս					
Շենքերի, հողերի վերագնահատում					
Ընդամենը հոդվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս					
Այլ համապարփակ եկամուտ ժամանակաշրջանի համար՝ առանց շահութահարկի					
		672,312	907,997	34,572	721,727
Ընդամենը համապարփակ եկամուտ ժամանակաշրջանի համար		35,130,010	104,124,961	32,581,766	83,352,818

Սարգսյան Դավիթ

Վարչության նախագահի ժ/պ

Խաչատրյան Արմինե

Գլխավոր հաշվապահ

Հաստատված է 14.10.2025թ.





«Արդշինբանկ» ՓԲԸ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2025թ. Սեպտեմբերի 30-ի դրությամբ

		30/09/2025	31/12/2024
	Ծնթ.	հազ. դրամ	հազ. դրամ ստուգված
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10	437,674,599	518,989,227
Իրական արժեքով՝ շահույթ վնասով չափվող ֆինանսական ակտիվներ			
- Բանկի կողմից պահվող		-	195,491
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		-	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	11		
- Բանկի կողմից պահվող		10,781,582	22,337,895
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		53,645,928	39,397,508
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր, փոխառություններ և այլ պահանջներ	12	228,144,782	220,294,637
Հաճախորդներին տրված վարկեր	13	1,414,161,958	1,123,746,602
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	14		
- Բանկի կողմից պահվող		90,797,438	193,974,964
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		184,005,594	147,245,570
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	15	22,790,508	20,860,053
Ընթացիկ հարկային ակտիվ		-	-
Հետաձգված հարկային ակտիվներ	9	-	-
Այլ ակտիվներ	16	10,942,140	12,750,110
Ընդամենը ակտիվներ		2,452,944,530	2,299,792,056
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Փոխառություններ և պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17	452,958,137	391,010,639
Թողարկված պարտքային արժեթղթեր	18	2,204,012	61,623,151
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	19	1,552,099,787	1,466,594,022
Ընթացիկ հարկային պարտավորություններ		19,821,678	22,202,788
Հետաձգված հարկային պարտավորություններ		6,907,263	7,136,097
Այլ պարտավորություններ	20	32,030,545	28,301,484
Ընդամենը պարտավորություններ		2,066,021,422	1,976,868,181
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	21	200,000,000	102,454,400
Էմիսիոն եկամուտ		51	51
Հողի և շենքերի վերազնահատումից աճ		5,649,451	5,649,451
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերազնահատման պահուստ		904,170	(3,828)
Գլխավոր պահուստ		17,215,980	10,580,485
Զբաղյալված շահույթ		163,153,456	204,243,316
Ընդամենը սեփական կապիտալ		386,923,108	322,923,875
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		2,452,944,530	2,299,792,056

Սարգսյան Դավիթ

Վարչության նախագահի ժ/պ

Խաչատրյան Արմինե

Գլխավոր հաշվապահ

Հաստատված է 14.10.2025թ.



	01/01/2025 30/09/2025 հազ. դրամ	01/01/2024 30/09/2024 հազ. դրամ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Ստացված տոկոսներ	139,285,415	103,068,211
Վճարված տոկոսներ	(40,387,731)	(33,539,684)
Ստացված կոմիսիոն և այլ վճարներ	24,007,888	22,240,500
Վճարված կոմիսիոն և այլ վճարներ	(7,558,182)	(4,552,847)
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից	51,482,687	42,603,628
Այլ ստացված եկամուտ	3,611,842	2,868,236
Այլ ընդհանուր վարչական և աշխատակազմի ծախսերի գծով վճարումներ	(36,278,951)	(18,389,984)
Գործառնական ակտիվների (աճ) նվազում		
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր ու փոխառություններ	(7,360,409)	(29,768,524)
Հաճախորդներին տրված վարկեր	(298,533,464)	(192,126,981)
Բռնագանձված գույք	290,014	1,747,238
Այլ ակտիվներ	1,917,991	5,182,667
Գործառնական պարտավորությունների աճ (նվազում)		
Բանկերի կարծաժամկետ ավանդներ և մնացորդներ	(9,994,635)	(52,745,762)
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	65,513,878	38,958,106
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	73,837,732	295,728,019
Այլ պարտավորություններ	(205,619)	(303,686)
Գործառնական գործունեությունից ստացված/ գործառնական գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը	(40,371,543)	180,969,138
Վճարված շահութահարկ	(25,437,761)	(3,396,315)
Գործառնական գործունեությունից ստացված/ գործառնական գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր	(65,809,305)	177,572,823
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Ներդրումային արժեթղթեր	70,317,156	44,960,884
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(3,771,150)	(1,334,362)
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր	66,546,006	43,626,522
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Փոխառությունների ստացում	34,243,270	54,188,914
Փոխառությունների մարում	(30,114,739)	(60,548,827)
Թողարկված պարտքային արժեթղթերի վաճառք	-	2,200,000
Թողարկված պարտքային արժեթղթեր մարում	(58,080,773)	(23,023,120)
Բաժնետիրական կապիտալի համալրում	97,545,600	50,227,200
Վճարում վարձակալության գծով	(1,066,834)	(484,543)
Վճարված շահաբաժիններ	(137,671,329)	(50,354,028)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր	(95,144,804)	(27,794,405)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)	(94,408,103)	193,404,940
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	13,095,990	(19,955,451)
Սպասվող պարտքային վնասի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(2,515)	(3,352)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	518,989,227	433,770,473
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	437,674,599	607,216,610

Սարգսյան Դավիթ
Վարչության նախագահի ժ/պ
Հասցատրյան Արմինե
Գլխավոր հաշվապահ
Հաստատված է 14.10.2025թ.



հազ. դրամ	Բաժնետիրակ. կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Հողի և շենքերի վերագնահատ. աճ	Ներդրումային արժեթղթերի վերագնահատ. պահուստ	Գլխավոր պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	52,227,200	51	5,649,451	(602,812)	7,525,874	124,782,039	189,581,803
Ընդամենը համապարփակ եկամուտ							
Շահույթ ժամանակաշրջանի համար	-	-	-	-	-	82,631,090	82,631,090
Հատկացում գլխավոր պահուստին	-	-	-	-	3,054,611	(3,054,611)	-
Այլ համապարփակ եկամուտ							
Հողվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հեփագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	-	-	-	-	-
Վերագնահատումից արժեքի աճից տեղափոխում չբաշխված շահույթ օտարման պահին	-	-	-	-	-	-	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	807,814	-	-	807,814
Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	(86,087)	-	-	(86,087)
Ընդամենը հողվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հեփագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	-	721,727	-	-	721,727
Հողվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս	-	-	-	-	-	-	-
Հիմնական միջոցների վերագնահատում առանց հետաձգված հարկային ակտիվների /հետաձգված պարտավորությունների	-	-	-	-	-	-	-
Ընդամենը հողվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս	-	-	-	-	-	-	-
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	-	-	721,727	-	-	721,727
Ընդամենը համապարփակ եկամուտ ժամանակաշրջանի համար	-	-	-	721,727	3,054,611	79,576,479	83,352,817
Գործառնություններ Բանկի սեփականատերերի հետ							
Սովորական բաժնետոմսերի թողարկում	50,227,200	-	-	-	-	-	50,227,200
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	-	-	(50,194,028)	(50,194,028)
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	50,227,200	-	-	-	-	(50,194,028)	33,172
Մնացորդը առ 30 սեպտեմբեր 2024թ.	102,454,400	51	5,649,451	118,915	10,580,485	154,164,490	272,967,792

Սարգսյան Դավիթ
Վարչության նախագահի ժ/պ
հաշատրյան Արմինե
Գլխավոր հաշվապահ
Հաստատված է 14.10.2025թ.



հազ. դրամ	Բաժնետիրակ. կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Հողի և շենքերի վերագնահատ. աճ	Ներդրումային արժեթղթերի վերագնահատմ. պահուստ	Գլխավոր պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2025թ.	102,454,400	51	5,649,451	(3,828)	10,580,485	204,243,315	322,923,874
Ընդամենը համապարփակ եկամուտ							
Շահույթ ժամանակաշրջանի համար	-	-	-	-	-	103,216,964	103,216,964
Հատկացում գլխավոր պահուստին	-	-	-	-	6,635,495	(6,635,495)	-
Այլ համապարփակ եկամուտ							
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հեղադասվել վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս							
իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	918,006	-	-	918,006
Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	(10,009)	-	-	(10,009)
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հեղադասվել վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	-	907,997	-	-	907,997
Հոդվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս							
Հիմնական միջոցների վերագնահատում առանց հետաձգված հարկային ակտիվների /հետաձգված պարտավորությունների	-	-	-	-	-	-	-
Փոխացում վերագնահատման պահուստներից դեպի չբաշխված շահույթ	-	-	-	-	-	-	-
Ընդամենը հոդվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս	-	-	-	-	-	-	-
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	-	-	907,997	-	-	907,997
Ընդամենը համապարփակ եկամուտ ժամանակաշրջանի համար	-	-	-	907,997	6,635,495	96,581,469	104,124,961
Գործառնություններ Բանկի սեփականատերերի հետ							
Սովորական բաժնետոմսերի թողարկում	49,545,600	-	-	-	-	-	49,545,600
Արտոնյալ բաժնետոմսերի թողարկում	48,000,000	-	-	-	-	-	48,000,000
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	-	-	(137,671,328)	(137,671,328)
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	97,545,600	-	-	-	-	(137,671,328)	(40,125,728)
Մնացորդը առ 30 սեպտեմբեր 2025թ.	200,000,000	51	5,649,451	904,170	17,215,980	163,153,456	386,923,108

Սարգսյան Դավիթ

Վարչության նախագահի ժ/ա

Խաչատրյան Արմինե

Գլխավոր հաշվապահ

Հաստատված է 14.10.2025թ.



1. Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Արդշինբանկ» ՓԲԸ-ն («Բանկ») հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես փակ բաժնետիրական ընկերություն 2003 թվականին: Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկային գործառնությունների իրականացումը, երաշխիքների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների, ինչպես նաև արժեթղթերով և արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ավանդների հատուցումը երաշխավորող պետական համակարգի անդամ:

2024թ. նոյեմբերի 29-ին «Արդշինբանկ» ՓԲԸ-ն ձեռք է բերել «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի 100% բաժնետոմսերը: Ձեռքբերումից հետո «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն վերանվանվել էր «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի:

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվություններում Բանկը համախմբել է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2025թ. ապրիլի 21-ին «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն միացել է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին:

Բանկն ունի 71 մասնաճյուղ (2024թ. վերջի դրությամբ՝ 71 մասնաճյուղ), որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Բանկի գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Գրիգոր Լուսավորչի փ. 13:

Բանկի աշխատողների միջին քանակը 2025թ. երրորդ եռամսյակի դրությամբ 2,294 (2024թ. երրորդ եռամսյակ՝ 1,888):

Ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Բանկի մայր կազմակերպությունն է «Արինս Գրուպ» ՍՊԸ-ն: Բանկի վերջնական վերահսկող կողմ է հանդիսանում պրն. Կարեն Սաֆարյանը, ով իրավասու է ղեկավարել Բանկի գործառնություններն իր սեփական հայեցողությամբ և իր շահերից ելնելով:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

2022թ. փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև բռնկված ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունն ազդեցություն ունի ոչ միայն երկու երկրների տնտեսական գործունեության, այլև համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների արդյունքում աշխարհի շատ երկրներում հումքային և պարենային ապրանքների գներն աճել են, խախտվել են ռեսուրսների մատակարարման հաստատված կապերը, դիտվում է աճի ազդեցություն գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև տնտեսական հետևանքներ համաշխարհային արդյունաբերության համար:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 34-ի (<ՄՍ 34) համաձայն:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են իրական արժեքով, և վերագնահատված արժեքով հաշվառվող շենքերի:

(գ) Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի և վերջինիս դուստր ընկերության գործառնական արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների մեծամասնության տնտեսական էությունը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- չափանիշների սահմանում որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրություն և հաստատում
- չափանիշների սահմանում որոշելու համար ֆինանսական ակտիվների դուրսգրման սահմանաչափը, որից հետո վերականգնումներ չեն ակնկալվում:

Ենթադրություններ և գնահատումների անորոշություն

Այն ենթադրությունների և գնահատումների անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական

ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական գործիքների արժեզրկում. որոշել ելակետային տվյալներ ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոդելի համար, այդ թվում՝ ապագայամետ տեղեկատվության ներառումը
- շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող վարկերի իրական արժեք
- ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի գնահատում

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նշանակալի դրույթներ

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար: 2025թ. հունվարի 1-ից գործող որոշ նոր ստանդարտներ և փոփոխություններ նշանակալի ազդեցություն չեն ունեցել Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

(ա) Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

Բանկն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2025թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար (եթե այլ բան նշված չէ): Բանկը վաղաժամկետ չի ընդունել որևէ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որը հրապարակվել է, բայց դեռևս ուժի մեջ չի մտել:

ՖՀՄՍ 16 ստանդարտի փոփոխություններ. Վարձակալության գծով պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքներում

ՖՀՄՍ 16 ստանդարտի փոփոխությունները հստակեցնում են այն պահանջները, որոնք վաճառող-վարձակալող օգտագործում է վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքներում առաջացած վարձակալության գծով պարտավորությունների չափման նպատակով, ապահովելով այն փաստը, որ վաճառող-վարձակալող չի ճանաչում օգուտի կամ վնասի որևէ գումար, որը վերաբերում է դրա օգտագործման իրավունքին:

Փոփոխությունները ազդեցություն չեն ունեցել Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 1 ստանդարտի փոփոխությունները հստակեցնում են պարտավորությունները որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու պահանջները: Փոփոխությունները պարզաբանում են՝

- ▶ Ինչ է նշանակում մարումը հետաձգելու իրավունք,
- ▶ Որ հետաձգելու իրավունքը պետք է գոյություն ունենա հաշվետու ժամանակաշրջանի վերջում,
- ▶ Որ դասակարգման վրա չի ազդում կազմակերպության՝ հետաձգելու իրավունքը օգտագործելու հավանականությունը,
- ▶ Որ միայն այն դեպքում, երբ փոխարկելի պարտավորության մեջ ներդրված ածանցյալ գործիքն ինքնին հանդիսանում է բաժնային գործիք, ապա պարտավորության պայմանները չեն ազդի դրա դասակարգման վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ

Ինչպես նաև, կազմակերպությունը պարտավոր է բացահայտել փաստը, երբ վարկային պայմանագրից բխող պարտավորությունը դասակարգվում է որպես ոչ ընթացիկ և կազմակերպության՝ մարումը հետաձգելու իրավունքը պայմանավորված է տասներկու ամիսների ընթացքում ապագա պայմանագրային դրույթների պահպանմամբ:

Փոփոխությունները ազդեցություն չեն ունեցել Բանկի պարտավորությունների դասակարգման վրա:

Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ – փոփոխություններ ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 ստանդարտներում

ՀՀՄՍ 7 դրամական հոսքերի մասին հաշվետվություն և ՀՀՄՍ 7 ֆինանսական գործիքներ. բացահայտումներ ստանդարտների փոփոխությունները պարզաբանում են մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածությունների հատկանիշները և պահանջում են հավելյալ բացահայտումներ նման պայմանավորվածությունների համար: Տվյալ փոփոխության մեջ բացահայտման պահանջների նպատակն է աջակցել ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին հասկանալու մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածությունների ազդեցությունը կազմակերպության պարտավորությունների, դրամական հոսքերի և իրացվելության ռիսկի վրա:

Փոփոխությունները ազդեցություն չեն ունեցել Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

(բ) Դեռևս չգործող, սակայն հրապարակված ստանդարտներ

Ստորև նկարագրված են հրապարակված նոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք Բանկի ֆինանսական հաշվետվությունների թողարկման ժամանակ դեռևս ուժի մեջ չեն եղել: Բանկը պատրաստվում է կիրառելիության դեպքում ընդունել այս նոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, երբ դրանք ուժի մեջ մտնեն:

Փոխանակելիության բացակայություն - ՀՀՄՍ 21 ստանդարտի փոփոխություններ

2023 թվականի օգոստոսին ՀՀՄՍԻ-ն հրապարակեց ՀՀՄՍ 21 Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ ստանդարտի փոփոխությունները՝ հստակեցնելու, թե ինչպես պետք է կազմակերպությունը գնահատի՝ արդյոք արտարժույթը փոխանակելի է, և ինչպես պետք է որոշի սփոթ փոխարժեքը փոխանակելիության բացակայության դեպքում: Փոփոխությունները նաև պահանջում են տեղեկատվության բացահայտում, որը թույլ է տալիս կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին հասկանալ, թե ինչպես է մեկ այլ արժույթով փոխանակման ոչ ենթակա արժույթը ազդում կամ ակնկալվում է, որ կազդի կազմակերպության ֆինանսական արդյունքների, ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2025թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամկետ ընդունումը թույլատրվում է, սակայն անհրաժեշտ են բացահայտումներ: Փոփոխությունների կիրառման դեպքում կազմակերպությունը չի կարող վերաներկայացնել համեմատական տեղեկատվությունը:

Ակնկալվում է, որ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի համախմբած ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ. Փոփոխություններ ՀՀՄՍ 9 և ՀՀՄՍ 7 ստանդարտներում

2024 թվականի մայիսի 30-ին ՀՀՄՍԻ -ն հրապարակել է ՀՀՄՍ 9 և ՀՀՄՍ 7 ստանդարտների փոփոխությունները - Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ (այսուհետ՝ Փոփոխություններ): Փոփոխությունները ներառում են՝

- ▶ Պարզաբանում, որ ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է «մարման ամսաթվին» և ներկայացնում է հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության հնարավորություն (եթե բավարարված են հատուկ պայմաններ) ապաճանաչել մարված ֆինանսական պարտավորությունը՝ կիրառելով էլեկտրոնային վճարային համակարգ մինչև մարման ամսաթիվը;
- ▶ Լրացուցիչ ուղեցույց այն մասին, թե ինչպես պետք է գնահատվեն պայմանագրային դրամական միջոցների հոսքերը բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման և նմանատիպ հատկանիշներով ֆինանսական ակտիվների համար;
- ▶ Պարզաբանումներ այն մասին, թե որոնք են «առանց ռեգրեսի հատկանիշները» և որոնք են պայմանագրորեն կապակցված գործիքների բնութագրերը:

- Պայմանական հատկանիշներով ֆինանսական գործիքների բացահայտման և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով դասակարգված բաժնային գործիքների բացահայտման լրացուցիչ պահանջներ:

Փոփոխություններն ուժի մեջ են 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Վաղ ընդունումը թույլատրվում է միայն ֆինանսական ակտիվների դասակարգման և համապատասխան բացահայտումների համար փոփոխությունները վաղաժամ ընդունելու հնարավորությամբ: Բանկը ներկայումս մտադիր չէ վաղաժամ ընդունել Փոփոխությունները:

Ինչ վերաբերում է էլեկտրոնային վճարային համակարգի միջոցով մարվող ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման փոփոխություններին, Բանկը ներկայումս գնահատում է բոլոր էական էլեկտրոնային վճարային համակարգերը, որոնք օգտագործվում են տարբեր իրավասություններում, որտեղ նա իրականացնում է իր գործունեությունը, որպեսզի գնահատի, թե արդյոք փոփոխությունները կհանգեցնեն էական փոփոխության ընթացիկ գործունեության հետ կապված և արդյոք այն համապատասխանում է հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման պայմաններին մինչև մարման ամսաթիվը նմանատիպ ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման գծով: Ավելին, Բանկը վերանայում է իր բոլոր վճարային համակարգերը (օրինակ՝ չեկեր, կրեդիտ քարտեր, դեբետային քարտեր)՝ ապահովելու, որպեսզի համապատասխան ֆինանսական ակտիվները ապաճանաչվեն, երբ մարված է դրամական միջոցների հոսքերի նկատմամբ իրավունքը, և որպեսզի համապատասխան ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվեն մարման ամսաթվին:

Բացի այդ, Բանկը գնահատում է Փոփոխությունների ազդեցությունը իր ֆինանսական ակտիվների վրա, որոնք ներառում են բնապահպանական, սոցիալական և կառավարման հետ կապված հատկանիշներ և այլ նմանատիպ պայմանական հատկանիշներ, ինչպես նաև առանց ռեզրեսի իրավունքի ֆինանսավորման և պայմանագրորեն կապակցված գործիքների վրա: Նախնական գնահատման հիման վրա, չի ակնկալվում, որ այս ոլորտներում կատարված փոփոխությունները էական ազդեցություն կունենան ֆինանսական հաշվետվությունների վրա, սակայն գնահատումը դեռևս ավարտված չէ:

ՖՀՄՍ 18 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում

2024 թվականի ապրիլին ՀՀՄՍԻՆ -ն հրապարակել է ՖՀՄՍ 18 ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՍ 1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում ստանդարտին: ՖՀՄՍ 18-ը նոր պահանջներ է ներկայացնում շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ներկայացման գծով՝ ներառյալ որոշ հանրագումարներ և միջանկյալ հանրագումարներ: Ավելին, կազմակերպությունները պարտավոր են շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտներն ու ծախսերը դասակարգել ըստ հինգ կատեգորիաների՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, շահութահարկ, ընդհատված գործառնություններ, որոնցից առաջին երեք կատեգորիաները նոր են:

Այն նաև պահանջում է նոր, դեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչների, եկամուտների և ծախսերի միջանկյալ հանրագումարների բացահայտում և ներառում է ֆինանսական տեղեկատվության համախմբման և տարանջատման նոր պահանջներ՝ հիմնված հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ծանոթագրությունների «դերերի» վրա:

Բացի այդ, ՀՀՄՍ 7 Դրամական հոսքերի մասին հաշվետվություն ստանդարտում կատարվել են նեղ շրջանակի փոփոխություններ, որոնք ներառում են գործառնություններից դրամական հոսքերի՝ անուղղակի մեթոդով որոշելու մեկնարկային կետի փոփոխություն՝ «շահույթ կամ վնաս»-ից դեպի «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից ու տոկոսագումարներից դրամական հոսքերի դասակարգման ընտրության հնարավորության վերացում: Ավելին, որոշակի համապատասխան փոփոխություններ են կատարվել մի քանի այլ ստանդարտներում:

ՖՀՄՍ 18 ստանդարտը և այլ ստանդարտների փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամկետ կիրառումը թույլատրվում

է, սակայն անհրաժեշտ է բացահայտում: ՖՀՄՍ 18-ը կիրառվելու է հետընթաց:

Ներկայումս Բանկը աշխատում է բացահայտել այն բոլոր ազդեցությունները, որոնք փոփոխությունները կունենան հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

ՖՀՄՍ 19 Դուստր կազմակերպություններ՝ առանց հրապարակային հաշվեպնդականության: Բացահայտումներ

2024 թվականի մայիսին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 19 ստանդարտը, որը հնարավորություն է տալիս իրավասու կազմակերպություններին ընտրություն կատարել՝ կիրառելու նվազեցված պահանջները բացահայտումների նկատմամբ՝ միաժամանակ կիրառելով հաշվապահական հաշվառման այլ ՖՀՄՍ ստանդարտների ճանաչման, չափման և ներկայացման պահանջները: Իրավասու լինելու համար, կազմակերպությունը պետք է հանդիսանա դուստր կազմակերպություն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ինչպես սահմանված է ՖՀՄՍ 10 ստանդարտում, չի կարող ունենալ հրապարակային հաշվեպնդականություն, և պետք է ունենա մայր կազմակերպություն (վերջնական կամ միջանկյալ), որը պատրաստում է հանրության օգտագործման համար հասանելի համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք համապատասխանում են ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին: ՖՀՄՍ 19 ստանդարտը ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է:

Քանի որ Բանկի պարտքային գործիքները հրապարակայնորեն շրջանառվում են, այն իրավասու չէ կիրառել ՖՀՄՍ 19 ստանդարտը:

(գ) Արտարժույթ

(i) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են դրամի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ կորուստն իրենից ներկայացնում է տարբերությունը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ գործառնական արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների, արժեզրկման և վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված՝ արտարժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Իրական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ բաժնային գործիքների վերահաշվարկից առաջացող տարբերությունների, որոնց համար որոշում է կայացվում իրական արժեքի հետագա փոփոխություններն արտացոլել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Նման ներդրումների համար վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(դ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքներ են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում և

այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ), այլ բանկերում պահվող ավանդները: ՀՀ ԿԲ-ում պահվող պարտադիր պահուստը չի համարվում դրամական միջոցների համարժեք, քանի որ դրանից միջոցների ելքագրումը սահմանափակված է: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Այլ բանկերում պահվող ավանդները բարձր իրացվելի ավանդներ են, որոնց սկզբնական մարման ժամկետը երեք ամսից պակաս է:

(ե) Տոկոսներ

Արդյունավետ տոկոսադրույք

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստները: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով գնահատված ապագա դրամական հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի գծով ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր միջնորդավճարները և գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը: Գործարքի գծով ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված սկզբնական և մարման ենթակա գումարների միջև տարբերության կուտակային ամորտիզացիան և, ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստով:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքն է նախքան ակնկալվող պարտքային կորուստների պահուստի գծով ճշգրտումը:

Տոկոսային եկամտի և ծախսի հաշվարկ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին: Տոկոսային եկամուտը և ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է լրացող դրույքով գործիքների դրամական հոսքերի պարբերական վերագնահատման հետևանքով՝ շուկայական դրույքների փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված դարձած ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը

Ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով պարտքային դիսկոլ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամտի հաշվարկը չի իրականացվում համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, նույնիսկ եթե ակտիվի պարտքային դիսկոլ նվազում է:

Ներկայացում

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտը ներառում է՝

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները,
- այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքների գծով տոկոսները:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսը:

(գ) Միջնորդավճարներ և այլ վճարներ

Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտը և ծախսը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում:

Միջնորդավճարների և այլ վճարների գծով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, ապա համապատասխան փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Բանկի ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Բանկը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Միջնորդավճարների և այլ վճարների գծով այլ ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

i. Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի իրական արժեքով միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես շահույթի կամ վնասի իրական արժեքով միջոցով չափվող:

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով օգուտները և կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների, որոնք ճանաչվում են նույն կերպ ինչ որ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով օգուտը և կորուստները:

- արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ,
- ակնկալվող պարտքային կորուստ և հակադարձումներ և
- արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ և վնասներ:

Երբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

Առևտրային նպատակով չափվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է մշտական հիմունքով ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Այս բաժնային գործիքների գծով օգուտները և կորուստները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ, և շահույթում կամ վնասում արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ շահաբաժինն ակնհայտորեն ներկայացնում է ներդրման ինքնարժեքի մասի վերականգնումը, որի դեպքում ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտները և կորուստները փոխանցվում են չբաշխված շահույթ՝ ներդրման օտարման պահին:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է մշտական հիմունքով նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջները, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվապահական անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, ապահովել տոկոսային որոշակի եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվներով, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Բանկի ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՛ հավաքված դրամական հոսքերի վրա:
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը չի դիտարկվում մեկուսի, այն դիտարկվում է որպես մեկ ընդհանուր վերլուծության մաս առ այն, թե ինչպես են իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Բանկի առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական հոսքերը:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրային նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվներ վաճառելու համար:

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են, Բանկը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դիտարկումը ներառում է այն գնահատումը, արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այս պայմանը:

Գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը և ժամկետները,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,

- պայմանները, որոնք սահմանափակում են Բանկի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածությունների), և
- հատկանիշները, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերաբար վերասահմանումը:

Բանկն ունի հաստատուն տոկոսադրույքով երկարաժամկետ վարկերի պորտֆել, որոնց հետ կապված հնարավորություն ունի վերանայել տոկոսադրույքը ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված հիմնական տոկոսադրույքի փոփոխության դեպքում և հաշվի առնելով ռիսկով պայմանավորված շուկայի այլ գործոնները: Վարկառուն հնարավորություն ունի կամ համաձայնվել վերանայված տոկոսադրույքի հետ, կամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց տուգանքի: Բանկը որոշել է, որ այս վարկերի պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, քանի որ այս հնարավորությունից օգտվելու դեպքում տոկոսադրույքն այնպես է փոփոխվում, որ դառնում է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխառության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի համար հատուցում: Փոխարենը, Բանկը այս վարկերը դիտարկում է որպես ըստ իրենց էության լողացող տոկոսադրույքով վարկեր:

Առանց ռեգրեսի իրավունքի վարկեր

Որոշ դեպքերում Բանկի կողմից տրամադրված վարկերը, որոնք ապահովված են փոխառուի գրավով, սահմանափակում են Բանկի պահանջը հիմքում ընկած գրավից առաջացող դրամական հոսքերով (առանց ռեգրեսի իրավունքի վարկեր): Բանկը կիրառում է դատողություն գնահատելու համար, թե արդյոք առանց ռեգրեսի իրավունքի վարկերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ: Այս դատողությունը կատարելիս Բանկը որպես կանոն դիտարկում է հետևյալ տեղեկատվությունը.

- արդյոք պայմանագիրը սահմանում է վարկի գծով դրամական վճարումների հստակ գումարները և ժամկետները,
- գրավի իրական արժեքը՝ ի համեմատություն գրավով ապահովված ֆինանսական ակտիվի գումարի,
- պայմանագրով նախատեսված վճարումները կատարելու փոխառուի կարողությունը և ցանկությունը, չնայած գրավի արժեքի նվազմանը,
- արդյոք փոխառուն հանդիսանում է ֆիզիկական անձ կամ գործառնական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ կամ հատուկ նշանակության կազմակերպություն,
- ակտիվի գծով վնաս կրելու Բանկի ռիսկը՝ ի համեմատություն ամբողջությամբ վերադարձելի վարկի,
- որքանով է գրավը ներկայացնում փոխառուի բոլոր ակտիվները կամ դրանց նշանակալի մասը,
- արդյոք Բանկն օգուտ կստանա հիմքում ընկած ակտիվների արժեքի աճից:

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն իր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական երաշխավորությունների և փոխառության հանձնառությունների, դասակարգում է ամորտիզացված արժեքով չափվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների դասին:

Վերադասակարգում

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

ii. Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Բանկը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվն ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ կորստի գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորդված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Բանկի կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկը իրականացնում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ պահպանում է, ոչ էլ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, և պահպանում է ակտիվի նկատմամբ հսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այդ ֆինանսական ակտիվում իր շարունակվող ներգրավվածության չափով, որն այն չափն է, որով Բանկը ենթարկվում է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

iii. Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է ռեպո գործարքների գծով վճարվելիք գումարների կազմում՝ «Բանկերի փոխառություններ և այլ մնացորդներ և ածանցյալ ֆինանսական պարտավորություններ» հոդվածում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հետադարձ վաճառքի պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ՝ «Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ և ածանցյալ ֆինանսական ակտիվներ» հոդվածում: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառքի պայմանագրով ձեռք բերված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրային նպատակով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

iv. Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարն այն և միայն այն դեպքում, երբ Բանկը տվյալ պահին ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրազործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ: Բանկը տվյալ պահին ունի հաշվանցում կատարելու իրազործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, եթե այդ իրավունքը կախված չէ ապագա դեպքերից և իրազործելի է թե՛ բնականոն գործունեության և թե՛ Բանկի և բոլոր պայմանագրային կողմերի կողմից պարտազանցման, լուծարման կամ սնանկացման դեպքում:

v. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների վերափոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերափոխվում են, Բանկը գնահատում է, արդյոք վերափոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի վերափոխում»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները: Որպես վերափոխման մաս ստացված վճարները հաշվառվում են հետևյալ կերպ.

- վճարները, որոնք դիտարկվում են նոր ակտիվի իրական արժեքը որոշելիս, և վճարները, որոնք իրենցից ներկայացվում են պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումների հատուցում, ներառվում են ակտիվի սկզբնական չափման մեջ,
- մյուս վճարները ներառվում են շահույթում կամ վնասում՝ որպես ապաճանաչումից օգուտի կամ կորուստի մաս:

Գոյություն ունեցող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես վերափոխում, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ Բանկի կողմից տոկոսադրույքների փոփոխությունը ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով Բանկն իրավունք ունի կատարել նման փոփոխություն:

Բանկն իրականացնում է վերափոխման նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են վերափոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Բանկը գնահատում է վերափոխման նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Բանկը եզրահանգում է, որ վերափոխումը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա՝

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների նշանակալի փոփոխություն,

- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանությանը:

Եթե դրամական հոսքերի վերափոխումը պայմանավորված է փոխառուի ֆինանսական դժվարություններով, ապա որպես կանոն վերափոխման նպատակն է առավելագույն չափով հետ ստանալ/վերականգնել ակտիվը պայմանագրի սկզբնական պայմաններով, այլ ոչ՝ սկզբնավորել նոր ակտիվ նշանակալիորեն տարբեր պայմաններով: Եթե Բանկը մտադիր է այնպես վերափոխել ֆինանսական ակտիվը, որպեսզի ներվեն դրամական հոսքերը, ապա այն նախ դիտարկում է, արդյոք ակտիվի մի մասը պետք է դուրս գրվի նախքան վերափոխումը կատարելը (տես ստորև դուրսգրման քաղաքականություն): Այս մոտեցումն ազդում է քանակական գնահատման արդյունքի վրա և նշանակում է, որ ապաճանաչման չափանիշները միշտ չէ որ բավարարվում են նման դեպքերում: Բանկն իրականացնում է նաև որակական գնահատում գնահատելու համար վերափոխման նշանակալի լինելը:

Եթե ամորտիզացված արժեքով կամ այլ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվի վերափոխումը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, Բանկը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, և արդյունքում առաջացող ճշգրտումը ճանաչում է որպես վերափոխումից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Լողացող տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների համար վերափոխումից օգուտը կամ վնասը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները վերափոխման պահին: Վերափոխման շրջանակում ցանկացած կրած ծախսում կամ վճար կամ ստացված վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է վերափոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Եթե նման վերափոխումն իրականացվում է փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա օգուտը կամ կորուստը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Մյուս դեպքերում այն ներկայացվում է որպես արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ:

Հաստատուն տոկոսադրույքով վարկերի համար, որոնց դեպքում փոխառուն հնարավորություն ունի վաղաժամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց էական տուգանքի, Բանկը հաշվառում է տոկոսադրույքի վերափոխումը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքի մակարդակը՝ կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերափոխվում են վերջինիս պայմանները և երբ վերափոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում վերափոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և վերափոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վճարված հատուցումը ներառում է փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր վերափոխված ֆինանսական պարտավորությունը:

Բանկն իրականացնում է վերափոխման նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Բանկը եզրահանգում է, որ վերափոխումը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից:

Եթե ֆինանսական պարտավորության վերափոխումը չի բավարարում ապաճանաչման պայմանները, պարտավորության ամորտիզացված արժեքը վերահաշվարկվում է, զեղչելով փոփոխված դրամական հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և արդյունքում առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Լողացող դրույքով ֆինանսական պարտավորությունների համար վերափոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները վերափոխման պահին: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է վերափոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացորդային ժամանակահատվածում: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտում և ամորտիզացվում է վերափոխված ֆինանսական պարտավորության մնացորդային ժամանակահատվածում գործիքի արդյունավետ տոկոսադրույքի վերահաշվարկի միջոցով:

vi. Արժեզրկում

Բանկը ճանաչում է կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հետևյալ ֆինանսական գործիքների համար.

- պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվներ,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր և
- փոխատվության հանձնառություններ:

Բաժնային գործիքներում ներդրումների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում:

Բանկը կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով՝

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք համարվում են ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ասմաթվի դրությամբ և
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ասմաթվից հետո 12 ամսում հնարավոր դեֆոլտի դեպքերից: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 1-ին փուլի ֆինանսական գործիքներ:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստները, որոնք առաջանում են բոլոր հնարավոր դեֆոլտի դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք սակայն պարտքային առումով արժեզրկված չեն, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ: 2-րդ փուլ դասվում են այն ֆինանսական գործիքները, որոնց գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, որոնք սակայն պարտքային առումով արժեզրկված չեն: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ և որոնք պարտքային առումով արժեզրկված են, դիտարկվում են որպես 3-րդ փուլի ֆինանսական գործիքներ:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են և չափվում է հետևյալ կերպ՝

- ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետվող ամսաթվի դրությամբ. որպես բոլոր դրամական պակասուրդների ներկա արժեք (դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան Բանկին հասանելիք դրամական հոսքերի և Բանկի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է),
- ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված են հաշվետվող ամսաթվի դրությամբ. որպես համախառն հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերություն,
- չօգտագործված փոխադրության հանձնառություններ. որպես հետևյալ նշվածների միջև տարբերության ներկա արժեք՝ պայմանագրային դրամական հոսքերի, որոնք ենթակա են վճարման Բանկին, եթե օգտագործում է փոխառությունը ստանալու իրավունքը, և այն դրամական հոսքերի, որոնք Բանկն ակնկալում է ստանալ,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր. որպես այն ակնկալվող վճարումների ներկա արժեք, որոնք փոխհատուցում են տիրապետողին կրած պարտքային կորուստը՝ հանած այն գումարները, որոնք Բանկն ակնկալում է հետ ստանալ:

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերաբանակցվում են կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, գնահատվում է ֆինանսական ակտիվն ապաճանաչելու անհրաժեշտությունը, և ակնկալվող պարտքային կորուստները չափվում են հետևյալ կերպ՝

- եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում:
- եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից առաջացող վերջնական դրամական հոսքեր՝ վերջինիս ապաճանաչման ժամանակ: Այս գումարը ներառվում է գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում, որը զեղչվում է ապաճանաչման ակնկալվող ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվը՝ կիրառելով գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի իրական արժեքով միջոցով չափվող վարկային ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից (որոնք դիտարկում ենք որպես 3-րդ փուլի ֆինանսական ակտիվներ): Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, եթե տեղի են ունցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է դեֆոլտը կամ ժամկետանց դառնալը,
- Բանկի կողմից վարկի կամ փոխառության պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսննկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, ֆիզիկական անձանց տրվող վարկերի դեպքում պարտքային առումով արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը:

Պետական պարտատոմսերում ներդրման պարտքային առումով արժեզրկված լինելը գնահատելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները՝

- Վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությունում:
- Վարկունակության վարկանիշային գործակալությունների գնահատումները:
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:
- Պարտքի պայմանների վերանայման հավանականությունը, որի արդյունքում տիրապետողները կարող են վնաս կրել պարտքը կամավոր կամ պարտադիր կերպով ներելու պատճառով:
- Գործող միջազգային աջակցման մեխանիզմները, որոնք թույլ են տալիս որպես «վերջին հնարավոր վարկատու» տվյալ երկրին տրամադրել անհրաժեշտ աջակցություն, ինչպես նաև կառավարությունների և գործակալությունների հրապարակային հայտարարություններում նշված այդ մեխանիզմները կիրառելու մտադրությունը: Սա ներառում է նշված մեխանիզմների աշխատանքի արդյունավետության և, անկախ քաղաքական մտադրություններից, պահանջվող չափանիշները բավարարելու կարողության առկայության գնահատումը:

Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ակտիվներն են, մասնավորապես՝

- Բանկի կողմից թողարկված նոր ֆինանսական ակտիվներ պարտքային առումով արժեզրկված ակտիվի վերանայման շրջանակում (պարտքային առումով արժեզրկված ակտիվի փոխարինում պարտքային ռիսկի նմանատիպ մակարդակով մեկ այլ ակտիվով),
- ակտիվ, որն առաջացել է պայմանագրի պայմանների նշանակալի փոփոխության արդյունքում ֆինանսական ակտիվի ապաճանաչման հետևանքով՝ պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների վերանայման շրջանակում,
- ձեռք բերված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ,
- վարկերի տրամադրում «դեֆոլտ» ներքին վարկանիշով վարկառուներին:

Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով չի ձևավորվում արժեզրկման գծով պահուստ սկզբնական ճանաչման պահին: Փոխարենը, ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գումարը ներառվում է արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում:

Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկի համար օգտագործվում են ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվի առնելով է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների նախնական գնահատված գումարը: Ակտիվի պայմանագրային դրամական միջոցների գնահատված արժեքը նվազեցվում է իր գործողության ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գումարով: Արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է պարտքային ռիսկի մասով:

Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների (սովորաբար սկզբնավորված ակտիվների) սկզբնական ճանաչման ժամանակ վարկերի իրական արժեքը որոշվում է դրամական ներհոսքերի և/կամ գրավի պարտադրված վաճառքի արդյունքում ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա:

Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների հետագա գնահատումը միշտ իրականացվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գումարով: Այս ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների փոփոխություններն ակտիվի սկզբնական ճանաչումից ի վեր: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներում դրական փոփոխություններն արտացոլող գումարը ճանաչվում է որպես արժեզրկումից օգուտ, նույնիսկ եթե այդ փոփոխությունների գումարը գերազանցում է նախկինում շահույթում կամ վնասում որպես արժեզրկումից կորուստ ճանաչված գումարը:

Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսները հաշվեգրվում են ամորտիզացված արժեքի գծով՝ ակտիվի սկզբնական ճանաչման պահին որոշված պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով կորստի պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ՝

- *ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*՝ որպես նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից,
- *փոխադրության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորության պայմանագրեր*՝ սովորաբար որպես պահուստ,
- *երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Բանկը չի կարող նույնականացնել փոխադրության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներից առանձին*՝ Բանկը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկն օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և
- *այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքներ*՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում է ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում:

Դուրսգրումներ

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի ամբողջությամբ վերցրած ֆինանսական ակտիվը կամ դրա մի մասը վերականգնելու ողջամիտ ակնկալիք: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Բանկը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ/գրավ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական հոսքեր դուրսգրման ենթակա գումարները մարելու համար: Այս գնահատումն իրականացվում է առանձին յուրաքանչյուր ակտիվի համար: Գրավով չապահովված վարկի համար կիրառվում է ժամկետանց օրերի չափանիշը՝ հաշվի առնելով անցյալ ժամանակաշրջանների վերադարձման գործակիցը:

Նախկինում դուրսգրված գումարների փոխհատուցումը ներառվում է «ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստներ» հոդվածում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել հարկադիր միջոցներ/պարտքերի գանձման միջոցներ՝ վճարման ենթակա գումարների հատուցման Բանկի ընթացակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:

Ֆինանսական ակտիվի անբաժանելի մաս չհանդիսացող ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բանկը գնահատում է, արդյոք ֆինանսական երաշխավորության պայմանագիրը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, որը հաշվառվում է որպես այդ գործիքի բաղադրիչ, թե առանձին հաշվառվող պայմանագիր: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները՝

- արդյոք երաշխավորությունը նախատեսված է պարտքային գործիքի պայմանագրի պայմաններով,
- արդյոք երաշխավորության պայմանագիրը կնքվել է պարտքային գործիքի պայմանագրի հետ նույն ժամանակ և հաշվի առնելով վերջինիս պայմանները և
- արդյոք երաշխավորությունը տրամադրվել է փոխառուի մայր կազմակերպության կամ փոխառուի Բանկի անդամ հանդիսացող որևէ այլ կազմակերպության կողմից:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման հետ կապված վճարվելիք ցանկացած հավելաճար հաշվառվում է որպես այդ ակտիվի ձեռքբերման գործարքի գծով ծախսում: Պարտքային գործիքի իրական արժեքը և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Բանկը հաշվի է առնում երաշխավորությամբ ապահովվող պաշտպանության ազդեցությունը:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը չի հանդիսանում պարտքային գործիքի անբաժանելի տարր, ապա այն ճանաչում է ակտիվ, որն իրենից ներկայացնում է երաշխավորության հավելավճարի գծով կանխավճար, և պարտքային կորուստների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք: Կանխավճարի տեսքով վճարված հավելավճարի գծով ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը, որի համար ստացվել է երաշխավորությունը, ոչ պարտքային առումով արժեզրկված է և ոչ էլ ենթարկվել է պարտքային ռիսկի նշանակալի աճի երաշխավորությունը ստանալու պահին: Այս ակտիվները ճանաչվում են «այլ ակտիվներ» հոդվածի կազմում: Բանկը փոխհատուցման իրավունքի գծով օգուտները կամ կորուստները ներկայացնում է շահույթում կամ վնասում՝ «ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստներ» հոդվածում:

(ը) Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ» հոդվածը ներառում է հաճախորդներին տրված՝ ամորտիզացված արժեքով չափվող վարկերը և փոխատվությունները, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի

մեթոդը, ինչպես նաև հաճախորդներին տրված՝ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող վարկերը:

(թ) Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «ներդրումային արժեթղթեր» հոդվածը ներառում է.

- այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթերը,
- ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթերը, և
- բաժնային ներդրումային արժեթղթերը, որոնք նախորոշված են որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող:

(ժ) Ավանդներ, թողարկված պարտքային արժեթղթեր, բանկերի այլ փոխառություններ և այլ մնացորդներ

Ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը, բանկերի այլ փոխառություններ և այլ մնացորդները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը պարտավորությունները նախորոշում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

(հ) Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Բանկից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դեբիտորի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: Փոխատվության հանձնառություններն իրենցից ներկայացնում են նախապես սահմանված պայմաններով վարկ տրամադրելու կայուն հանձնառություններ:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում դրանք չափվում են հետևյալ նշվածներից ավելի բարձրով՝ ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորստի պահուստից և սկզբնապես ճանաչված գումարից՝ հանած, երբ տեղին է, ՖՀՄՍ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը:

Բանկը չունի շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող փոխատվության հանձնառություններ:

Այլ փոխատվության հանձնառությունների համար Բանկը ճանաչում է կորստի ՖՀՄՍ 9-ի համաձայն:

Ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով առաջացող պարտավորությունները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

(լ) Հիմնական միջոցներ

(i) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ շենքերի, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքով, ինչպես ներկայացված է ստորև:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետներ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Վերագնահատում

Հողատարածքը և շենքերը ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատվող հողատարածքի և շենքերի իրական արժեքի փոփոխություններից: Եթե հողատարածքի կամ շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Այնուամենայնիվ, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած արժեքի նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որով նախապես նվազումը ճանաչվել էր շահույթում կամ վնասում: Եթե հողատարածքի կամ շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած արժեքի աճը, այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(iii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով առանձին ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռքբերման ամսաթվից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողատարածքների գծով մաշվածություն չի հաշվարկվում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

- շենքեր	15 - 50 տարի
- սարքավորումներ	1 - 7 տարի
- տնտեսական գույք	5 տարի
- փոխադրամիջոցներ	5 տարի
- վարձակալված գույքի բարելավում	1 - 5 տարի

(իւ) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման և ներդրման ծախսումները կապիտալացվում են համապատասխան ոչ նյութական արժեքի ինքնարժեքին:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները կազմում են 5-ից 10 տարի:

(ծ) Բռնագանձված գույք

Բռնագանձված գույքը հաշվառվում է սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

(կ) Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքներից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքներ չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինի:

(h) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են՝ զեղչելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչման միջև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը հատուկ ռիսկերը:

(ծ) Բաժնետիրական կապիտալ

(i) Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

(ii) Էմիսիոն եկամուտ

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող գումարը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

(iii) Արտոնյալ բաժնետոմսեր

Ոչ մարելի արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ, քանի որ դրանց գծով վճարվում են շահաբաժիններ Բանկի հայեցողությամբ, դրանց համար չի գործում դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելու պարտականությունը և այդ շահաբաժինները չեն պահանջում մարում փոփոխական քանակությամբ Բանկի բաժնային գործիքներով: Արտոնյալ բաժնետոմսերի գծով Բանկի հայեցողությամբ վճարվող շահաբաժինները ճանաչվում են որպես սեփական կապիտալի բաշխումներ Բանկի բաժնետերերի հաստատմամբ:

(iv) Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

(դ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հողվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ գործարքներին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել տարվա հարկվող եկամտի գծով՝ կիրառելով այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները: Վճարվելիք ընթացիկ հարկը ներառում է նաև շահաբաժինների գծով առաջացող հարկային պարտավորությունները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ բիզնեսի միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարբերությունների մարումից առաջացող գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումներով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Բանկի գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այս նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող է դրանք օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Բանկը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

(6) Վարձակալություն

2025թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 1,500,000 հատ սովորական բաժնետոմսերից (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել է՝ 1,004,544) և 500,000 հատ փոփոխական շահութաբաժնով փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերից (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 20,000): Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 100,000 դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ին՝ 100,000 դրամ):

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Պահուստների բնույթը և նպատակը

Հոդի և շենքերի վերագնահատումից աճ

Հոդի և շենքերի վերագնահատումից աճը ներառում է հոդի և շենքերի վերագնահատված կուտակային դրական արժեքը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստը ներառում է իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

(գ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով: 2025թ. ընթացքում Բանկը վճարել է 137,671,329 հազար դրամ շահաբաժին, որն ուղղվել է Բանկի բաժնետիրական կապիտալի համալրմանը:

2024թ. Բանկը հայտարարել է 50,227,200 հազար դրամ գումարով շահաբաժիններ սովորական բաժնետոմսերի սեփականատերերի համար, 33,172 հազար դրամ գումարով ճշգրտում է կատարվել արտոնյալ բաժնետոմսերի շահաբաժինների հաշվարկի համար) և վճարել է 50,227,200 հազար դրամ գումարով շահաբաժիններ սովորական բաժնետոմսերի սեփականատերերին և 126,828 հազար դրամ՝ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին:

22 Ռիսկերի կառավարում

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարումն էական գործոն է բանկային ոլորտի համար և Բանկի գործառնությունների կարևոր տարր է: Շուկայական ռիսկը, վարկային ռիսկը, իրացվելիության ռիսկը և գործառնական ռիսկերն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Բանկը:

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Բանկի էությունը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար՝ սահմանված համապատասխան սահմանաչափերում Բանկի գործունեությունն ապահովելու նպատակով: Ռիսկերի կառավարման բաժնի ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և համապատասխանության ապահովման համար, նա նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Ռիսկերի կառավարման բաժնի ղեկավարը ուղղակիորեն հաշվետու է Վարչության նախագահին և անուղղակիորեն՝ Բանկի էությունը:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը՝ թե պորտֆելի և թե առանձին գործառնությունների մակարդակով, կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) կողմից: Որոշումների կայացմանը գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության չափից և տեսակից:

Ռիսկի թե արտաքին, թե ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Բանկի կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների նպատակահարմարության աստիճանի որոշմանը: Բացի վարկային և շուկայական ստանդարտ վերլուծությունների իրականացումից, Ռիսկերի կառավարման վարչությունը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական բաժինների հետ՝ նրանց գործունեության համապատասխան ոլորտների հետ կապված մասնագիտական դատողություններ ստանալու համար:

Բանկի ներքին փաստաթղթերի համաձայն՝ Ռիսկերի կառավարման վարչությունը և ներքին աուդիտի ծառայությունը հաճախ պատրաստում են Բանկի էական ռիսկերին անդրադարձող հաշվետվություններ: Հաշվետվությունները ներառում են դիտարկումներ Բանկի ընթացակարգերի և մեթոդաբանության արդյունավետության գնահատման վերաբերյալ և առաջարկություններ դրանց բարելավման ուղղությամբ:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների ու արատարժույթի փոխարժեքների տատանումների ազդեցությանը: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում Բանկի ռիսկերի կռավարման տնօրինությունը: Շուկայական ռիսկի կառավարման գծով ռիսկի ախորժակը սահմանվում է Բանկի Խորհրդի կողմից, իսկ ներքին սահմանաչափերը՝ Բանկի վարչության: Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների գծով, տոկոսադրույքների փոփոխության ժամկետներ, արտարժույթի դիրքեր և կորուստների սահմանաչափեր, որոնք կանոնավոր կերպով վերահսկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Վարչության կողմից:

գ) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Բանկը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծություն

Տոկոսադրույքային ռիսկը կառավարվում է տոկոսադրույքների ճեղքվածքի և տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն դիրքերի հսկողության միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների ճեղքվածքների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
30 Սեպտեմբերի 2025թ. ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	396,748,245	-	-	-	-	40,926,354	437,674,599
Իրական արժեքով՝ շահույթ վնասով չափվող ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	-	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	1,541,436	58,874	2,568,278	39,800,793	19,804,971	653,159	64,427,510
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	94,838,020	-	-	-	-	133,306,762	228,144,782
Հաճախորդներին տրված վարկեր	461,860,514	219,759,475	94,479,598	351,834,843	286,227,527	-	1,414,161,958
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	82,586,389	96,850	46,817,473	94,805,794	50,496,526	-	274,803,032
Ընդամենը	1,037,574,603	219,915,198	143,865,349	486,441,430	356,529,025	174,886,276	2,419,211,881
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ և այլ փոխառություններ	361,169,614	4,820,490	9,174,168	41,734,798	36,059,067	-	452,958,137
Թողարկված պարտքային արժեթղթեր	3,483	2,200,528	-	-	-	-	2,204,012
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	1,184,547,240	111,289,190	134,798,156	64,549,644	56,915,557	-	1,552,099,787
	1,545,720,337	118,310,208	143,972,323	106,284,442	92,974,625	-	2,007,261,935
	(508,145,733)	101,604,990	(106,975)	380,156,988	263,554,400	174,886,276	411,949,946

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2024թ. ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	472,838,521	-	-	-	-	46,150,706	518,989,227
Իրական արժեքով՝ շահույթ վնասով չափվող ֆինանսական ակտիվներ	195,491	-	-	-	-	-	195,491
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	8,654,030	8,051,864	4,529,373	26,937,901	12,909,130	653,105	61,735,402
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	72,661,703	-	1,192,711	9,567,414	-	136,872,809	220,294,637
Հաճախորդներին տրված վարկեր	610,581,854	34,156,232	46,213,055	191,969,766	240,825,694	-	1,123,746,602
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	173,281,697	40,141,739	4,018,216	76,777,162	47,001,720	-	341,220,534
Ընդամենը	1,338,213,296	82,349,836	55,953,355	305,252,243	300,736,544	183,676,620	2,266,181,893
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ և այլ փոխառություններ	295,930,421	7,025,908	9,536,410	39,713,508	38,804,392	-	391,010,639
Թողարկված պարտքային արժեթղթեր	57,321,207	2,092,247	-	2,209,696	-	-	61,623,151
Հաճախորդներին ընթացիկ հաշիվներ և ավանդներ	1,171,948,271	109,557,860	145,743,395	38,810,546	533,950	-	1,466,594,022
	1,525,199,899	118,676,016	155,279,805	80,733,750	39,338,342	-	1,919,227,812
	(186,986,604)	(36,326,181)	(99,326,450)	224,518,493	261,398,202	183,676,620	346,954,081

Տոկոսադրույքի զգայունության վերլուծություն

Տոկոսադրույքի վերանայման ժամկետների վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը իրականացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության մոնիտորինգով: Ստորև ներկայացված է տոկոսադրույքների փոփոխության (վերագնորոշման ռիսկ) նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 100 բազիսային կետով (բկ) եկամտաբերության բոլոր կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2025թ. սեպտեմբերի 30-ի և 2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

	30/09/2025	31/12/2024
	հազ. դրամ	հազ. դրամ
100 բկ զուգահեռ նվազում	3,194,869	1,706,597
100 բկ զուգահեռ աճ	(3,194,869)	(1,706,597)

Ստորև ներկայացվում է զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունության վերլուծությունը՝ պայմանավորված տոկոսադրույքների փոփոխության հետևանքով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությամբ, որն իրականացվել է 2025թ. սեպտեմբերի 30-ի և 2024թ դեկտեմբերի 31-ի առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի և 100 բազիսային կետով (բկ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	30/09/2025	31/12/2024
	հազ. դրամ	հազ. դրամ
	Սեփական կապիտալ	Սեփական կապիտալ
100 բկ զուգահեռ նվազում	2,051,096	1,433,278
100 բկ զուգահեռ աճ	(2,051,096)	(1,433,278)

(դ) Արտարժույթի ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ: Արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում: Թեև Բանկը հեջավորում է իր ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին, այս գործունեությունը չի որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն ֆՀՄՍ պահանջների համաձայն: Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2025թ.սեպտեմբերի 30-ի դրությամբ և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

30/09/2025

	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	69,453,546	89,758,160	52,842,651	212,054,357
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	3,373,241	342,949	-	3,716,190
Բանկերին և ֆինասական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	97,215,056	36,802,901	2,976,042	136,993,999
Հաճախորդներին տրված վարկեր	548,066,261	158,971,181	-	707,037,441
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	17,195,988	64,998,117	-	82,194,105
Ընդամենը ակտիվներ	735,304,092	350,873,307	55,818,693	1,141,996,092
Արտարժույթի սվոպ	854,767	-	13,424,916	14,279,683
Ընդամենը արտահաշվեկշռային ակտիվներ	854,767	-	13,424,916	14,279,683
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի փոխառություններ և այլ մնացորդներ	29,045,184	33,805,092	4,879,340	67,729,616
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	-	-	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	674,203,488	304,742,781	62,750,745	1,041,697,014
Ընդամենը պարտավորություններ	703,248,672	338,547,873	67,630,085	1,109,426,630
Արտահաշվեկշռային միավորներ				
Արտարժույթի սվոպ	5,832,790	7,639,460	850,500	14,322,749
Ընդամենը արտահաշվեկշռային պարտավորություններ	5,832,790	7,639,460	850,500	14,322,749
Զուտ դիրքը	27,077,398	4,685,974	763,024	32,526,396

	31/12/2024			
	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	Ընդամենը
	<u>հազ. դրամ</u>	<u>հազ. դրամ</u>	<u>հազ. դրամ</u>	<u>հազ. դրամ</u>
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	78,078,084	111,894,382	116,525,743	306,498,208
Իրական արժեքով՝ շահույթ վնասով չափվող ֆինանսական ակտիվներ	-	-	-	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	5,157,630	2,351,190	-	7,508,820
Բանկերին և ֆինասական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ	102,262,731	33,112,323	3,194	135,378,248
Հաճախորդներին տրված վարկեր	383,775,866	101,774,677	-	485,550,543
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	105,253,632	75,593,815	-	180,847,447
Այլ ակտիվներ	2,948,401	58,585	66,267	3,073,253
Ընդամենը ակտիվներ	677,476,344	324,784,972	116,595,204	1,118,856,520
Արտարժույթի սվոպ	16,504,602	-	6,327,883	22,832,485
Ընդամենը արտահաշվեկշռային ակտիվներ	16,504,602	-	6,327,883	22,832,485
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի փոխառություններ և այլ մնացորդներ	23,140,179	51,428,354	6,586,976	81,155,508
Թողարկված պարտքային արժեթղթեր	53,266,914	-	-	53,266,914
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	620,369,304	266,762,896	82,615,327	969,747,527
Այլ պարտավորություններ	2,763,321	5,402,148	427,703	8,593,171
Ընդամենը պարտավորություններ	699,539,717	323,593,398	89,630,006	1,112,763,120
Արտահաշվեկշռային միավորներ				
Արտարժույթի սվոպ	8,092,455	2,069,450	32,555,250	42,717,155
Ընդամենը արտահաշվեկշռային պարտավորություններ	8,092,455	2,069,450	32,555,250	42,717,155
Զուտ դիրքը	<u>(13,651,225)</u>	<u>(877,876)</u>	<u>737,831</u>	<u>(13,791,270)</u>

2025թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

	30/09/2025	31/12/2024
	<u>հազ. դրամ</u>	<u>հազ. դրամ</u>
ԱՄՆ դոլարի փոխարժեքի 20% արժևորում ՀՀ դրամի նկատմամբ	5,415,480	(2,730,245)
Եվրոյի փոխարժեքի 20% արժևորում ՀՀ դրամի նկատմամբ	937,195	(175,575)

(ե) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները: Բանկը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը (թե ճանաչված ֆինանսական ակտիվների և թե չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար) կառավարելու համար, ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և Վարկային կոմիտեի ստեղծումը՝ վարկային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Վարկային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Վարկային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական անձանց և անհատների) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական վերահսկման ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց վարկային դիմումները պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող մենեջերների կողմից և փոխանցվում են Վարկային բաժնի, որը պատասխանատու է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության կառուցվածքային վերլուծության և ֆինանսական արդյունքների վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման բաժնի կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Վարկային կոմիտեն ուսումնասիրում է վարկի դիմումը՝ Կորպորատիվ վարկերի բաժնի և Ռիսկերի կառավարման բաժնի կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան Վարկային կոմիտեի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Բանկի իրավաբանական, հաշվապահական հաշվառման և հարկային բաժինների կողմից՝ կախված ռիսկերի առանձնահատկություններից:

Բանկը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վարկառուի կողմից տրամադրված կամ Խմբի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Անհատների վարկային դիմումներն ուսումնասիրվում են Անհատական վարկավորման ծառայությունների բաժնի կողմից՝ կիրառելով Ռիսկերի կառավարման բաժնի հետ համատեղ մշակված գնահատման մոդելները և դիմումների տվյալների ստուգման ընթացակարգերը:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, ողջ վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման բաժնի կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Վարկային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա: Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների գծով վարկային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	30/09/2025	31/12/2024
	հազ. դրամ	հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, բացառությամբ կանխիկի	416,294,114	492,894,969
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ	228,144,781	220,294,637
Հաճախորդներին տրված վարկեր	1,414,161,958	1,123,746,602
Ներդրումային արժեթղթեր	338,577,386	402,498,322
Այլ ֆինանսական ակտիվներ	2,089,447	4,741,160
Վարկային ռիսկին ենթարկվածության ընդհանուր առավելագույն չափը	2,399,267,686	2,244,175,690

Որպես կանոն գրավ չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեթղթերում կատարած ներդրումների, բանկերին տրված վարկերի և փոխառությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառության գործունեության մաս:

Հաճախորդներին տրված վարկերի գրավի և այդ վարկերի գծով վարկային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 13-ում:

Զնանաչված պայմանագրային պարտավորվածությունների գծով վարկային ռիսկի առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է ծանոթագրություն 23-ում:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ ֆինանսական գործիքները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, թե ոչ:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ քլիրինգային պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի՝ որպես փոխառության տրամադրման գլխավոր պայմանագրերը: Նմանատիպ ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները՝ վաճառքի և հետգնման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը և արժեթղթերի՝ որպես փոխառության ստացման և տրամադրման պայմանագրերը: Այնպիսի ֆինանսական գործիքներ, ինչպիսիք են վարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկը ստանում և տրամադրում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետգնման, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերի գծով: Նման գրավի համար գործում են տվյալ ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի գործողության ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության դեպքում:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտավորությունների չկատարման անվճարունակ դառնալու կամ սնանկացման դեպքում: Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2025թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		
				Ֆին. գործիքներ (դրամական միջոցներից տարբեր գրավ)	Որպես գրավ ստացված դրամական միջոցներ	Զուտ գումար
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	92,464,496	-	92,464,496	(92,464,496)	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	92,464,496	-	92,464,496	(92,464,496)	-	-
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(295,929,851)	-	(295,929,851)	295,929,851	-	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(295,929,851)	-	(295,929,851)	295,929,851	-	-

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/պարտավորությունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		
				Ֆին. գործիքներ (դրամական միջոցներից տարբեր գրավ)	Որպես գրավ ստացված դրամական միջոցներ	Զուտ գումար
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	78,725,580	-	78,725,580	(78,725,580)	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	78,725,580	-	78,725,580	(78,725,580)	-	-
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(230,338,583)	-	(230,338,583)	230,338,583	-	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(230,338,583)	-	(230,338,583)	230,338,583	-	-

Վերը նշված աղյուսակներում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական հոսքերի հետ կապված պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն հաստատվում է Խորհրդի կողմից, իսկ կառավարումը՝ Վարչության կողմից:

Բանկը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է, թողարկվող պարտքային արժեթղթերը, այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը, հիմնական կորպորատիվ հաճախորդների և անհատների ավանդները, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու արդյունավետ բավարարելու նպատակով:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների այս հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքերի ֆինանսավորման ծրագրերի ապահովում,
- բարձր իրացվելիությամբ ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման ծրագրերի անընդհատության ապահովում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Բանկի կարճաժամկետ ընթացիկ իրացվելիության կառավարումն իրականացնում է Գանձապետարանի կողմից: Գանձապետարանը կառուցվածկային ստորաբաժանումներից ստանալով է տեղեկատվություն ակնկալվող դրամական հոսքերի վերաբերյալ օրական կտրվածով ձևավորում է իրացվելի ակտիվների բավարար պաշար՝ Բանկի պարտավորությունները ժամանակին իրականացնելու և ակտիվների անհրաժեշտ աճը ֆինանսավորելու համար:

Ռիսկերի կառավարման տնօրինությունն իրականացնում է երկարաժամկետ հատվածում իրացվելիության կառավարումը, որի նկատմամբ իրականացում է ռիսկի գծով ախորժակի և ներքին սահմանաչափերի պահպանման նկատմամբ հսկողություն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2025թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունը՝ ըստ մարման ակնկալվող ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և միջև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	37,674,599	-	-	-	-	-	-	37,674,599
Իրական արժեքով՝ շահույթ վնասով չափվող ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	-	-	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	453990	,195,446	,627,151	9,300,793	9,804,973	536159	-	4,627,512
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ	28,990,327	,154,454	-	-	-	-	-	28,144,782
Հաճախորդներին տրված վարկեր	33745,048	5,663,682	76,900,308	95,036,008	48,793,834	-	22,023,079	,414,161,958
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	2,329,343	0,288,045	6,014,323	4,805,794	0,596,527	-	-	72,803,032
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	22790,508	-	22790,508
Ընթացիկ հարկային ակտիվներ	-	-	-	-	-	-	-	-
Հետաձգված հարկային ակտիվներ	-	-	-	-	-	-	-	-
Այլ ակտիվներ	,270,656	382144	,157,571	587739	-	,849,030	-	0,942,140
Ընդամենը ակտիվներ	735,324,964	98,537,771	227,599,353	726,101,334	615,095,334	28,262,698	22,023,079	2,452,944,532
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Բանկերի ավանդներ և մնացորդներ և այլ փոխառություններ	48,299,929	,688,225	5,037,917	6,442,998	6,359,067	-	-	52,958,137
Թողարկված պարտքային արժեթղթեր	,488	-	,200,528	-	-	-	-	,204,012
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	92,126,124	92,421,115	48,087,345	4,649,644	3,5963	6,375,594	-	,552,099,787
Ընթացիկ հարկային պարտավորություններ	-	-	9,821,678	-	-	-	-	9,821,678
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	-	-	,907,263	-	,907,263
Այլ պարտավորություններ	,953,168	,728,405	9,657,103	,200,630	-	913238	-	2,330,545
Ընդամենը պարտավորություններ	1,246,402,705	300,767,746	302,804,572	115,773,272	36,599,031	63,674,095	-	2,066,021,421
Զուտ դիրքը	(511,077,741)	(202,229,975)	(75,205,220)	610,328,061	578,496,303	(35,411,397)	22,023,079	386,923,111

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունը՝ ըստ մարման ակնկալվող ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և միջև. 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18,989,227	-	-	-	-	-	-	18,989,227
Իրական արժեքով՝ շահույթ վնասով չափվող ֆինանսական ակտիվներ	951491	-	-	-	-	-	-	951491
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	,081,113	,682,918	2,681,237	6,837,901	2,909,130	536105	-	1,735,403
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	19,098,690	,236	,192,711	0) (	-	-	-	20,294,637
Հաճախորդներին տրված վարկեր	3,201,463	3,303,426	42,806,348	80,023,310	24,469,237	-	3,202,817	,123,746,602
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	44,561,724	8,719,972	44,59,955	6,777,162	7,401,720	-	-	43,220,534
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	0,260,053	-	0,260,053
Ընթացիկ հարկային ակտիվներ	-	-	-	-	-	-	-	-
Հետաձգված հարկային ակտիվներ	-	-	-	-	-	-	-	-
Այլ ակտիվներ	,681,745	3,2465	,202,061	,802	-	,081,035	-	2,750,110
Ընդամենը ակտիվներ	914,959,452	68,202,017	201,942,312	583,741,177	481,380,087	26,554,194	23,012,817	2,299,792,056
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Բանկերի ավանդներ և մնացորդներ և այլ փոխառություններ	98,692,467	717608	6,675,452	0,466,720	8,304,392	-	-	93,010,639
Թողարկված պարտքային արժեթղթեր	3,5266,914	,064,293	,092,248	,209,695	-	-	-	1,623,150
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	,066,998,314	0,949,957	58,301,255	8,310,546	3,3950	-	-	,466,594,022
Ընթացիկ հարկային պարտավորություններ	-	-	2,202,789	-	-	-	-	2,202,789
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	-	-	,126,097	-	,126,097
Այլ պարտավորություններ	,084,268	,823,937	,493,501	,866,263	667556	169960	-	8,201,484
Ընդամենը պարտավորություններ	1,423,021,964	112,659,796	305,585,245	88,043,223	40,104,898	7,453,057	-	1,976,868,182
Զուտ դիրքը	(508,062,512)	(44,457,779)	(103,642,933)	495,697,953	441,275,189	19,101,137	23,012,817	322,923,874

23 Վարկային պարտավորվածություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Այս պարտավորվածություններն իրենցից ներկայացնում են հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների գծով պարտավորվածություններ:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ՝ հաճախորդների պարտավորվածությունների կատարումն երրորդ անձանց հանդեպ երաշխավորելու նպատակով: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի: Վարկային պարտավորվածությունների, ֆինանսական երաշխավորությունների և ակրեդիտիվների հետ կապված Բանկը կիրառում է վարկային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք գործում են հաճախորդներին վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են վարկային պարտավորվածությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են: Աղյուսակում երաշխավորությունների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարները ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կճանաչվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն պայմանագրային պարտականությունները:

	30/09/2025	30/09/2025
	հազ. դրամ	հազ. դրամ
Պայմանագրային գումար		
Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ	80,552,079	79,810,734
Վարկային քարտերի գծով պարտավորվածություններ	10,893,140	10,731,535
Չօգտագործված օվերդրաֆտներ	16,043,149	13,054,833
Երաշխավորություններ և ակրեդիտիվներ	83,199,556	67,305,829
	190,687,923	170,902,931

Վերը ներկայացված ընդհանուր պայմանագրային պարտավորվածությունները պարտադիր չէ որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս պարտավորվածությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել գործել մինչև վերջիններիս կատարման ժամկետը: Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածությունների մեծամասնությունն իրենից չի ներկայացնում միանշանակ պարտավորվածություն խմբի կողմից:

24 Պայմանական դեպքեր

(ա) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

(բ) Հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

25 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Բանկի մայր կազմակերպությունն է Արինս Գրուպ ՍՊԸ-ն: Բանկի վերջնական վերահսկող անձն է հանդիսանում պրն. Կարեն Սաֆարյանը, ով նաև զբաղեցնում է Բանկի Խորհրդի նախագահի պաշտոնը:

(բ) Գործարքներ Տնօրենների Խորհրդի և Վարչության անդամների հետ

Ստորև ներկայացված է աշխատակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը 2025թ. սեպտեմբերի 30-ին և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանների համար:

	01/07/2025 - 30/09/2025 հազ.դրամ	01/01/2025 - 30/09/2025 հազ.դրամ	01/07/2024 - 30/09/2024 հազ.դրամ	01/01/2024 - 30/09/2024 հազ.դրամ
Աշխատավարձ և պարգևավճարներ	5,408,824	14,645,217	3,991,512	10,039,386

Այս գումարները ներառում են Խորհրդի և Վարչության անդամների դրամային և ոչ դրամային հատուցումները:

Ստորև ներկայացված են Խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները 2025թ.սեպտեմբերի 30-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	30/09/2025 հազ.դրամ	31/12/2024 հազ.դրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն		
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	-	-
Պարտքային կորստի պահուստ	-	-
Հաճախորդներին տրված վարկեր	326,555	259,605
Պարտքային կորստի պահուստ	(2,135)	(1,637)
Այլ ակտիվներ	192	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	2,382,276	7,864,377
Այլ պարտավորություններ	12	-
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված հոդվածներ		
Վարկային պարտավորվածություններ	325,234	329,986
Երաշխավորություններ և ակրեդիտիվներ	-	-

Ստորև ներկայացված են Խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների գծով շահույթի կամ վնասի կազմում արտացոլված գումարները 2025թ. սեպտեմբերի 30-ին և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանների համար:

	01/01/2025 - 30/09/2025 հազ.դրամ	01/01/2024 - 30/09/2024 հազ.դրամ
Շահույթ կամ վնաս		
Տոկոսային եկամուտ	21,836	36,513
Տոկոսային ծախս	(141,457)	(152,637)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	8,547	31,332
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	(7,851)	(5,620)

(զ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Այլ կապակցված կողմերը ներառում են Բանկի հետ ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունները, Խորհրդի և Վարչության անդամների ընտանիքների անդամներին և Խորհրդի և Վարչության անդամների կողմից վերահսկվող կազմակերպությունները: Ստորև ներկայացված են 2025թ.սեպտեմբերի 30-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2025թ. ընթացքում շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Բաժնետերեր	Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	Այլ
		Հազ.ՀՀ դրամ	Հազ.ՀՀ դրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն			
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	-	43,768,027	-
Պարտքային կորստի պահուստ	-	(3,578)	-
Հաճախորդներին տրված վարկեր	4,139,424	-	41,132
Պարտքային կորստի պահուստ	(920)	-	(498)
Այլ ակտիվներ	-	524,111	10
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	1,979,914	245,193	257,716
Այլ պարտավորություններ	-	484,360	-
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված հոդվածներ			
Վարկային պարտավորվածություններ	1,904,000	210,000	79,013
Երաշխավորություններ և ակրեդիտիվներ	-	93,432	-
Շահույթ (վնաս)			
Տոկոսային եկամուտ	193,522	2,376,633	3,038
Տոկոսային ծախս	-	(44,419)	(12,147)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	11,560	79,529	2,144
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	-	(7)	(2,312)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	-	(575,400)	-

Ստորև ներկայացված են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2024թ. ընթացքում շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Բաժնետերեր	Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	Այլ
		Հազ.ՀՀ դրամ	
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն			
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	-	42,860,064	-
Պարտքային կորստի պահուստ	-	(4,265)	-
Հաճախորդներին տրված վարկեր	1,482,895	-	83,417
Պարտքային կորստի պահուստ	(613)	-	(307)
Այլ ակտիվներ	-	537,673	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	159	9,692,345	282,066
Այլ պարտավորություններ	-	15,000	8,168
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված հոդվածներ			
Վարկային պարտավորվածություններ	-	210,000	80,933
Երաշխավորություններ և ակրեդիտիվներ	-	3,304	-
Շահույթ (վնաս)			
Տոկոսային եկամուտ	221,197	2,776,821	17,615
Տոկոսային ծախս	-	(310)	(17,888)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	56,139	301,154	2,370
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	-	(639,966)	-
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	-	48,000	-

26 Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բանկը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար ակտիվ շուկայում գնանշվող գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալներ դիտարկելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել է հետևյալը՝ գնանշվող գները նմանատիպ գործիքների համար ակտիվ շուկայում, գնանշվող գները նույն կամ նմանատիպ գործիքների համար ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտարկելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնք գնահատվում են դիտարկելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալներից ելնելով, իսկ ոչ դիտարկելի ելակետային տվյալներն էական ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշվող գների հիման վրա, որոնց գծով պահաջվում են նշանակալի ոչ դիտարկելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու նպատակով:

2025թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները, բացառությամբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող չգնանշված բաժնային արժեթղթերի, մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին: 2025թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ 653,157 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 653,105 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող չգնանշված բաժնային արժեթղթերի իրական արժեքը հնարավոր չէ որոշել:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2025թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր	-	-	-	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր	-	63,774,353	-	63,774,353
Հաճախորդներին տրված վարկեր՝ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող	-	-	10,826,798	10,826,798
Կորպորատիվ բաժնետոմսեր	-	-	653,157	653,157
Աձանցյալ ակտիվներ	-	12,301	-	12,301
Աձանցյալ պարտավորություններ	-	55,367	-	55,367

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր	-	195,491	-	195,491
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր	-	61,082,298	-	61,082,298
Հաճախորդներին տրված վարկեր՝ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող	-	-	10,719,120	10,719,120
Կորպորատիվ բաժնետոմսեր	-	-	653,105	653,105
Ածանցյալ ակտիվներ	-	644,875	-	644,875
Ածանցյալ պարտավորություններ	-	130,181	-	130,181

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և դրամական միջոցների զեղչված հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայի դիտարկելի գներ, և այլ գնահատման մոդելներ: Գնահատման մեթոդներում կիրառվող ենթադրությունները և ելակետային տվյալները ներառում են ռիսկից զերծ և ելակետային տոկոսադրույքները, վարկային սպրեդերը և այլ ճշգրտումները, որոնք օգտագործվում են զեղչման դրույքները, պարտատոմսերի և բաժնետոմսերի գները, արտարժույթի փոխարժեքները, բաժնետոմսերի և բաժնետոմսերի ինդեքսների գները գնահատելու համար: Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է ֆինանսական գործիքի գինը հաշվետու ամսաթվի դրությամբ, որը կորոշվեր շուկայի մասնակիցների կողմից «անկախ կողմերի միջև գործարքում»: